



ՀԱԳԻՆ

9. 2007 1967 ՆԵՍԵՐԵՐ  
Digitized by A.R.A.R.©

ԹԻԻ 12

پاكين  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد اورتين كارنيك فزانجيان

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
 ԱՍՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐԹԻՍՏԻ

- ՎԱՐՅԻ ՆԱԲԱԳԻՐ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ՆԱԲԱԳԻՐ  
 Գ. ՍՆԱԳԵԱՆ
- ՆԱԲԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆԳԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԿ  
 Տ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Վ. ՕՇԱԿԱՆ  
 Ժ. ԱԹԱՐԵԱՆ
- ՀՈՄԱԳԻՐ ԱՆԳԱՄՆԵՐԵՆ  
 † ԵՂ. ՊՕՅԱՅԵԱՆ

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

- ՇԱՐԼ ՊՈՏԼԷՐ  
 Գ. ԹՈՐՈՍԵԱՆ  
 Ա. ՍԵՒԱՆ  
 Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ԱՐՇԻ  
 Վ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ  
 Շ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- .....
- «ԲԱԳԻՆ»Ի Զ. ՏԱՐՈՒԱՆ  
 ԲՈՎՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆԸ

հմբադրութեան հասցէ  
**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban  
 Հեռագրի թիւ 290898



# Բարձր

## ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ձ. ՅԱՐԻ, ԹԻՒ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1967

ԳԼՅՈՒԹ

### Շ Ա Ր Լ Պ Ո Տ Լ Է Ր

Քաղաքակիրթ աշխարհը, ինչպես նաև էինք ստիժով ժը, այս աստի տոնից Լուսինի Փիրանդելլոյի 100-ամեակը և Շարլ Պոլիերի մահուան 100-ամեակը, որոնց արձագանդելու խոստումը տուած էր ձեռագրի և կոտարից էր խոստումը: Առաջինի մասին Բ. Փափազյանի պատրաստած յոգուածաշարը ղեկ էր լարուածակուի, իսկ ներկայ թեւով էր սկսինք հրատարակել նույնպէս Յարիուանի ստորագրող մեր հաստատրիմ աշխատակցին գրութիւնը, Պոլիերի մասին:

Վիպական կեանք ժը սենք Փիրանդելլո, ու վեպի ժը ղեկ էր կարգացուեցաւ անոր նախընտրած գրութիւնը: Վիպական կեանք ժը սենք Պոլիեր, և վստահարար վեպի ժը նեոազրբարականութեամբ պիտի կարգացուի նաեւ այս վերջինին կեանքը վերականգնացնող յոգուածը:

Ի մենդենէ գծարիտ, տխուար, հայածուած, մերժուած, դատապարտուած մարդը կգաւ Պոլիեր, իրականորէն ղեկ էր բանաստեղծը, որ սակայն էր անկրկնելի տաղանդով անխառն բանաստեղծութեան մէկ պարտա խորհրդանշանը ղարմաւ ու էր մեայ ամբողջ աշխարհի գրականութեան մէջ:

Արտերու և տխուարներու, թշուաններու և թշուարութիւններու, մարդոց տանգրտան գծարիտ ու գծարիտի ներքին մթութիւններուն, ու սակայն կարգ տեսակ ցեխի ու ապականութիւններու մէջ կգաւ, Պոլիեր կարգ տեսակ կերպարանք տեսաւ, ղարմ էր հոգիին մէջ և անոնց տխուար, գոբլ, լուսեղ, համեղ, երբեմն բարեմայրոց էութիւններին կարգեց էր անթառամ ղեռագրիկները: Մարդկային հոգին պիտի և էր ղեռագրական էր համարութիւններու ղիւտը ղեռագրիտ բանաստեղծն է Պոլիեր և էրմէ կար հրապարակ կկաւ գրական բոլոր ղարդիներուն հոգիուած կայրը:

Հոսանքուն կտգ, բոլոր բանաստեղծները տաղաշարներ են ղարգապէս: Բանաստեղծութեան աստուածը Պոլիերն է, կ'ընէր միւս անիմեայ բանաստեղծը, Բիմպո, և, կ'ենթադրէր, որ ղուտածը բարբառի անիմը է:

Իր կեանքը վերագրածող գրութիւնն ստալ՝ ուսուստիկ քանի ժը բանաստեղծութիւններ էրմէ, որոնք ներշնչուած են էր սիրածներին ու նուիրուած անոնց՝ ժանն Տիւվալին, Մասամ Մապաթիէին, Մարի Տոպրեմին և միւս սիրածներուն՝ ղեռիին ու բանաստեղծութեան...

## Ա Շ Ն Ա Ն Ե Ր Գ

Պիտի սուգուինք մենք շուտով ազատուղջին մէջ ցրտին.  
Երբքաս բարո՛վ, մեր շատ կարն ամառներուն լո՛յսը լայն.  
Ան արդէն կը լսեմ, սալայատակին վրայ բակին,  
Անկումը հաստ փայտերուն, քնդիւններով չարածայն:

Զմեռն ամբողջ գայ մտնել պիտի հագույս մէջ դարձեալ,  
– Յատում ու հե՛ռ, վա՛խ եւ դա՛ղ, աշխատանք կարծր ու բռնի,  
Եւ գերբ արեւն՝ հիւսիսի դժոխքին մէջ բանտարկեալ,  
Սիրտըս ըլլայ պիտի լոկ կարմրած կոյտ մը սառի:

Մարտալով կը լսեմ ամէն մէկ կռնդ որ կ'իյնայ,  
Կախազանի մը ցցման արձագանգին նման խալ...  
Միտքս աշտարակ մըն է կարծես՝ որ կը փլչի ինքն իր վրայ,  
Ծանրը խոյնի մ'իջուցած հարուածներուն տակ անդալ:

Ինձ կը քուի, օրօրուա՛ծ այս միակերպ ցնցումէն,  
Որ կը գամեն ըշտապով, հեռուն, դագաղ մը: Որո՛ւ  
Համար: – Ամա՛ռ էր երէկ. հիմա աշո՛ւն է արդէն.  
Խոյրդաւոր այս ազմուկն ա՛լ ազդ մը չէ՞ մեկնելու:

### Բ.

Կը սիրեմ լոյսը կանաչ երկարանկիւն աչքերուդ,  
Ով հազցրուելիս. բայց ամէն բան այսօր դառն է ինձի,  
Եւ ոչինչ կայ, ոչ էօս սերդ, ոչ գարդախուցն, ոչ ակուքն,  
Որ ծովուն վրայ փալիւղ արեւին պէս ինձ ժպտի:

Եւ սակայն սիրտ գործվատ, սիրէ զիս, մայր դուն եղիք,  
Ապերախտի մը անգամ, նայնիսկ չարի մը համար,  
Դուն տարփուսի եւ կամ քոյր, անուշաքիւն վաղասփիւտ,  
Բեր ինձ աշնան մը շքեղ կամ արեւի մ'ազեկար:

Ջանք կարճատեւ: Կ'ըսպասէ մեզ գերեզմանը անյագ,  
Թոյլ տուր ինձի վայելիլ, դրած գլուխ ծունկիդ,  
Անտեսելով բացաշունչ տօթը ամրան սպիտակ,  
Աշնավերջի ճառագայթն այս դեղնամուշ, ամժպիտ:

ՇԱՐԼ ՊՈՏԼԵՐ

Թարգմ. Վ. ԹԵՔԷՆԱՆ

## CHANT D'AUTOMNE

Bientôt nous plongerons dans les froides ténèbres;  
Adieu, vive clarté de nos étés trop courts!  
J'entends déjà tomber avec des chocs funèbres  
Le bois retentissant sur le pavé des cours.

Tout l'hiver va rentrer dans mon être: colère,  
Haine, frissons, horreur, labeur dur et forcé,  
Et, comme le soleil dans son enfer polaire,  
Mon cœur ne sera plus qu'un bloc rouge et glacé.

J'écoute en frémissant chaque bûche qui tombe;  
L'échafaud qu'on bâtit n'a pas d'écho plus sourd.  
Mon esprit est pareil à la tour qui succombe  
Sous les coups du bélier infatigable et lourd.

Il me semble, bercé par ce choc monotone,  
Qu'on cloue en grande hâte un cercueil quelque part.  
Pour qui ? — C'était hier l'été; voici l'automne!  
Ce bruit mystérieux sonne comme un départ.

### II

J'aime de vos longs yeux la lumière verdâtre,  
Douce beauté, mais tout aujourd'hui m'est amer,  
Et rien, ni votre amour, ni le boudoir, ni l'âtre,  
Ne me vaut le soleil rayonnant sur la mer.

Et pourtant aimez-moi, tendre cœur! soyez mère,  
Même pour un ingrat, même pour un méchant;  
Amante ou sœur, soyez la douceur éphémère  
D'un glorieux automne ou d'une soleil couchant.

Courte tâche ! La tombe attend ; elle est avide !  
Ah ! laissez-moi, mon front posé sur vos genoux,  
Goûter, en regrettant l'été blanc et torride,  
De l'arrière-saison le rayon jaune et doux !

Charles Baudelaire

## HYMNE

## ՕՐՀՆԵՐԳ

A la très chère, à la très belle  
Qui remplit mon cœur de clarté,  
A l'ange, à l'idole immortelle,  
Salut en l'immortalité.

Elle se répand dans ma vie  
Comme un air imprégné de sel,  
Et dans mon âme inassouvie  
Verse le goût de l'éternel.

Sachet toujours frais qui parfume  
L'atmosphère d'un cher réduit,  
Encensoir oublié qui fume  
En secret à travers la nuit,

Comment, amour incorruptible,  
T'exprimer avec vérité ?  
Grain de musc qui gris, invisible,  
Au fond de mon éternité !

A la très bonne, à la très belle  
Qui fait ma joie et ma santé,  
A l'ange, à l'idole immortelle,  
Salut en l'immortalité !

Սիրելիագոյն, գեղեցկագոյն  
Կրնոջ, որ փայլ սրտիդ կու տայ,  
Հըրեշտակի'ն, կուտքի'ն անմահ'  
Անմահութեան մէջը ողջոյն:

Կը տարածուի կեանքիս մէջ ան,  
Ազով գեղուն օդի մը պէս.  
Եւ իմ անյաց հոգիէս ներս  
Կը հեղու համն յաւերժութեան:

Բուրապարկի'կ միշտ քարմ' խնկող  
Օդը խուցի մը սիրելի,  
Բուրվա'ն լճուած ի գիշերի'  
Որ կը մխայ գազա ու անշող:

Ինչպէս կրնամ քեզ, սէ՛ր անեղծ,  
Նըկարագրել ճշմարտապէս,  
Քեզ, մուշկի հա'տ, գոր ճեռք մ'անոնս  
Յաւերժօրէն մէջս քաղեց...

Ազնուագոյն, գեղեցկագոյն  
Կրնոջ, որ ինձ կեանք, խինդ կու տայ,  
Հըրեշտակի'ն, կուտքի'ն անմահ'  
Անմահութեան մէջը ողջոյն:

Charles Baudelaire

Թարգմ. Վ. ԹԻՔԷՆԱՆ

## L'ALBATROS

Souvent, pour s'amuser, les hommes d'équipage  
 Prennent des albatros, vastes oiseaux des mers,  
 Qui suivent, indolents compagnons de voyage,  
 Le navire glissant sur les gouffres amers.

A peine les ont-ils déposés sur les planches,  
 Que ces rois de l'azur, maladroits et honteux,  
 Laissent piteusement leurs grandes ailes blanches  
 Comme des avirons trainer à côté d'eux.

Ce voyageur ailé, comme il est gauche et veule !  
 Lui, naguère si beau, qu'il est comique et laid !  
 L'un agace son bec avec un brûle-gueule,  
 L'autre mime, en boitant, l'infirme qui volait !

Le Poète est semblable au prince des nuées  
 Qui hante la tempête et se rit de l'archer ;  
 Exilé sur le sol au milieu des huées,  
 Ses ailes de géant l'empêchent de marcher.

Charles Beaudelaire

## Ա Ա Պ Թ Ի Ս

Նուաստիները յաճախ իրը ըզբօսանք կը բռնեն  
 Ալպարրոսներ՝ ծովերու քաղն'նն այդ մեծ ու շքեղ,  
 Որանք կու գան, ուղեկից ընկերներու պէս մէկտեղ  
 Շոգեմաւին հետ սահող գառն անդնդոց վրայէն :

Սակայն հազիւ բէ դբուած տախտակներուն վրայ գետնի,  
 Այդ կապոյտի արհմերձ՝ անօթահար, աննարակ՝  
 Խեղճուկ մը վար կը ձըգեն քեւերնին լայն ու ներմակ,  
 Զերբ ֆովերնէն քաշֆշուող, չուրը ալուզ գոյգ մը քի :

Այս ուղեւորն օղաչու ի՛նչ ճախլիկ է ու անկամ .  
 Ան քիչ մ'առաջ ա՛յնքան վեհ, ինչպէ՛ս սըգեղ է հիմա .  
 Մին ծխամորն մը իրրեյ կըտուցին մէջ կը զամայ,  
 Կը կազայ միւսն հեքին պէս, որ կը քըռէ՛ր յարածամ :

Կը նմանի բանաստեղծն այս իշխանին ամպերու՝  
 Որ փռքորկին մէջ կ'երթայ եւ է նետին անտարբեր .  
 Ախորական հողին վրայ՝ ուրիշ կ'իլլեն հայեուչներ,  
 Անոր քեւերն հսկայի գիճք կ'արգիլեն ֆակու :

ՇԱՐԼ ԳՈՏԼԷՐ

Թարգմ. Վ. ԹէֆէնԱՆ

## Գ Ի Ն Ի Ն

Գինույ հոգին իրիկուն մը շիշերուն մէջ կ'երգէր.  
 «Ո՛վ մարդ, տես՝ դէպի քեզ, անծառանգդ իմ սիրելի,  
 Ապակիէ իմ բանտէս, մեղրամտովէս կարմրագեղ,  
 Երգ մը լոյսով աւլըցուն եղբայրօրէն կը ծըլի:

Գիտե՛մ, ո՛րքան պէտք է միշտ արեւ կիզիչ ու քրտնանք,  
 Բլուրին վրբայ բացավառ, ո՛րքան պէտք է աշխատանք,  
 Որպէսզի կեանքն ծըմի, եւ ես հոգի մ'ունենամ.  
 Բայց ապերախտ չեմ երբեք ու չեմ ըրնաւ չարակամ:

Որովհետեւ իմ հրնուանքն անհուն է, իյնալուս  
 Մարդու մը խոնջ վաստակէն՝ կոկորդին մէջ՝ խորասոյգ.  
 Անոր շերտ կուրծքն ինձ համար գերեզման մ'է քաղցրագին,  
 Ուր կայ հաճոյք առաւել, քան մէջը մուշ նըկուզին:

Կը լսե՞ս հունչը հիմա յանկերգներուն կիրակի,  
 Ու գեղգեղանքը Յոյսին իմ ծոցին մէջ բարախում,  
 Երբ արմուկներդ սեղանին, ու համզրիհուած, զիս պիտի  
 Փառաբանես եւ ըլլաւ միշտ գոհութեամբ աւլըցուն...

Պիտի վառեմ աչքերն ալ ըզմայլաւար կենակցիդ.  
 Եւ քու գաւկիդ պիտի տամ նորագ ոյծ, գո՛յն իր գէմքին,  
 Ու պիտ' ըլլամ այս կեանքի մարգիկին եւ, դեռ վըտիտ,  
 Իւզը՝ որով կենեղուտ եմ մըկաններն ըմբիշին:

Քու մէջըդ ես պիտ' իյնամ՝ վընիտ ամբոս բուսային,  
 Յաւերժակամ սերմցանէն ինկած հունտին հանգումակ,  
 Որպէսզի մեր տարփանքէն քերթըւածները ծըմին,  
 Զերդ ծաղիկներ հագուագիւտ դէպի Աստուած ծըլարձակ:

ՇԱՐԼ ՊՈՏԼԵՐ

Բարբժ. Ա. Ն.



## L'ÂME DU VIN

Un soir, l'âme du vin chantait dans les bouteilles:  
«Homme, vers toi je pousse, ô cher déshérité,  
Sous ma prison de verre et mes cires vermeilles,  
Un chant plein de lumière et de fraternité !

Je sais combien il faut, sur la colline en flamme,  
De peine, de sueur et de soleil cuisant  
Pour engendrer ma vie et pour me donner l'âme;  
Mais je ne serai point ingrat ni malfaisant,

Car j'éprouve une joie immense quand je tombe  
Dans le gosier d'un homme usé par ses travaux,  
Et sa chaude poitrine est une douce tombe,  
Où je me plais bien mieux que dans mes froids caveaux.

Entends-tu retentir les refrains des dimanches  
Et l'espoir qui gazouille en mon sein palpitant?  
Les coudes sur la table et retroussant tes manches,  
Tu me glorifieras et tu seras content;

J'allumerai les yeux de ta femme ravie;  
A ton fils je rendrai sa force et ses couleurs  
Et serai pour ce frère athlète de la vie  
L'huile qui raffermirait les muscles des lutteurs.

En toi je tomberai, végétale amboisie,  
Grain précieux jeté par l'éternel Semeur,  
Pour que de notre amour naisse la poésie  
Qui jaillira vers Dieu comme une rare fleur !

Charles Baudelaire

# ԱԻԵՏԱՐԱՆԻ ՄՆԱՑՈՐԳԱՅԸ

## ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ

Փ.

Սուսամ չկրցաւ քնանալ այդ գիշեր: Հազիւ աչքը փակած, երկու շրթներ կը մօտենային... կը հասնէին իրեն... սակայն չէր յաջողեր զանոնք ունենալ իր բերնին մէջ: Հեշտանքին հասնելու ձըգտումով՝ կը դալարուէր... կը տանջուէր... ընդոտ կ'արթննար:

Մութ էր տակաւին, երբ անկողնէն ելաւ: Ուղղաւ ու լուս էր ամէն կողմ: Հովիտները դուրս եկած չէին:

Թոնրատուն մտաւ: Գրակ պատրաստեց: Հիւանդին տարաւ:

Տղան արթուն էր, սակայն քրտինքին պատճառով՝ կը վախնար ծածկոցներու տակէն դուրս գալու:

- Բարի լոյս աղայի՛ս, - ձայնեց, - կրակ բերի, որ տաքնաս: Ապուրին մէջ երչիկ պիտի տաքցնեմ, որ ուտես... մինչ այդ հազուամաներդ հանէ ու այս կրակին վրայ չորցուր, լա՛ւ է:

Տաք ապուրն ու կծու երչիկը՝ ուժեւ եւ ետանդ տուին տղուն: Վրանէն դուրս ելաւ: Արդէն լոյս էր, օրը կը սկսէր իր աշխատանքովը:

Ալին կանչեց.

- Աղայիս ձին պատրմ'ստ է, եթէ

այսօր անպայման քաղաք իջնել կը փափաքի, - ձայնեց սպասաւորը, - միայն թէ Հանի աղան հրամայեց, որ ես քեզի ընկերանամ, մինչեւ որ ապահով տեղ հասնիս:

Օսման չուղեց աւելին իմանալ: Մեծ վրանէն ներս մտաւ:

Ծերունին՝ անկողնին մէջ նստած՝ կաթ կը խմէր: Երիտասարդը կ'ողջէր իր երախտագիտութիւնը յայտնել, սակայն խօսքը ընդհատուեցաւ:

- Պիտի չուղէի որ այսօր ճամբորդէիք, սակայն, դիտե՛մ, մտահոգ ես: Ալին քեզի պիտի ընկերանայ, մինչեւ որ ապահով տեղ մը հասնիս: Հակառակ պարագային, հո՛ս կը վերադառնաք՝ միատեղ: Քաղաքը տակաւին չէ հանդարտած:

Հայը չէր պատասխաներ: Այդ բոլորը յուսալքիչ էին, սակայն կար նազենի՛ն, կային գաւակները... ո՞վ գիտէ...: Ձէր յանդգներ աւելին մտածել:

Հանին խմեց կաթին վերջին ուժովը, պղինձէ թասը դիտուն քաշած, անկողնէն դուրս եկաւ՝ խօսելով.

- Ձէնք շունի՞ս... պէտք է մի՛շտ զինուած ըլլաս... պայման չէ՛ դործա-

ճեւը, ունենալը պայման է... Առջի օր  
ձեզ չէին հալածեք մինչե՛ւ հոս, եթէ  
դպրոցին, որ ուժ ունիք... Վերջին  
վերջին խելքը... Գրեմ ես ասիկա...  
Մենք հինէն ի վեր այսպէ՛ս եղած ենք...  
Ձեռքը դրաւ երիտասարդի ուսին,  
լարունակեց.

- Հայրդ մեծ վատահումքիւն ունէր  
վրաս... Թող Աստուած իր սիրելիներուն  
մէջը առնէ զինք... ան զիտէր մեր ըն-  
տանիքին դաղանիքը... քեզի խօսած ըլ-  
լալու է այդ մասին... մեր նախահայ-  
րիքը հայ ջրիստոնեայ եղած են... ա-  
նոնցմէ մէկը՝ իր կեանքը փրկելու հա-  
մար՝ իսլամացած է, ճի՛շդ քեզի պէս...  
ուրացողը չկարենալով ապրիլ իր ծա-  
նօթիներուն մօտ, տունն ու տեղը լքած՝  
այս կողմերը հաստատուած է: Մենք  
էրզրումցի Հայեր ենք...

- Այս մասին լսած եմ, Սուսմը  
գրեմէ՞ այս բոլորը:

- Սուսմ՞ը... ո՛չ տակաւին: Մա՛ր-  
բը միայն գիտէ: Այս պատճառաւ ալ՝  
չկրցաւ վերամուսնանալ, քանի որ, մեր  
աղջիկները Թուրքի չենք տար, ոչ ալ  
օտարուհի մը մտած է մեր մէջ:

Այս միջոցին տախտակէ խոշոր սըն-  
տուկ մը կը բանար: Ձինտրան մը, մէջը  
դաշտյններ կային, դանակներ, լայնա-  
չեղք եսթաղաններ, կայիների տեսակներ՝  
խառնիխառն: Մեծկակ դաշտյն մը դուրս  
հանեց իր ամբապինդ պատեանովը,  
լայն կաշիէ դօտիով մը կապեց զայն՝  
երիտասարդի մէջքին, ուսին հարուած  
մը տալով՝ աղօթեց.

- Դէ՛հ... գնա՛... Աստուած հետդ  
ըլլայ... մի՛ մտնար, որ հիւանդ ես  
տակաւին:

Համբուրեց ճակտէն ու ճամբու  
դրաւ:

ՃԱ.

Ձիերու սանձէն բռնած՝ Ալին դուր-  
սը կը սուսաւէր:

Օսման իր միտն մօտեցաւ, շոյեց  
անոր վիզը, ճակատը, դունչը, մինչ

կենդանին գետինը կը դռփէր ուրախ  
խրխնջիւնով, գլուխը վեր-վեր ցցելով:

- Ընտանիքդ եւ դաւաններդ առ ու  
հո՛ս եկուր, եթէ քաղաքը հանդարտած  
չէ: Բոլո՛րդ ալ մեր դիտուն վրայ տեղ  
ունիք, - ձայնեց Հաճին, երբ երկու  
միաւորները ճամբայ կ'ելլէին:

Ատանա չհասած՝ կացութիւնը ըմ-  
բռնելի դարձած էր:

Մուխի ամպ մը կը ծածկէր քաղա-  
քը՝ գուլար-գուլար խաղալով արեւի ճա-  
ռագայթներուն դէմ:

Դէպի քաղաք խուժող ու քաղաքէն  
վերադարձող կողպատիչներու խառնե-  
ճաղանճը կը վխտար ամէն կողմ: Բեռ-  
ցուած կենդանիներ, սայլեր, կառքեր  
անընդհատ դուրս կու դային՝ աւերակ-  
ւած քաղաքէն:

Սմէն կողմ թափուած, թափթփած  
ապրանքներ...

Դիակներ...

Մերկ, յօռտուած, անդամահա-  
ւած գիակներ...

Ոմանք՝ կողոպտուած իրեղէններ կը  
ծախէին, ուրիշներ՝ քաղաք մտնելու  
տաղտուկը յանձն առնել շուղողներ՝  
պատրաստ ապրանքով կը դահլանային,  
չնչին դոմար մը վճարելով:

Կամուրջի շուրջ ամբոխը անզուգի  
դարձած էր: Ոստիկաններ ու այլ հա-  
մազգեստաւորներ կային, կարգապահու-  
թեա՞ն, թէ ոճրին անարգել կերարկու-  
մին վրայ հսկելու համար:

Ձինհային հետ, Սիհունի ջուրերը  
բարձրացած էին, գրեթէ կամարներու  
կատարին: Անընդհատ գետ թափուող  
մարդկային դիակներ ու մարմնի մա-  
սեր կը հասնէին մինչեւ կամուրջ ու,  
անցքի դժուարութեամբ, լայնահաս գե-  
տի մակերեսին վրայ, անշարժ կը ծը-  
փային հարիւր-հարիւրաւորներով...

Ձիու կունակին, հայը կը տեսնէր  
այդ բոլորը՝ իր շճած, կորուած ակ-  
նարկներովը:

Ձիւտը սպայ մը իրենց դիմաց ե-  
լաւ, սկսաւ ինչ-որ հարցումներ ընել:

Օսման չկրցաւ պատասխանել: Մաք-  
դուն խօսածը չէր իսկ հասկնար: Ուղե-

զը կորոնցուցած էր ամէն հակակշիռ։ Տրամարանութեան սարքը խանգարուած՝ տեսած ու լածնեւէն, այլեւս ոչ մէկ երեւոյթ իր բնական անդրադարձը կ'ուսնենար անոր մօտ։ Ըմբռնելու կարողութիւնը տեղի տուած էր։

Անխոհական բնազդով կ'ստաջնորդուէր։

Ային առաջ անցաւ՝ բացատրութիւններ տալու։

Գետի արեւմտեան ափին՝ աւելի մեծ էր իրարանցումը։

Մայրերով, անընդհատ դիակ կը փոխադրուէր զեւեղիին։ Ողջ կամ կենդանի, մերկացուելէ ետք, ներկաներու կողմէ դարձար կը շարտուէին ջուրին մէջ։

~ Կամուրջը գոցուեցաւ ետեւ՝ վա՛ր տարէք, թափեցէք այդ խոզի սատակները, - կը պոռար բեռնակիր մը հասնող սայլապանին։

- Ժամանակ չկայ, քաղաքը լեցուն է, - անհոգ կը պատասխանէր միւսը։

Հայը չկրցաւ երկար նայիլ... աղբի նման թափուող դիակներու տեսքը... կողպտիչներուն հրճուանքն ու քրքիւղը... Մարսափելի էին...։

... Գլխաւոր պողոտային նեղ, դարձուարձիկ փողոցները մտան։ Հոս մեռելային լուսթիւն էր, ամայութիւն...։ Բոլոր դռները խախտած էին կամ կոտորած։

Մայրախառնակին վրայ ձիերու համալսփ ոտնաձայնը լուսթեան սարսափը կ'անհզացնէր։ Հատ-հատ դէնքի ձայներ կու գային հետուէն։

Կանգ առաւ տանը առջեւ։ Այլայլեցաւ։ Ձիէն իջնելու դժուարացաւ։

Փողոցին դուռը խախտած էր։ Մուտքին ծանր դերան մը կար ու

լաղացքի զոյգ մը հսկայ քարեր։ Աժրասցընելու յոյսով՝ հաստատուած ըլլալու էին դրան ետին։ Սակայն, յարձակողները, ակնյայտօրէն չէին ընկրկած դժուարութեանց առջեւ...։

Բակին մէջ՝ ամայութիւն ու աւեր...։

Ննջանհնակը պարպուած էր։ Թուզ-

թի կտորներ միայն մնացած էին տախտակածածիկ վրայ։ Միւս սենեակները նոյնպէ՛ս, թալանուած։

Սոհառոցի սեմին՝ արեան ճապաղիք մը...։

Գուռը գոցուած էր։ Երկու երիտասարդներ իրարու նայեցան, առանց կարենալ արտայայտուելու։

Հայը խորունկ շնչեց։ Մարմնէն պաղ սարսուռ մը անցաւ։ Միտքը շրճագորէն գողգող սկսաւ։

Թուրքը ուժգին հարուածով բացաւ դուռը...։

Նազենիի յօշոտուած մարմինը, իր բովանդակ մերկութեամբը տարածուած էր գետինը, մինչ իր սրունքներուն միջեւ կ'երկարէր փոքրիկ աղջկանը դիակը՝ ճզմուած գլուխով։

Գոթախոտ հայը բռունցքի հարուած մը տուաւ ճակատին։ Արիւնը լորցաւ երակներուն մէջ։ արդէն յոգնած ջիզբը տեղի տուին, թուլցաւ, թուլցաւ...։

Ային օգնութեան հասաւ։

Ձինք առաջին սենեակը տարաւ։ Ջրհորէն ջուր քաշեց։ Թաշկինակ մը թրջեց։ Անոր ճակատն ու երեսները զովացուց մինչեւ որ աչքերը բացուէին։

Ո՛ւր էր նախկին Միհրան Էֆէնտին։ Արդահատելի, սմբած վիճակ մը ունէր այժմ։ Ամէն հպարտութիւն ու կամք մեռած էր այլեւս իր մէջ։ Գլուխը օրօրեց յուսահատօրէն։

- Աղա՛, պէ՛տք է անապարհնք, Հաճին մեղի կը սպասէ։ Այո օրերուն՝ ուշ մնալը լաւ չէ։

- Ո՛ւր պիտի երթամ, ինչպէ՛ս պիտի երթամ, ի՞նչ պիտի ընեմ այդ երկու դիակները...։ Ո՛ւր են տղաքս, Մուրատն ու Աբրահամը...։

Գլուխը ափերուն մէջ առաւ։ Իր անել կացութեան ելք մը գտնելու սպասը դիւն ճիզով...։

ԺԲ.

Պատուած Աւետարանի մը թերթերն

էին դետինը թափուած, հաս մը զարկաւ աչքին, մեքենարար ծոցցաւ, վերցուց, կարդաց...

Ակուանները սեղմուեցան, դէմքին մը կանները պրկուեցան, զլուխը ցնցուեցաւ...

Իր ամուսնութեան եւ զաւակներու ծննդեան թուականները արձանագրուած էին Աւետարանի այդ սպիտակ էջին վըրայ...

Քմծիծաղ մը ունեցաւ...  
Թողթի կտորը շարտեց ուժդին...  
Սենեակէն դուրս ելաւ:  
Փողոցին մէջ կին մը կը ճշար աղիտորմ:

Երկու թուրքեր՝ երիտասարդ կին մը կը քաշկուտէին. մին զրկին փոքրիկ աղջիկ մը սեղմած՝ կը հայհոյէր:

Օսման դուրս հանեց ձին, վրան նետուեցաւ:

- Զոհ՝ այդ կինը, - պոռաց:  
- Անհաւաս խոզ մըն է, - ատարկեց մէկը, մինչ միւսը կացինի արագ հարած մը տուաւ զիմադրող կնոջ զլխուն:  
Հայը ուշ հասաւ, սակայն իր ձին զէնց ոնքադործի վրան ու սմբակներուն տակ կոխուեց զայն անինսյ:

Սալայատակին վրայ լքուած աղջիկը իր լացը կտրեց կտոր մը հացով...

Օսման հետը վերցուց որբացած, անձնօթ մանկիկը:

Տարբարատ հայը անզում մըն ալ իր տունէն ներս մտաւ: Ակնարկ մը եւս նետեց չորսդին: Ննջասենեակէն Հաւաքեց թուղթի պատուած կտորները: Մեծկակ գունաւոր թաշկինակի մը մէջ ծրարեց բոլորը: Անկիւն մը նետուած փայտի կտորներ գտաւ: Հաւաքեց: Իրարու ջով շարեց: Խա՛չ մըն էր՝ ձիթենիի փայտէ շինուած: Մոցին մէջ զետեղեց բոլորը:

Դուրս եկան, երեքով:  
Կամուրջի մօտ միշտ նոյն պատկերն էր: Սայլ մը, ծանրօրէն բեռցուած, հաղի կը շարժէր, խճողելով անցքը:

- Սայլդ չի՛ սանիւր, քիչ մը պակաս լեցնէիր մա՛րդ, - բողոքեց մէկը սայլապանին:

- Հեղեղը ամէն օր ծառի կոնդ չի

բերեր զաւակս: Աւիթէն օգտուել պէտք է, - եղաւ պատասխանը:

Օսման սայլի ընթացքով զանգաղեցուցած էր ձիուն քայլերը:

- Նայեցէ՛ք սա աղային, խոշոր Ատանայէն մանուկ մը միայն կրցած է ձեռք ձգել, - խօսեցաւ ուրիշ մը սրամըտելով, տղա, խօսքը հայուն ուղղելով, - աղա՛, գոնէ կուրծքը լեցուն ուտուելիք պտուղ մը զանէիր այդ պրկին սեղ...:

Պատասխանի փոխարէն, անակնկալ շատաշինով մտրակ մը պլլուեցաւ անպայան դէմքին, երկու աչքերուն վրայէն սահելով:

Մարեցաւ լոյսը՝ մարդու աչքերուն, Բառաշինով մը դետին տապալեցաւ, սպաննուած կենդանիի մը նման, խուժանի ոտքերուն տակ:

Զիաւորը դուրս քաշեց դաշոյնը պատեանէն, պատրաստ հարուածելու, որեւէ մէկուն, որ պիտի ժպրէր միջամուխ ըլլալ:

ԹԳ.

Մութը կոխած էր, երբ ուղեւորները վար իջան՝ յոգնատանջ եւ անօթի կենդանիներու կոնուկէն: Հաճին եւ իր աչքերէն հաւաքուեցան եկուորներուն շարքը: Կացուծիւնը զգալի էր: Մերունին հայրաբար մօտեցաւ:

- Շա՛տ ուրախ եմ, որ ողջ-առողջ կրցաք վերադառնալ...: Թող Ալլահին կա՛մքը ըլլայ:

Օսման չպատասխանեց: Աղջնակը Սուսամին յանձնեց: Գնաց, անկողնին վրայ ինկաւ:

Այդ դիւեր միտելային լուսթիւն կը տիրէր վրաններուն մէջ: Նորեկ աղջնակին ձայնն էր միայն, որ մերթ ընդ մերթ, իր մայրը կը փնտռէր լուով ու, ամէն անգամ, Սուսամի փողաքանքներովը հանդարտած, կը կծկուէր անոր գրկին մէջ: Կը մրափէր:

Օսման երեք օր չկրցաւ խօսիլ:  
Երեք օր չկրցաւ ուտել:

Դարձեա՛լ ջերմ ունեցաւ: Դարձեա՛լ զժուարին նուպաները՝ դողդղալու: Դարձեա՛լ միւսնո՛յն ինամքները: Հաճին փորձեց միթաքել: Ի՞ զուր:

Պահարն էր միայն, որ գրեթէ օրն է բուն, ամէն գործ բան ձգած, կը նստէր աղուն անկողնին մօտ: Կը խօսէր երկար: Ձէ՞ որ տարեկից էին տղուն հետ, միասին ալ հասակ առած: Ձէ՞ որ ի՛նքն ալ՝ իր գարունքին՝ այրի մնացած էր, Փիզիբական թէ հոգեկան ամէն վայելէք զրկուած: Ձէ՞ որ ի՛նքն ալ՝ մինակ էր՝ աշխարհի մէջ մէկը շունէր զինք հասկըցող, մէկը, որ... օ՛ օ՛ օ՛...: Ի՛նչ երա՛ջ անհասանելի, մէկը, որուն ուսին կարենար վիշտերը լալ, ու, կը կորուէր մտքերու ոլորապտոյտ սահանքին հետ, ուր իր անօգնական միայնութիւնը կը շեշտուէր, կեանքի բոլոր զըժւարութեանց աջիւ:

Ձորորդ օրը, առաւօտեան, Հաճին կարգադրեց որ նախաճաշը Օսմանի վերանին մէջ առնեն:

Հիւանդը չկրցաւ աւելի դիմադրել: Ճաշեց միւսներուն հետ: Մերունին եւ աղջիկը ուրախ տրամադրութիւն կը կեդծէին, սակայն Սուսամ չէր խօսեր, գլուխը կախ մնաց, աչքերը ընաւ վեր չառաւ՝ տղուն նայելու:

— Օսման տղա, — խօսք բացաւ Հաճին, — միտք ունիմ դո՞մերը տեսնելու: Նոր կարգադրութիւններու մասին մտածելու: Կ'ուզեմ որ հետս գաս: Քու կարծիքը առնել կ'ուզեմ:

Տղան չպատասխանեց:  
Ճաշէն ետք, Սուսամ դուրս ելաւ, փոքրիկ աղջկան հետ վերադարձաւ:

— Այս աղուոր պուրիկը ինծի բերի՛ր, սակայն իր անունը չի գիտեր, — խօսեցաւ ուրախ արամադրութիւն կեդծելով:

— Աղջիկս՝ Տիրուհին գնաց, թող այս Տիրուհի ըլլայ, — վճռեց որպէկորոյս հայրը: Եւ որովհետեւ «Տիրուհի»ն հեշտ չէր հնչեր իսլամ շրջանակին՝ կըրճատուելով եղաւ Տիրուհի:

Հաճի աղան իր էլը ունէր, հատ մըն ալ բերին երիտասարդին համար ու,

միտեղ, ճամբայ ինկան ձորն ի վար, — Ի՛նչ կը մտածես ընել այժմ, — հարց տուաւ ծերունին, երբ բաւական հեռացած էին վրաններէն:

— Ձե՛մ գիտեր:

— Քաղաքը հանդարտելէ ետք, կը մտածե՞ս երթալ ու գործերուդ նայիլ:

— Ձեմ գիտեր, — կրկնեց երիտասարդը, — ամէն պարագայի, այդ քաղաքը ապրիլ չեմ ուղեր:

— Եթէ ուզես կրնաս Մերսին հաստատուիլ, Իզմիր կամ Պոլիս: Հոս կրօնափոխ եղար, սակայն մարդ լուր չունի թու մասիդ: Կրնաս հաւատքիդ դառնալ ու ապրիլ դարձեալ, որպէս հայ քրիստոնեայ:

— Ձեմ գիտեր, չեմ գիտեր, կորուած վիճակ մը ունիմ, այս ուրացումէս ետք մարդկութեան մէջ մտնելը անկարելի է ինծի համար: Մ'ըր որ ալ ըլլամ, ե՛րբ որ ալ ըլլայ՝ պիտի չկարենամ ներել ինքզինքիս...:

— Դարձի՛ր կրօնքիդ:

— Ես դաւեցի Աստուծոյս: Ան լեցցաւ զիս, Հաճի՛, շատ փորձեցի, ի զուր է:

— Իսլամի՛ թէ քրիստոնեայի՛ Աստուածը մէկ է: Աստուած հաւատք է: Իրան չե՞ս հաւատար, թէ թո՛ւ Աստուածդ եւ իսլամինը նոյն Ամենակարողն է:

Եղեւնի տնտառի մը մէջէն կ'անցնէին: Ձով ու արեւոտ օր մըն էր: Հաղար ծառէ հաղար ձայն կ'երգէր, վայրի անանուխի եւ ծառերու բուրմունքը հեշտանքով պարուրած էր մթնոլորտը: Հաճին իջաւ իր իշուկէն: Ժայռերու ճեղքերէն զուլալ, քաղցրահամ ջուր կուգար: Երկու ափերը իրարու մօտեցուց այդ թափուող ջուրին տակ, խմեց:

— Գոհունակութիւն գիտարտութեանդ, Տէ՛ր, — ըսաւ Հաճին եւ զրպանէն մեծկակ թաշկինակ մը հանեց, բերանն ու մօրուքը չորցուց: Իր ուղեկցին զանաւորով, — քալենք քիչ մը: Այս անտառին մէջ պատիւը մարդուս կեանքը կ'երկարէ, — առաջարկեց:

— Հաճի՛, դուն թո՛ւրք ես, թէ հայ:

— Թո՛ւրք, ե՞ս թուրք, որքան հայ

կայ աշխարհիս վրայ, ես բուրբն աւելի  
հայ եմ:

- Հաճի՛, հայը խլամանալով կը  
կտրուի իր ազգէն:

- Այնքան ասեմ որ ինքզինքդ հայ  
կը դռաս, այնքան ասեմ որ արիւմիդ մէջ  
օտար արիւմ չկայ, հայ ես: Աւելի քան  
երկու դար մենք խլամացած ենք, սա-  
կայն մեր մէջ օտար արիւմ չէ մտած,  
մարդս ձիու կը նմանի: Որքան ալ ազնու-  
ակամ՝ երբ խառնուի՝ եկողը աշուա-  
կան չի կրնար ըլլալ:

- Ի՞նչ արժէք ունի մեր ապրիլը  
Հաճի, եթէ ազգին մաս չենք կազմեր:

Անպատասխան մնալով՝ երիտասար-  
դը լռեց, սակայն միտքը չէր հանդար-  
տած: Պարտադրուած վիճակին մէջ ինք-  
զինք խորթ կը դռնէր: Դասալիք մըն էր  
ինք եւ ուրացող մը: Իրաւունք ունէ՞ր  
այնուհետեւ ապրիլ որպէս հայ: Իր կի-  
նը, դուստրը, բարեկամը ու հազար ու  
հազար հայեր ջարդող ցեղին մաս կազ-  
մել կրնա՞ր: «Ո՛վ եմ ես» կը խորհրդ-  
դածէր. «ինչի՞ համար է կեանքը», ձեռ  
կրնա՞մ այլեւս ապրիլը...

- Կրնա՞ս, քանի որ հայ ես:

Իր մտքերուն մէջ մուրած՝ երիտա-  
սարդը դառնօրէն պոթկաց.

- Ես հայ չի՞մ այլեւս:

- Դուն հայ ես, - արձագանգեց  
Հաճին:

Տղան անակնկալի եկաւ:

- Հաճի դուն թուրք չես: Ճի՛շդ է:  
Սակայն հայութեան հետ ո՛չ մէկ առնու-  
չութիւն ունիս, կարուած ճիւղ մըն ես:

- Դարձիք հաւատքիդ, - ընդմիջեց  
Հաճին, - դարձի՛ր հաւատքիդ:

Արդէն հասած էին դռներուն: Շըը-  
լան մը ըրին չորսդին:

Պէտք եղած բացատրութիւնները տա-  
լէ ետք, Հաճին յայտնեց երիտասարդին.

- Ես այլեւս վերջացած եմ: Երկու  
օր է այս մասին կը մտածեմ: Մահէս  
տաաջ կ'ուզեմ ամէն ինչ կարգի դնել:  
Միակ մտահոգութիւնս ասան երկու կի-  
ներն են, երկուքն ալ երիտասարդ,  
երկուքն ալ վտանգի ենթակայ: Կը հաս-

կընտ՞ս վիճակս: Գու հարստութեանդ  
մէկ մասն ալ հոս է: Վատահիլի մէկը  
կ'ուզեմ, մէկը՝ որուն կարենամ յանձ-  
նել այս բոլոր պատասխանատուութիւն-  
ները, որ տէր կանգնիլ ուզէ բուրբին:

ԺԴ.

Ամիս մը ետք...

Փոթորիկը անցած էր:

Օման դասու իր մանչ դուստրերը,  
որոնք փրկուած էին ստոյգ մահէ, ա-  
ղէտին օրը տունէն հեռու ըլլալով:

Քաղաքի հրդեհին հետ այլած էր  
նաեւ իր տունն ու այլ կայուածները:

Ամէն քաղաք իջնելուն՝ սարսափը կը  
պատէր դինք: Ամօթով կը մօտենար ծա-  
ծօթներուն ու չէր դիտեր ինչպէս փախ-  
չիլ, հեռանալ:

Լքեց ազարակն ու այգին: Մնաց  
Հաճի աղային մօտ:

Օտորախոյս վիճակ մը ստեղծուե-  
ցաւ իր մէջ: Կ'ուզէր փախչիլ, հեռա-  
նալ, կորսուիլ: Իր անցեալը յիշեցնող  
ամէն երեւոյթ իր մէջ կը շեշտէր ուրա-  
ցողի նուաստացուցիչ զգացումը...

Անտառներու մէջ, երկար պտոյտնե-  
րը մուցնել կու տային իրեն ամէն մըղ-  
ձաւանջ:

Պահար լայն ժամանակ կը յատկա-  
ցընէր երիտասարդին սպասարկելու: Ա-  
մէն ատուտտ միտտեղ կը խմէին կաթը:  
Առիթ չէր փախցնել անոր ընկերանալու:

Հաճին գոհ էր այդ բուրբէն: Արդէն  
ամէն պատասխանատուութիւն ձգած էր  
երիտասարդի տնօրինութեանը: Տարի մը  
լանցած՝ վրանները փոխարինուած էին  
փայտէ երկյարկանի անակներով: Ըն-  
դարձակուած էին դռները:

Մուրասն ու Արբահամը դիւրաւ ըն-  
տելացան միջավայրին, սակայն գրկուե-  
ցան ուսումէ:

Ոսկի մագերով աղջնակը Մուսամի  
պարապմունքին առարկան եղաւ: Կեան-  
քին մէջ մանուկի հետ չփում չունեցող  
աղջիկը, այս խօսուն, կենսալիք պուպ-

բիկին մէջ իր ճանճորոյժը փարատելու  
խարկանքը կը գտնէր:

Օր մըն ալ, երբ Օսմանն ու Պահարը  
անտառին մէջ պտտելէ յողանած՝ նստած  
էին ժայռերու վրայ, կինը դուրսը դը-  
րաւ տղուն ուսին՝ հարցուց.

- Օսման, ի՞նչ կը մտածես իմ մա-  
տիս:

- Քո՛ւ մտորդ:  
- Հա՛, չե՞ս կարծեր որ ե՛ս ալ ու-  
րիչ կիներու նման...: Ձե՛ս մտածեր,  
որ ե՛ս ալ կին մըն եմ:

Տղան չկրցաւ պատասխանել, փո-  
խարէնը, բխմատի եւ ցուցամատի մի-  
ջև բռնեց կնոջ ծնօտը, վեր բարձրա-  
ցուց դուրսը ու սկսաւ անոր աչքերուն  
խորը սուղուիլ, որոնք քանի մը անգամ  
բացուիլ-դոցուելէ ետք, ծածկուեցան կո-  
պերու վարագոյրին ետին: Արցունքի  
կաթիլ մը փայլեցաւ, ակնթարթ մը  
դողդղաց, ու վար օտնուով ինկաւ կնոջ  
փոթորկայտի վրայ:

- Պահար, - ուզեց խօսիլ տղան,  
սակայն կինը չձգեց որ շարունակէ:

- Մի՛ խօսիր: Մի՛ խօսիր...:

Դարձեալ դուրսը դրաւ տղուն ու-  
սին, ծոծրակին մօտ, մինչ տղան իր թե-  
ւը կը տարածէր, սփոփանքի խօսքերով,  
կնոջ մարմնին շուրջ, զայն հանդարտե-  
ցընելու համար:

- Մի՛ խօսիր, ինչորեմ, - կրկնեց, -  
սեղմէ՛ զիս կուրծքիդ վրան:

Ո՛չ մին եւ ո՛չ ալ միւսը չկրցան  
նկատել, թէ ինչպէ՛ս, շուքի նման, ծա-  
ռերու ետեւէն սահելով դուրս ելաւ ու,  
քանի մը քայլ անդին, իրենց ճի՛շդ դէ-  
մը իր ձեռք հասակովը կեցաւ Սուսա-  
մը, չիկահեր աղջնակը գրկին:

Անպաստիկն կաշկանդեց տղան:  
Չկրցաւ արտայայտուիլ, սակայն թեւը  
դանդաղօրէն վար իջաւ կնոջ կոնակէն:

Պատահարին անզրտակ՝ կինը աւելի  
սեղմուեցաւ աղուն, թախանձելով, որ  
զինք աւելի ու աւելի սեղմէ կուրծքին  
վրայ:

Ստած աչքերով, արձանի մը նման  
անշարժ կեցած, աղջիկը կը նայէր մօ-

րը, երբ մանուկը գրկէն վար սահե-  
ցաւ...:

Կինը ցնցուեցաւ:  
- Սուսա՛մ, - պոռաց տղան:

Աղջիկը ձորն ի վար կը վազէր, յու-  
զումէն ալլալլած:

- Սուսա՛մ, հո՛ս եկուր, - կրկին  
պոռաց տղան ու աղեղէն արձակուած  
նետի մը նման վազեց աղջկան ետեւէն:

Դիւրին չէր զլեռներու այծեամպին  
հասնիլ, երբ արդէն հեռացած է ընդմէջ,  
երբ քաղաքի բնակիչն էս ու անվարժ բը-  
նութեան ստեղծած դժուարութիւննե-  
րուն, սակայն տղան վճռաբար վազեց,  
ի վերջոյ բռնեց վախշոյ աղջկան մազե-  
րէն...: Աւիթ շունեցաւ խօսելու...:  
Աղջիկը պատասխանեց իր եղունգներովն  
ու ակուններովը, մինչև որ ուժասուպա,  
ինկաւ գետնի խոտերուն վրայ...:

Հաշտութիւնը չուշացաւ:

Վերադարձին Պահարը չկա՛ր, ոչ ալ  
Տիրուկը: Երբ ժայռերուն ճօտեցան,  
աղջիկը ուզեց հանդիլի: Դրաւ դուրսը  
տղուն կուրծքին:

- Մի՛հրա՛ն, - շնջաց:

- Այո՛:

- Մի՛հրա՛ն, դուն կը սիրե՞ս մայրս,  
կ'ուզե՞ս հետը ամուսնանալ:

- Ձէ՛:

- Մի՛հրա՛ն...:

Չշարունակեց Արագ շարժումով մը  
շտկուեցաւ, նայեցաւ տղուն:

- Մի՛հրա՛ն, կը սիրե՞ս զիս...:

Տղան փակեց աչքերը:

Նոյն հարցումը: Նոյն շեշտով...:

Նազինի՛ն էր: Ի՛ր կի՛նը, Նազի-  
նին...: - «Մի՛հրա՛ն, կը սիրե՞ս զիս», -  
կը հարցնէր յանախ, տպա, երբ բերնին  
մէջ հալէին անոր շրթները, - «Մի՛հ-  
րա՛ն, որքա՛ն քաղցր էս դուն, որքա՛ն  
քողցր» ու, բուրբանուէր կ'անհամար:

Սուսամի շրթները տակաւին կը դո-  
ղային, երբ տղուն բերնին դպան:

- Մի՛հրա՛ն, սիրէ՛ զիս, շա՛տ սիրէ,  
մի՛շտ սիրէ...:

Ուժերը լքեցին զինք, թուլցաւ, ինք-  
զինքը յանձնեց տղուն թեւերուն:



ԺԵ.

Տուն հասնելուն՝ վաղեց մեծ հօրը սենեակը:

- Տէտէ՛, - կանչեց ու փաթթուեցաւ անոր վզին: Համբուրեց ծերունիին այտերը, գլուխը դրաւ անոր ուսին:

- Տէտէ՛, - կրկնեց անգամ մըն ալ, սակայն չկրցա՛ւ դադարի՛քը յայտնել: Զյանդչնեցաւ:

ԺԶ.

Օսման աղայի եւ Սուսամի հարսնիքը անչուք արարողութիւն մը եղաւ:

Երջանիկ էր Սուսամ, շա՛տ երջանիկ:

Ուրախ էր Հաճին: Իր երազը էրականութիւն կը դառնար:

Պահար ջանաց ծածկել զժբախտութիւնը:

Օսման մտածկոտ էր ու մնաց մտածկոտ կեանքին մինչեւ վերջը: Անոր խորատակուած սրտին մէջ կեանքը կենդանութիւն չառաւ: Ո՛չ ընտանեկան նոր բոյնը եւ ո՛չ ալ կեանքով զեղուն դեռատի հարսը կրցան մոռցնել տալ՝ այդ հայուն՝ Նազենիի յիշատակն ու ուրացողի նուաստութիւնը:

Սուսամի գրկին մէջ՝ Նազենին կ'երազէր ու, երազներուն մէջ՝ Նազենիին հետը կը խօսէր:

Տարիներ ետք, երբ որք Տիրուկ հասած աղջիկ դարձաւ, իր անդրանիկ դասկին՝ Մուրաաին հետ ամուսնացուց. արդէն Հաճի աղան մեռած էր ու Սուսամին մայրը՝ մեծ եղեռնի շրջանին, այդ լեռներու մէջ փախստական կեանք սպրոզ

հայու մը հետ ամուսնանալով, հեռացած էր անծանօթ աշխարհ մը:

Սուսամ մայրական երջանկութիւնը չկրցաւ ճանչնալ: Ամուսինը բնաւ չդադրեցաւ ինքզինքը մայր ծառէն կտրուած ճիւղ մը նկատելէ, որ դատապարտուած էր չորնալու ուչ կամ կանուխ: Վեհանքու այծեամօք կուրծքէն դարձուեցաւ: Իր փնտրած սէրը չկրցաւ գտնել ամուսինին քով:

- Մի՛հրա՛ն, սիրէ դիս, շա՛տ սիրէ, մի՛շտ սիրէ...

Պաղատեցաւ կեանքին մինչև վերջին վայրկեանը, սակայն իր պաղատանքները անարձագանգ մնացին...: Օսմանի սրտին մէջ սիրոյ ամէն աղբիւր ցամքած էր վաղուց, շա՛տ վաղուց...

ԺԷ.

Օսման աղա իր կեանքին քսանըրեք տարիները անցուց մղձաւանջի մը մէջ: Մէկ տենչանք ունէր՝ ազատիլ այդ վեճակէն՝ մահուան հանդիստովը...:

Որ շա՛տ չուչացաւ, քսանըրեք տարիներ սպասեց:

Մահուան անկողնին մէջ, երբ աչքերը անդամ մըն ալ բացաւ՝

- Մեր տան Աւետարանէն մնացած այս թուղթերը հետո թաղեցէ՛ք՝ արհուրու մէջ... եւ... դուք ձգեցէ՛ք այս երկիրը... միացէ՛ք ազգին... ինծի պէս մի՛ ըլլաք...

Երկու արհուրուան մէջ սեղմած Աւետարանի մնացորդացը կուրծքին տարաւ, սեղմեց, աչքերը փակեց:

- Փառք քեզ, Տէ՛ր, - շնորհաց...: Գոհունակ, ժպտող զէճքին՝ յանդաւ:

(Շար. 2 եւ վերջ)

Գ. Ք.

## ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԵՐԳԸ

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

ՈՒՐ ԿԵԱՆՔԸ ԿԸ ԾԱՂԿԻ  
ԻԶԻՏԱՅԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԷՆ

### Ջ.

Ով կիսանայ կը ծըփայ վարն անսահման  
Ծըփանքներով, որոնց մէջէն կը սուրան  
Նաւերը կուրծք տալով ալեաց կատարի,  
Նաւեր՝ որոնց հետ դլփիներն են խաղի:  
Կայմերուն վրայ, կայմերուն շուրջ կը յածին  
Ու կը նըչան ազկիներն լուսածին,  
Կը սլանան վեր, կը սուրան դէպի վար,  
Ձիւնափրփուր կ'ըլլայ ալիքն իրենց թառ:  
Միշտ սիրահար փոքորիկի, պայտարի,  
Մրրիկներուն երգ իրենց երգն է վայրի,  
Ու մեզի՛ սէտ, ծովերուն ու երկինքին  
Մէջ կ'որոնեն իմաստութիւնը կեանքին:  
Պեզա՛ս, ջուրերը մոլեգնած կը բանան  
Ընդերքն իրենց, խրոտով վիհի մը նըման,  
Եւ անդունդին կ'ուռի կուրծքը յեղակարծ,  
Կը լեռնանայ ձիւնակատար, դէպ՛ Աստուած:  
Ով կիսանն հիմա օրօրոց մ'է բովանդակ,  
Ջոր կը շարժէ ձեռք մ'անձանօք ծագէ ծագ  
Հոն կ'օրօրուի բարբոթ սիրտը բնութեան՝  
Որ կը տրտիէ յանուն կեանքի ու մահուան...:  
Սուրա՛, Պեզա՛ս, ով կիսանն ահա մայիցին.  
Կը քֆնէ իր մազն ու գայրոյթն ահագին,  
Բայց իր անգոր կատարութեամբ պարտասուն,  
Պիտ՛ ըլլայ վաղն, անդորը հայլի մը հասուն:  
Իրկիւնը կը մերձեմայ ու կապար  
Երկինքէ մը կապար է որ մազուի վար.  
Արեգակն ալ յուսահատի մը հանգոյն,  
Կը փակէ աչքն ու ալ կ'ըլլայ ծովաւայն:

Տիեզերքի խորհուրդին պէս է մըքիմ  
 Անհուն գիշերն այս, զվկիա՛ն մ'է խաւարտչին.  
 Լազա՛, լոզա՛, լըռութեան ծոցը անհուն,  
 Մի՛նակութեան եւ անդռնի այս պահուն:  
 Աչերըդ որ գերք փարոսներ կը շաղան,  
 Լուսաւորեն պիտի անվերջ մեր ճամբան.  
 Մեր ճամբան՝ որ ուսողերու լո՛յս պարին մէջ,  
 Կ'երկարի դէպի արեւը անշէջ:  
 Լազա՛, լոզա՛, մարմինդ զինջ հայելին  
 Կը ցայացնէ գոհար աստղերն երկինքին.  
 Եւ լուսունկան մեծ սկւտեղ մ'է ոսկի  
 Ուրկէ կ'աւտես բոց յարդերը Վահագնի:  
 Թըռի՛ր, հեռուն հարկունը կ'արծաթի  
 Թըռի՛ր, մինչեւ որ արեգակը ծափի:  
 Ձեռք մ'անծանօթ կը քամէ նաւ մը կարմիր,  
 Կապայտին կոյս կարծփին վըրայ լուսածիր.  
 Արշալոյսը արիւնի լիք մ'է ոսկի՛.  
 Որ բընութեան վրայ անդադար կը հասի:  
 Պեգա՛ս, աեա՛ լեռ ու ծըմակ կը վառին,  
 Ծովն ուսերուն կ'առնէ փարփառ ծիրանին:  
 Սուրա՛, սուրա՛, բմպէ՛ լոյսը, լիացի՛ր,  
 Մե՛նք՝ լուսինն եմք ու մեզի՛ լոյսը անծիր:  
 Գէպի հեռո՛ւն, արշալիզ մէջ անվեհեր,  
 Վերն՝ երկինքը, վարն՝ աշխարհներ ու ծովեր  
 Տեղաշարժի մէջ, կ'ընկրկին դէպի ետ,  
 Զքանալով աներութեան ծոցն անհետ:  
 Աեա՛, արաք ծովափունքը ամայի  
 Ուր, ամէն ինչ բարկ արեւին տակ կ'այրի.  
 Աե՛նն աեա, ժայռերովը պղնձագոյն՝  
 Ուրտեղ մարդն է խանձած խոտի մը հանգոյն:  
 Աեա՛ կարմիր ծովին բուրբը կապայտ՝  
 Ուր, նաւակով կը շրջէր օր մը անփոյթ.  
 Շէնդաշուք, սէք թագուհին Սապայի,  
 Կ'անցնէր ուրկէ տարագիր ցեղ մը այրի,  
 Իսրայէլն՝ իր տառապանքի՛ն չափ վըսեմ,  
 Հալածական՝ փարուսնէ մը նըսեմ:

Պեգա՛ս, Պեգա՛ս, ծովը ոսկի տազի,  
 Ալիք՝ ալիք մեր առջեւ կը տարածուի.  
 Անպաստը արեւին տակ կը հեւայ,  
 Բուրգե՛րն աեա, հորիզոնին ուսի՛ն վրայ.  
 Բուրգերն՝ հագած պտտմունքանը մըշուշին,  
 Կեանքէն, մահէն, յաւերժօրէն կը խօսին.  
 Եւ Սփինքսն՝ որ անդորրակամ ժրպիտով,  
 Աշխարհէն դուրս յաւեր է աչքն անխրոնով:  
 Լո՛ւռ են յաւեր իր շրթները ամրափակ.  
 Հորուսն է ան՝ առատոր՝ նորածագ,

Պերճախօս համր՝ աւագուտփն մէջ մինակ :  
 Յիսուսն դարեր իրենց գաղտնիքը խորին .  
 Վստահե՛ր են խորհուրդ դարձած այս քարին .  
 Եւ մարդը՝ որ յեզու տրուա ժայռին քուֆ .  
 Արդ կ'ազերսէ բանալի մը, անօգո՛ւտ :  
 Բանալի՛ մ'առ մեկնէր իմաստը անհուն՝  
 Որ քառե՛ր է Սփինքսի փակ շրթներուն :  
 Պեզա՛ս, ահա յորդ Նեղոսը սրբազան,  
 Իջիտա՛յի արցունքին գե՛տն հրահոսան .  
 Անհո՛ւն բխումն՝ անբուժելի մեծ ցաւին .  
 Անապատներն որով շքեղ կը ծաղկին .  
 Եւ ամէնուր, Մեճփո՛ւն մինչ՝ ի Թէպէ,  
 Նույնական մինչ ավերը սաստփէ,  
 Նարինջ, կեռաս, արմատենի, աճափա,  
 Օլէանոս, լուտաննի, Վրնգա,  
 Կը քողորոնան ու կը քուրեն, կը ճայի՛ն,  
 Կը ծաղկի հողն՝ ավերուն մէջ ֆէլլա՛հն . . . :

Ո՛ւր էք, ա՛ւր էք, հի՛ն օրեր ու հի՛ն փառքեր .  
 Աճո՛ն - Թա՛յի արեւն ինչպէ՛ս է հանգեր,  
 Ո՛վ իմաստուն քուրմերը դուք Բառնաթի,  
 Ձեր փառքն ինչպէ՛ս դարձաւ այսպէ՛ս փանաքի .  
 Հրաշակերտ տանարներուն ձեր վըսեմ .  
 Կը քառին արդ, լսկ զգիկները նքսեմ :  
 Աւերա՛կ է Լուքսօրն, ինկած՝ քար առ քար .  
 Աճե՛ն Տօթէփն ուր, իբր ստուեր, անդադար,  
 Խելակարոյս սիւնէ ի սիւն կը շքի,  
 Ուր, խորտակուած կու լայ անդրին Թաճաճի :  
 Թէպէ՛ի փառքն այժմ կ'ապրի ընդունայն,  
 Իր անսահման աւերակաց մէջ միայն՝  
 Կործանուած են մեհեաններ ու կաթող, սի՛ւն,  
 Փըշո՛ւր, ֆըշուր, հոն կ'արտասուէ Խաթասուն,  
 Հրապարտ դշտոն՝ փարաւոնի պերն գառին՝  
 Որուն առջեւ օր մը ծունկի կու գային,  
 Փառքի տեղով հիւանդ մեծերը պէս-պէս,  
 Եւ գրապուած, ինչպէս վագրը մը, Թութէ՛ս :  
 Թէպէ, Բառնաթ, Լուքսօր ու Թէլ-Աճարտ,  
 Արքաներու Հովիտ, Մէճփիս, Սաքքարա,  
 Պանդէոն՝ ուր փարաւոններ, աստուածներ,  
 Բրնակեցան խազա՛զ, իրար առնթեր :  
 Աւա՛զ, եղբ՛ր են քալարը քարուճանդ,  
 Կաղոպտուած փարաւոններն անվրկանդ .  
 Իրենց մարտար դամբանները քափո՛ւր են .  
 Ականակու ու ծանրակիր քագերէն .  
 Արդ կը շքի ֆելլա՛հին շուֆն յերուզակ,  
 Դիակապուտ իբրև, իբրև՝ աւագակ . . . :  
 Կը մերկանան արժաներ զէն ու գարդէ,  
 Արդ ասկի՛ն է որ հողին կը կախարդէ .

Ու եղեր եմ տանարներէն տարագիր՝  
 Արեւաշող աստուածները անխըտիր :  
 Ո՛վ ազիներ, աստուածներու լուսաւոր,  
 Փարաւանի ո՛վ ստուերներ սգաւոր .  
 Դուք որ կ'ապրիք աւերակաց մէջ հիւսա,  
 Ու գետնափոք դամբաններու ծոցն ամայ,  
 Ըսէ՛ք, քէ այն երբաշք գեղը որ կերտեց  
 Յաւիտենի մեծութիւններ երկնաբերս,  
 Մոխիրներէն պիտ' ընծիւղի՞ անգամ մ'ալ,  
 Պիտի կրնա՞յ կեանքին ճայիլ ու ժպտալ .  
 Պիտ' մըխըրճէ՞ անկտուն երկնի լոյսերուն,  
 Եւ Սփինգսին տայ բամալի՞ն մարդերուն :  
 Աշխարհն, օր մը, պիտի նորէն գա՞յ ուխտի .  
 Իր գիտութեան, իմաստութեան ծարաւի .  
 Կոր *Սոկրատներ, Պիթագոր* ու *Պրդատոն*  
 Իմաստութիւն որոնելու պիտ' գա՞ն հոն :  
 Հըգօ՛ր էր ան, ու երբեմն իր տարին  
 Խոնարհեցան եթովպացի՛ն, ասորի՛ն,  
 Բայց իր քանդակ դափնին մէկ-մէկ քաղցիւն,  
 Դարեհներն ու Ազեֆանդըրը քաջածին :  
 Խոնարհեցաւ իր մականը օտարին .  
 Ալ պատուանգամ դարձաւ բարւոյն ու չարին .  
 Բիւզանդիոնի՛ն եղաւ, Էգաւ՝ Հընումին,  
 Տըբարե՛ց գայն ռոներուն տակ քշեամբն :  
 Փարաւանի վտառով այնտեղ բազմեցաւ  
 Կղեպատրամ՝ կիրքերու ծովը անբաւ,  
 Բամբիշն յայրատ՝ արու առջեւ իբր Աստուած,  
 Ծունկի եկաւ Անտոնիոսը մերկացած  
 Դափնիներէն, զէն ու զարդէն յաղթական  
 Մինչ Արտաւզդ նախընտրեց վա՛ռք մանուան... :  
 Անպատէն օր մ'ալ գե՛ղ մը վաշկատուն,  
 Սուրն իր դրբաւ անոր հիւճած ուսերուն :  
 Այս հոգին վրայ, աշխարհակալ աստուածներ  
 Դարե՛ր. դարե՛ր, գուպարեցան անվեհեր .  
 Մէկն՝ իր խաչը բերաւ սիրոյ նշանակ,  
 Միւսն՝ Ալլահին համար գոհուող մի բանակ .  
 Մինչ իր աւեր տանարներուն մէջ ամայ՝  
 Կը խաւարէր Աստուած - Արփիմ՝ *Ամոն-Ռա* :  
 Պեգա՛ս, ահա կ'իջնէ մըշուշն իրիկուան .  
 Աշխատանքէ յետոյ մարդիկ կը դառնան  
 Միմ' իր պալատն, ուր գեխութիւնը կ'երգէ,  
 Միւսն՝ իր հիւզը, ուրտեղ քրտիմէք կ'երկնէ .  
 Անով կ'ըլլան անպատները ծաղկուն .  
 Մարդը կեանքի՛ն կը ժպտի, կեանքը՝ մարդուն :  
*Իզիտայի* յարգանսս, զերմ արցունքէն  
 Ծըլած, ծաղկած, պարտէզները կը բուրնն .  
 Բուրգերն հիմա Աստուծոյ հետ կը խօսին .  
 Մինչ կը կանչէ՝ «Ալլահ էֆպէր», մուէզգիւնն... :

## ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

## ԵՒ ԳԵՂԵՑԿԻՆ

## ԱՐԵՒԻՆ ՏԱԿ

## Է.

Համատարած ծովն առասիկ կը փայլի  
 Անդորր, յստակ, ինչպէս անհո՛ւն հայելի՝  
 Որուն վըրայ արփին վերէն կը մազէ  
 Լոյս անձրեւ մը, յակիւնքէ ու բիրեղէ:  
 Ծագող լոյսին հետ աչքն իրենց կը բանան  
 Ծովեզերքին վըրայ ճագափ ու առան:  
 Երկինքին սակ նորէն կեանքը կ'առնէ թեւ,  
 Կ'անցնի գեփիւուն երազի մը պէս թեթեւ.  
 Զոյգ կապոյտին մէջ ջուրին ու երկինքին,  
 Պեզա՛ս, Պեզա՛ս, կը սուրաս զու արդ կրկին:  
 Արեգակը կը շողայ գերք շափիւղայ,  
 Գու բաշերուդ մշտախրոսով ծովուն վրայ:  
 Վազբիդ առջեւ ծով, հովիտ կը նահանջեն,  
 Ամէ՛ն ծագէ քաղցր ժայնքը կը կանչեն.  
 Ամէ՛ն կողմէ հագար բոյրեր ըզգըլթիչ,  
 Ամէ՛ն դիէ՛ հագա՛ր համբոյր, հագա՛ր ճիչ:  
 Այլ գինով եւ զու, արշաւիդ մէջ հրգօր,  
 հենթեցե՛ր եւ, ճա՛ր խնթութեամբ մը այսօր,  
 Կը լեցնէ խրխիւնըդ ծով ու ցամաք,  
 Դուն կը խայտուս, կ'ուսումուս, ու բոց եւ համակ:  
 Կը հասկընամ եւ, խռովքդ խօյակամ,  
 Զի կը ժպտին ահա, արեւն ճանիակամ:  
 Կը բըւրնի հայրենացան հագւոյդ մէջ,  
 Աստուածներէն վառուած սուրբ հուրը՝ անշէջ:  
 Սուրա՛, սուրա՛, ո՛րն է քաղցր արելի,  
 Ծովին կապոյտը՝ թէ լագուրն երկինքի:  
 Լոյս ալիքնե՛րն՝ որ ձեռք ձեռքի կը պարեն,  
 Ռակի շողե՛րն որ կ'իյնան փունջ-փունջ վերէն.  
 Կղզիներն՝ որ կարապներու հանգունակ.  
 Կը լըւացուին ջուրերուն ծոցը յստակ,  
 Ունկնդրելով ալիքներուն ծափն արծաթ,

Միշտ անխընով, միշտ երգում եւ հանդարտ:  
 Յոնիական երազ ափս'նք երջանիկ.  
 Ուր փթթեցաւ Հոմերոսը գերբ ծաղիկ,  
 Քերթնողը՝ կայր, եւ տեսանողը՝ հրգօր,  
 երգովն որուն կը գինովնան դեռ այսօր  
 Ուր՝ անդամեց օր մը, Քաղէսն իմաստուն,  
 Կեանքի մեծ մագն՝ եւ խուզարկուն աստղերուն:  
 Հո՛ն ծաղկեցան Անաբախտն, Հերակլես,  
 Հոն՝ կեանքն եղաւ իմաստութիւն եւ ժըպիտ:  
 Արուեստը հո՛ն բացաւ թեւերն իր շքեղ,  
 Նուրբ գիծերու, խոյակներու մէջ լուսեղ.  
 Անճառ Բանը տիեզերքին ծննաւ հո՛ւ,  
 Ամենագոր աստուածութիւնը «Լողոս»...:

Թըռի՛ր Պեղա՛ս, ծով ու ծըմակ կը խնդան,  
 Կ'արտասուէ վարը, աւերա՛կ Տրոյլադան.  
 Պատմութիւնն արդ փակ դռները կը բանայ.  
 Ջէն ու գըրան կը վայլի ու կը շողայ:  
 Պարիսպներուն վրայ եւ անոնց ոտներուն,  
 Ահեղ գուպարն է դիճերո՛ւն, մարդերո՛ւն.  
 Ահա՛ Հեկտորը դիտապաստ վագրի պէս.  
 Անտրոմաքը՝ արցունքներով հըրակէզ.  
 Պրիամոսը՝ որ դարձեր է խելագար.  
 Յաղթականին կ'աղերսէ արդ անդադար.  
 Աքիլլէ՛սը ահա, համակ գայրույթ, Քէն,  
 Ազամէ՛մոնը՝ փրկացած իր փառէն.  
 Հերոս Բաղաբն՝ որ բոցերու մէջ կ'այրի.  
 Յաղթողներուն կը լուսի կանչը վայրի:  
 Սկամանորը արի՛ւն, արի՛ւն կը հոսի,  
 Էլէնան տուն կ'երթայ առանց Պարիսի...:



Պատմութիւնն ու ժամանակը, միշտ անգուր-  
 Յիշատակին կ'ըսեն եւքիաթն անգուտ.  
 Մինչ հողի՛ն վրայ այս սիրայ ու քաջութեան,  
 Հիմա օձերը կը տուկն, կը սողան,  
 Կը դեզերին լույ մաղտները դեզին.  
 Կը պղծէ թուրքն ալ վեհութիւնը հողին:  
 Երիվա՛րդ իմ, մի՛ դեղեփր դուն, աւրա՛,  
 Հելլեսպոնոսն արեւի՛ն տակ կը շողայ:  
 Քսեթթէսն է իր բանակով բազմամրոխ,  
 Աշխարհները գերի՛ ըրած, ոտնակո՛խ.  
 Քսեթթէսը՝ գոռոզ արժան իրանի.  
 Ելլադայի գիրկը ինկած դարանի.  
 Ելլադային՝ Բաբալոնիկ ու հերոս,  
 Ուրկէ փախչին հորդաներն այս բարբարոս:

Յասունն ահա, արգոնաւորդ ֆայերն՝ որ  
 Նոր արկածներ կը փրմտըռեն ամէն օր:  
 Ոսկեգեղմին երազն է որ կը տամի  
 Ձանոնք, դէպի ջինջ ասփերը կողմիսի:  
 Եւ յաղթական՝ օր մը անոնք կը դառնան,  
 Հելլէն հոգին հարս կը բերեն *Մէտէս*,  
 Մեծ կախարդը՝ սիրոյ, վրէժի վառ հընոց  
 – Երբեմն հեփթաթն էր մարդերուն օրօրոց –:  
 Թըռի՛չք մըն ալ, ու կեցեր եմք մենք հիմա,  
 Վասփորի ջինջ ասփերուն ու հոգի՛ն վրայ:  
 Ի՛նչ անուշ է պայծառ լագուրն երկինքին,  
 Արե՛ւ, արե՛ւ կը լեցնէ մեր հոգին:  
 Բնութիւնը ամէնաւրե՛ք կը ծայտի.  
 Մառ ու ծաղիկ երազի՛ պէս կը փթթի,  
 Ալիքներուն, ջուրերուն հետ կը խօսի,  
 Ազգիկներն ու ազկիոնները միասին:  
 Բլուրներէն դալարագեղ կ'իջնեն վար.  
 Անուրջին բաց թեւերուն վրայ եզեզար,  
 Սիրտհարներ՝ դարձած երազ ու ոգի.  
 Սպասելով որ սիրոյ ցանն ամոքի:  
 Ու քաղաքն՝ որ ծովեզերքին պարսասուն,  
 Մըտիկ կ'ընէ զուարթ ծափը ջուրերուն,  
 Բիւզանդիոնն է, մեծ պոռնիկը պատմութեան,  
 Մերք հեթանոս, քրիստոնեայ, մերք՝ միսիլման:  
 Երբեմն եզաւ ահե՛գ, եզաւ՝ փառաւոր..  
 Միշտ դաւադիր, անկարեկի՛ր, ահաւ՛ր.  
 Իր մակամին խոհարհեցան աշխարհներ  
 Յանուն խաչին տարածեց սուգ ու աւեր.  
 Ու մեղքերուն փրլատակին վրայ տխու՛ր.  
 Թշնամիէն գուք հայցեց ան օր մը, ի գա՛ր:  
 Պատմութիւնը հոս ալ հանգոյց մ'է դժուար.  
 Չարն ու բարին իրար ընկեր՝ անպատճա՛ռ.  
 Գեղեցիկն ու տրեղը միշտ թեւ թեւի,  
 Պայծառ դէմքեր՝ եւ իշխողներ գերք՝ դեւի:  
 Ահա՛ գանն ուր *Փոկաս*, *Չժշկիկ* կը փայլին,  
 Ջայն նուանած էր կրկէսի պարուհին.  
 Եւ կամ բազմած անոր վըրայ տիրաբար.  
 Գինեծախի վաւաշ ազգիկ մը սլխմար:  
 Եւ *Իբիէն*, միանեծան կայսրուհի.  
 Իշխանութեան համար հիւանդ, ծարաւի:  
 Կը հանէ գոյց աչքերն ահա իր գաւկիմ՝  
 Ու կը բազմի հէֆ սուրբերու լոյս շարքին...:  
 Թըռի՛ր Պեգա՛ս, նստութեանց մէջը արդ,  
 Իմաստութեան տանարին դէմքն է հպարտ.  
 Գեղեցկութեան ու արուեստի պերն կոթող.  
 Սրբացուցեր է հաճնարն ուր՝ քար ու հող:  
 Ջոյց հանճարներ՝ *Անթէմիոս*, *Իսիտոց*,  
 Համակ խորհուրդ, դաշնակութիւն ու շնորհ:



Անա՛, ահա՛, Թրակիոյ հողը դալար,  
 Ուր Որփէհոսն օր մը կ'երգէր ու կու լար.  
 Որփէհոսը՝ դարձած սէրէն խելագար,  
 Էջրիտիջան իբ, կը կանչէր անդադար:  
 Անոր երգով կեանք կ'առնէին յեռ ու դաշտ,  
 Կեանքը սի՛րով կ'ըլլար, կ'ըլլար՝ կեանքը հաշտ:

Ողջո՛յն, ողջո՛յն եւ քեզ, պայծա՛ն Ելլագա.  
 Ուր, ծով, երկինք, մանուկի՛ պէս կը խնայ:  
 Լեռնե՛րդ ահա, լուրք, մանուշակ մըշուշով,  
 Ուր կը հասէր կեանքն երազով ու յուշով:  
 Հովիտներու մէջ, զուրիտու եղբի՛ն,  
 Թեւե՛ր կ'առնէր, կը վերանա՛ր երբ հագին.  
 Երբ կեանքը իր լոյս մանկութիւնը կ'ապրէր.  
 Երբ ամէ՛ն ինչ միայն արե՛ւ, եփիա՛ք էր:  
 Ողբ՛սպոսի ո՛վ դու բարձունք վեհախառ,  
 Կ'որոտար Ձեւսն ուր՝ պատգամներն անդադար:  
 Ուր՝ կ'ապրէին գոհ, աստուածները ուրախ.  
 Եւ ամէ՛ն ինչ ե՛րգ էր, նուազ ու խըրախ.  
 Ուր՝ կը բաշխէր Հեպան տարրոս ու նեկտար,  
 Մինչ կը սուրար Հեբայի սայլն ոսկեհար:  
 Քնեայշ Հեռան, երազային ու բրբռում.  
 Վառէր նախանձն Հեբայի բնո՛ց աչերուն:  
 Մշտադալա՛ր աստուածնե՛ր, արդ ո՛ւր էք դուք,  
 Ո՛ւր՝ Աթենասն, Ափրոզիսէն պերճաշուք,  
 Աթենասն՝ որ աստուածաօր ուղեղէն  
 Ծրնաւ իբրև իմաստութիւն լուսեղէն:  
 Այլ չէ՛ք պարեր, երգեր, ժպտում մուսաներ.  
 Հելիկոնն է գափնիներէն որբացեր.  
 Այլ չե՛ն դիւքեր սիրեմաներ դաւադիր,  
 Ուղեւորներն՝ իրենց երգին ունկնդիր:  
 Անտառներն՝ ոգիներ, ձեզ չեմ տեսներ.  
 Եւ Միքիկոսն՝ որ ձեր անէն կը վայսէր.  
 Ձի՛ գեղգեղներ Քիլոսեյան վարդի՛ն վրայ.  
 Մեկ՛սոգիան լոկ կը քայտնի ու կու լայ...:  
 Մեռա՛ն, մեռա՛ն հին աստուածներն երջանիկ,  
 Բայց դեռ կ'ապրին վերածնած գերբ փիւնիկ,  
 Հսկաները գեղեցիկին, մտածմամ  
 Որ գրեցին անմահութեան Ելլագան.  
 Աթէնէն ահա, իմաստութեան բարկ հրնոց.  
 Գեղեցկութեան ու շնորհի մե՛ծ դարբնոց.  
 Վիւ Սոկրատը, Արիստոտել, Պլատոնն ուր  
 Դեմոկրիտ ու Դիոգենէս, Եպիկուր,  
 Կեանքի, մահուան կ'ուզին համզոյցը քակել  
 Մո՛ւրք ճամբայ մ'է մինչ արեղծուածն այս ամիլ:  
 Էսփիղէսն հան, կիրճերու մեծ նուապետ,  
 Իր արսևեստին կը վառէ քանն արփաւետ.

Ու Սոփոկլէս՝ ձեռքը հըրաշք բանալիմ,  
 Ճակատագրին կը մեկնէ չարմ ու բարիմ.  
 Ու Բերթոլմե՛րը, Բերթոլմե՛րը բոլոր,  
 կը տաղերգեն սէր ու երազ, ամէ՛ն օր:  
 Պեզա՛ս, ահա գեղեցկութեան բարձունքն այն,  
 Արեւշաղ Ելլադայի սէզ վըկան,  
 Ուր, հանճարի կոթողները փարուփանդ,  
 Ստեղծագործ արուեստին ձեռքն անվրկանդ,  
 Փշո՛ւր-փշո՛ւր, հողին պարկեր են տրխուր,  
 Բայց կը շողայ հանճարին շողն ամէ՛նուր:  
 Պարթենոնեան ա՛վ մատուցներ, ողջո՛յն ձեզ,  
 Աստուածներ՝ որ դեռ կը նայիք փաղցր ու հեզ:  
 Ո՛վ լուսեղէն սիւներ, փշրած՝ բայց ոտքի,  
 Գեղեցկութեան իբրեւ ցալք ու իբր ոգի:  
 Ո՛վ Աթենաս-Պալլաս, հրգօր, իմաստուն,  
 Աւերակաց մէջ դուն կ'ապրիս մշտաբուն:  
 Աստուածուհի՛, մենք դեռ քեզի կ'ազօթենք,  
 Բու հովանիդ կ'արունէ՛ դեռ մարդը եւք:  
 Ես կը տեսնեմ Պերթոլմե՛րը՝ որ կ'անցնի  
 Պայծա՛ռ ճակտովն իր իմաստուն, հըրաշքի՛.  
 Միջո՛նը վեհ, մազը՝ ճըկուն գիծերուն.  
 Պրոնզի մէջ ձուլած հանճարն իր բեղուն,  
 Փիթիա՛ն ահա, որ երաշք մարմնն ի ձեռին,  
 Ենարիին լոյսը կը հեղու մարմարին:  
 Պուլիկլէամ՝ որ մարմնի ձեւերը պայծառ,  
 Ճանչցաւ ղուտեան օրէնքներուն մէջ անճառ.  
 Պրակտիթէլը՝ խաղազութիւն եւ անդորր,  
 Հագիններու համար երա՛զ ու օրօր:  
 Կ'անցնին դարեր, կ'անցնին մարդիկն անճանաչ.  
 Ակրոպոլը կը մընայ բեղուն անճուռն  
 Գեղեցկութեան եւ հանճարին բնդմնաւոր.  
 Մինչ կ'ընդունի հողն՝ արդարն ու մեղաւոր:  
 Ողջո՛յն քեզի, Ելլադա՛՛ հող հանճարի,  
 Քանի բեկոր մը մարմարէդ դեռ կ'ապրի՛  
 Եկող-գացող սերունդները պիտ' կարգան  
 Շըքեղ անունդ եւ քու անմահ ապագան...:

Պեզա՛ս, Պեզա՛ս, կեանքի կուրին մէջ դաժան,  
 Գեղեցկութիւնը պտակն է փառութեան,  
 կը կանգնի ժամանակին կուրծքին վրայ,  
 Քաջութիւնն ինքն՝ գերք անցրի՛ մը անմահ:  
 Աստուածներու՛, հերոսներու՛ հայրենիք,  
 Ո՛վ Ելլադա, միշտ վերածնար գերք փիւնիկ:  
 Խորտակուեցան բանակները բայրաբոս.  
 Հարուածի՛ն տակ քու բագուկիդ հեք-անոս՝  
 Դարե՛ր, դարե՛ր, յաղթանակի իբրեւ տօն  
 Պիտի ապրի՛ն Թերթոլմե՛ր, Մարտիթօն,

Պիտի կանգնի *Լէոնիտաս* ալ արի,  
 Նուիրումի ամենա բարձունքն աշխարհի:  
 Անա Պեգա՛ս, անպարիսպ բերդն՝ *Մպարթա*.  
 Որ իր կուրծքի՛ն, բազուկի՛ն է լոկ վստահ-  
 իր կոյսերը՝ պարկեշտութեան վերերան,  
 Մինչ Աբէնքի մէջ կը ծախուի *Հեթեքան*:  
 Ազատութիւնն հոս հաւակ կեանք է, ժըպիտ,  
 Երբ Սոկրատը կը խըմէ հոն մուխիմն:  
 Ո՛հ, այսպէ՛ս է կեանքի մըքին օրէնքն հին,  
 Հանճարը միշտ պարտակո՛ւն է ամբոյսին.  
 Մանավրժեմն ալ կը տրուի անխրոսով-  
 Գոյ աւ անգոյ աստուածներն անունով:  
 Ո՛վ Ելլադա, քու մեղքերուդ իսկ մէջէն,  
 Դու կ'երեսա պայծա՛ւ, վընիտ, շող աւ շէն:  
 Այսօր չիկաս դուն երէկի քու փառքով,  
 Նար ամբոյս մը կը խօսի քու անունով.  
 Քու դափնիիդ Խոսե՛ն ան կը վազէ,  
 Անգէտ՝ թէ քու բարձունքդ ամենա երա՛զ է...:

Իրիկունը իր քօղերը մանուշակ  
 կը տարածէ, կը դառնան հօտ ու մըշակ.  
 Զոյգ անհուններ կը խառնուին իրարու.  
 Ծով ու երկինք՝ խա՛ւ մըմունջն է ջուրերու:  
 Հի՛ն աստուածներն իրարու հետ կը խօսին.  
 Հոն մուսները մեղմ կ'երգեն միասին:

Մանուկները իրենց աչքը կը փակեն.  
 Մեծ լուսիւնը վա՛ր կ'իջնէ երկինքէն.  
 Եւ Աստուծոյ աստեղանիւս վրանի՛ն տակ՝  
 Հելլէնը նոր կեանք կ'երազէ ու նոր՝ փառք...:

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

**Կ. ՍԱՍՈՒՆԻ**

**ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ**

**ՄԱՍՆ Զ.**

**ԳԼՈՒԽ Բ.**

**ԽՈՐՀՈՒՐԴԻ ՄԱՐՏԱԿԱՆ**

*Անտառը կը շողշողաք, ծառերը կ'արթննային արեւի ճառագայթներէն: Անտառը կը խօսէր առանձին հրճուանքով, կարծես դուրզուրանք կը շալկէր իրեն ապաստանած կտրիճներուն: Բնութիւնը կենդանութիւն կը ստանար այս հարազատ զաւակներէն, որոնք մեծղի ծառերուն պէս ոտքի էին՝ արեւը ողջունելու:*

*Սարհասն ու Ռուբէն անոնց մէջն էն:*

*Մարի զաւակ, քարի որդի, այս անձնուրացները հետաքրքրութեամբ ու զեղումով կը նային Ռուբէնին, շիկահեր, ամուր կազմուածք, քսանըջորս տարեկան երիտասարդ, վճռական կամքով, ահա, ծովէն ու լեռներէն անցնելով իրենց մէջն էր, զէն ի ձեռին, ազատութեան դրօշին տակ:*

*Ու Ռուբէն մեծ հիացմունքով կը նայէր այս մարտիկներուն: Շարժումներով՝ առիւծային, նայուածքով՝ հարուածոց, գոյնով՝ պղնձէ արձան, ճակատով՝ վճռական: Նոր մարտիկ, հայոց ծոցէն ծնած, հին հերոսական զիւրացիներուն պատկերը կը պարզէին իր հայեացքին:*

*Ու հինաւուրց հերոսներուն պէս, սրբազան անտառին մէջ ժողովի նստած էն, թիկնած մեծղի ծառերուն, սպառազէն, կարծես զէնքով պիտի արձանազդէին ժողովի որոշումները:*

*Ցեառային քարտուղար չունի, զէնքով կը դրէ իր վճիռները...*

*Հարցական, բոլորի աչքերը յառած են Սարհասին: Նոր արշալոյսի մը մտածումը կը յամենար երկաթէ այս մարդոց աչքերուն մէջ:*

*Սարհասին հոգեկան գոհունակութիւնը դէմքէն կը ճառագայթէր:*

*Խօսքը ուղղեց իր զինակիցներուն.*

*— Տղա՛ք, այսօր ուրախութիւն մը կայ սրտիս մէջ: Ծիշդ այսօրուն*

արեւին պէս, հեռու տեղերէ մեղի օդնութեան եկած է մեր դարիս ընկերը: Վասպուրականի պատմախնամտները Ռուբէնը յարժար նկատած են Տարօնի աշխարհի արեւնոտ ազատամարտին: Շատերը, մեր հին զէնքի ընկերներէն, Արարատեան Հայաստանի սահմաններուն մէջ ուրիշ կոտորի մը բռնուած են: Այնտեղի հայութիւնն ալ ազատութեան կարօտ է: Մենք մեր սահմաններուն վրայ ՓՈՅՈՒՄԻԿ խումբեր շատոնց է չենք տեսած: Այս մէկը բացատրութիւն է այսօր, ու ես ուրախութեամբ եւ հանգիստ սրտով ձեռք կը ներկայացնեմ Ռուբէնը, որ այս պահուստ արդէն Դուրան-Բարձրաւանդակի Պատմախնամտու Մարմնի անդամը կը դառնայ: Ազատամարտին եկողը մեր աչքին ու գլխուն վրայ եկած է: Ինչպէս գիտ ճանչցաք երկար տարիներէ ի վեր, այդպէս ալ Ռուբէնը ընդունեցէք:

- Ով որ զէնքը ձեռին մեր այս լեւները դայ, մեր գլխուն վրայ տեղ ունի, - ձայնեցին մարտիկները, - մենք մէկը հուլար կը հաշուենք: Սարհատ ընդհատած խօսքը շարունակեց.

- Ասկէ ետք, կաղմակերպական աշխատանքները, նամակներն ու հրահանգները Ռուբէնի ուսերուն կը ծանրանան: Ես ալ շունչ տանեմ: Միայն մարտական ուժերու զեկամարութիւնը ես պիտի կատարեմ: Ամէնօրեայ արիւնոտ կոտորի մէջ ենք ու չենք դիտեր, թէ ազատութեան արշալոյսը ե՛րբ պիտի բացուի:

Ռուբէն այս նոր աշխարհին մէջ խօսք մը պիտի ըսէր, նոր եկողին խօսքը: Միշտ նախամտածող, զգուշացաւ ձախող քայլ մը առնելէ: Սարհատ Իրին ըսած էր որ մարտիկներէն ոմանք դժգոհ էին արեւնոտ արշալոյսներէն: Վասնդաւոր կը նկատէին: Վերջապէս կծիկին թելը դառաւ.

- Ծննդոյ՜ ընկերներ, փառաց պսակին արժանի ըլլալու զգացումն ունիմ, երբ այս պահուստ Սասունի եւ Տարօնի առիւծներուն մէջ կը գտնուիմ: Անոնց հետ ազատամարտի էլլելը փառքը եղաւ շատերուն, որոնք նահատակուեցան, բայց միշտ ներկայ են մեր հոգիին մէջ: Ազատամարտի ճամբան արեւնոտ է, մեզմէ ոչ ոք դիտէ, թէ վաղը ողջ կը մնա՞յ, թէ կը զոհուի ազատութեան ի ինդիր: Մենք զէնքի մարդիկ ենք: Զէնք վերցնողի գերազանց պարտականութիւնն է կարգապահութիւնը: Այս երկաթէ օրէնքը ձեռք մէջ պէտք է խախտուի: Ատոր մէջն է մեր ուժը, այդ պատճառաւ երդերուն մէջ ձեզ անուանած են Երկաթէ մարդ, Գարե ինգի: Այդ նկարագրին հաւատարիմ պիտի մնաք: Մեզմէ ով որ այս կարգը չպահէ, խտորէն պիտի պատժուի:

Ոմանք ծառերուն բունէն փոփոսցին.

- Լուծի տակ կը մտնենք...:

Սարհատ խումբէ-խումբ անցաւ: Իր տրամադրութիւնը բարձր էր ու վարակիչ.

- Ժամանակ չկորսնցնենք, - ըսաւ, - սուրհանգակներ ճամբայ հանենք, որպէսզի պատգամաւորները ճիշդ ժամանակին տեղ հասնին:

Ռուբէն, որ այդ պահուն Սարհատի կողքին էր, ու կոթնած ծառի մը, հարցուց.

- Ի՞նչ պատգամաւորներ են որ պիտի դան:

- Ռուբէն, տնայէ՛ն, երկու տարի է արեւնոտ կուխներէն աչք չկըրցանք բանալ, ու չկրցանք լրիւ Շրջանային Ժողով մը գումարել: Դուրան-Բարձրաւանդակի պատգամաւորական ժողովն է, որ պիտի գումարենք: Անոնք պիտի դան Ախլաթէն, Հարք-Ապահունքէն, Սասունէն, Պիթիւսէն, Մշոյ դաշտէն, հեռաւոր Տարղիւնէն: Հրայրի ստեղծած կազմակերպութիւ-

նը ծաւալուն է, կազմերը իրարու շղթայուած, դադարն ու անձնագոհ: Մենք եթէ կրցանք դուրս պահել մինչեւ այսօր, այդ կազմակերպութեան շնորհիւն է:

Ռուբէն ողևորուած՝ դործի սկսակ: Երկու օրուան ընթացքին քանի քանի մը հարիւր երկտող-հրահանգները պատրաստ էին, կնքուած Սարհատի կնիքով:

Ու սուրհանդակները ձեռքէ-ձեռք այս թղթիկները տեղ պիտի հասցընէին: Ժողովը տեղի պիտի ունենար երկու շաբաթ յետոյ, Ս. Կարապետի անտառին մէջ:

Շրջանները, օրը օրին, այդ հրահանգին կը սպասէին:

❖

Մթնոլորտը Հրայրի շունչով կը թրթուար:

Ողբալագանը մօտ էր, իսկ անտառը Ֆեոսայիներու զէնքերէն կը կայծ-կըլտար:

Որքա՛ն հերոսներ անցած էին այս ճանապարհէն դէպի Բարձրաւանդակ:

Որքա՛ն հաւատք ներշնչուած էր Տարօնի ժողովուրդին Ուրուականի կրակոտ խօսքերէն:

Որքա՛ն ուխտեայիներ ինկան ազատութեան ճանապարհին, Ողբալագանի անտառէն անցնելով:

Այս պատմութիւնը կարմիր արիւնով դրուած է Սասունի եւ Տարօնի ժողովուրդի յիշողութեան մէջ եւ սերունդէ-սերունդ կը մնայ իբրեւ անջինջ արձանագրութիւն:

Սարհատ եւ Ռուբէն, շրջապատուած հինաւուրց Ֆեոսայիներով, Հրայրի ներկայութիւնը կը զգային իրենց կողքին:

Հոն հասած էին Ողբալագան գիւղի գործիչները: Սարհատի կողքին նստած էր Հրայրի եղբայրը, Մանուկ Լազարեան, եւ Հրայրի գործակից Սարգիսը եւ Պողոսը: Անոնք կը խօսէին հին օրերէն: Ու Հրայրը հոն էր, անձնորոգաններուն մէջ, կարծես կը խօսէր բոլորին:

Սարհատ այդ ապրումն ունէր, այդպէս էր անոր շարժումները:

- Հրայրը ըսաւ...:

Ու պատմութիւնը անցեալը ներկային կը միացնէր, անտառը հաւատքի խորան մը կը դառնար:

❖

Գիշերն իր ծոցին մէջ առած էր Մշոյ դաշտը:

Սարհատ ճամբու դրաւ այցելութեան եկած այս հին գործիչները:

Անտառը կը հեւար նախորդ օրերուն պէս, բայց Սարհատի աչքը դուրսն էր:

Մոկուկի Լազարը քովիններուն.

- Տղա՛ք, ճամբայ կայ մեր առջեւ, Գէորդի աչքը ծառերէն տնդին կը նայի:

Պօռքը գերջացած չէր, երբ Սարհատի ձայնը լսուեցաւ.

- Տղամ'ք, պատրաստուեցէք, դաշուը պիտի ելլենք...

Ռուբէն Հարցական նայեցաւ անոր:

- Այլ Հոս չենք կրնար մնալ: Չօրքերը կրնան շարժիլ մեր վրայ: Լաւադոյնն է որ մենք շարժական դառնանք եւ ուշադրութիւնը Ս. Կարապետի շրջանէն հեռացնենք: Թող մեզ փնտոնն դաշտին արևելքը, նոյնիսկ հսկողութեան տակ առնեն Գրգուռն ու Նեմրուքը: Մեր արշաւանքը շփոթ կը ստեղծէ պինուորական կայաններուն մէջ, ու այն ատեն մենք կը վերադառնանք Սօսեայ անտառը եւ Հանդիսա սրտով մեր ժողովը կը բանանք: Ու ճամբայ ելան Սարերու Ալանի ոճով:

Սարհատի դիշերային արշաւանքը ինքնին գլխիկ տեսարան մը կը պարզէր: Հեւքով կ'անցնէին շրջանէ-շրջան, ու ճամբու ընթացքին, երբ թուրք եւ քիւրտ անցորդներ հանդիպէին, դողի կը թանուէին: Խոնարհութեամբ կը մօտենային եւ կը Համբուրէին Սարհատի ձիուն առպանդակները, ու անհուն շնորհակալութեամբ կը հեռանային սր կեանքը իրենց խնայուեցաւ:

Ռուբէն այս արշաւանքին մէջն էր:

Ձիւտոր են:

Դող մը կ'անցնի դաշտի կեդրոնէն դէպի Վարդենիս: Սարերու Ալանն էր որ կ'անցնէր:

Ու Ռուբէն իր յուշերուն մէջ կը գրէ.

«Հրաշայի է Գեորգի հետ մեծայի դառնալը: Այս փոքրահասակ մարդը գերբնական ուժով կը լեցնէ իր ուղեկիցները: Ոչ տիտադորական ձեւեր ունի, ոչ ճառ, ոչ խօսք: Գուցէ «Գեորգ Չավուշ» անունի մէջ է այդ հմայքը, բայց ոչ, այդ փոքր մարդը իր շրջապատին կը մերշնչէ հանդարտութիւն դէպի վտանգը եւ անվիճելիութիւն...»

«Իժուար է բացատրել Գեորգի հմայքին գաղտնիքը, բայց փաստն այն է, որ միտայիմ ամօր կողքին ապստամբութիւն եւ հանգիստ կը գգայ եւ համոզուած է, թէ բախտը իրեն չի դաւեր, որքան ատեն Գեորգի գլուխը սաղ է: Անոր կողքին եղողը բաւում բազմամբ ունի ծանր վտանգի մէջ իյնալ եւ ազատալի փառքով: Այդ համեստ մարդը կարծես փառքի աղբիւր էր եւ հաստատուն յեմարան թէ՛ մերկայի եւ թէ՛ ապագայի համար: Ես իմէս ալ երջանիկ էի, որ Գեորգի հետն էի»...

Փետայիներու ձիւտոր խումբը իր ճամբաներու վրայ Հաւատարիմ պահակներ ունէր: Կէս գիշերին, կամ արշալոյսին կը մտնէին դիւղի մը թաքտոցը: Կոմիտէն եւ մարտիկները Սարհատի տեսութեան կու գային, հրահանգներ կը ստանային: Սարհատի հանդիպելը հրճուանքով ու Հպարտութեամբ կը լեցնէր դազանի կազմակերպութեան Հոգին:

Անոր անցքին լուրերը կը թուէին թաս դիւղէն, Հոսեկէն, Վարդենիսի կողմերէն: Քանի մը ջրտական աղաներ ստաս ստացած էին, ուրիշները Հպարտ էին որ Գէօր Օղլին իրենց օճախը յարգած էր:

Մուք ճամբաներէն անցած պահերուն, դիւղերուն մօտիկ անցքերուն վրայ երբեմն թրքական զինուորներ կ'երևէին: Ելմեցնող Հարուածէն, տնոնք դիակներ թողած՝ զինուորական կայաններ կ'ապաստանէին: Հին օրերու վախը արտերուն մէջ, ոչ ոք մտքէն կ'անցընէր դէժ կենալ փոթորկոտ կայծակին:

Ու զօրքերու տեղափոխութիւններն ու շարժումները սկսած էին դաշտի արեւելեան շրջաններուն մէջ, մինչեւ Ախլաթ:

Անոնք թող այն կողմերը որոնեն Սարերու Աւայանը, մենք վերազառանանք Գառնէն գիւղը, Մուշ քաղաքի քթին տակ:

Արշալոյսը հաղիւ բացուած՝ խուճբը հաւատարիմ ընկերներուն հիւրն է: Որոնումը հեռու շրջանները կը խոռովէ: Ով իր մաքէն պիտի անցնէր, թէ Սարհատ, այդ պահուն, Մշոյ թրքական զօրանոցին մօտիկ, Գառնէնի կոմիտէի հետ զրոյցի նստած էր:

Յերեկը հանդիստի պահն էր Տետայիին: Գիւղի կոմիտէն ու տեղական մարտիկները անսահման հետաքրքրութիւն ունին: Զրոյցի նստած են արշաւախումբին հետ:

Ռուբէն կը լսէ անոնց, դրի կ'առնէ առաջարկներն ու գործօծ անունները:

Սարհատ քունէն արթնցած, հանդիստ նստած է: Կը ձանձրանայ: Թրքական զօրանոցը մօտ է: Կեանքին հետ խաղալու անհանգստութիւնը իր հոգին կը խոռովէ:

Տետայիներէն ոմանք իրենց կատակներուն անցած են: Ռուբէն չըրջանի գործերով հետաքրքրուած է եւ տեղական գործիչները տեղեկութիւններ կու տան, եռանդով իրարու բերնէն խօսքը իյնելով:

Սարհատ անզգալարբար թաքստոցի քովի ախոռը մտաւ: Իր ձին արդէն թամբուած էր ու պատրաստ:

Փոթորիկը որ կողմէն փշեց, մարդ չզիտցաւ: Բայց Սարհատ արդէն ձիուն վրայ էր եւ Գառնէն գիւղէն դուրս կ'ելլէր դէպի թրքական զօրանոցները:

Ժամը 11-ն էր, կէսօրուան մօտիկ:

Թրքական վաշտերը բաց տարածութեան վրայ մարզանքներ կ'ընէին: Քէօսէ Պինպաշին եւ իր սպայակոյտի անդամները աթոռակներուն վրայ նստած էին ճանապարհին մօտիկ, եւ կը հսկէին մարզանքներուն:

Սարհատ ուղղակի անոնց առջեւէն անցաւ: Զինուորական բարեւտուաւ ու անցաւ...:

Սպաներէն ոմանք ուշադրութեամբ նայեցան այդ ինքնայատուկ մարդուն, որ զինուած էր, ու այդպէս համարձակ կ'անցնէր զօրքերու ընդմէջէն:

Սարհատ արդէն հասած էր թրքական թաղը եւ կ'ուղղուէր դէպի ձիմել աղալի տունը, որ Մուշի եղերային այդ մասին վրայ շինուած էր: Ձիմել աղան անհաշտ զրգոյիլը կը մնար Մուշի թրքական երեւելիներուն մէջ: Անոր խօսքը մէկ էր.

- Տետայիներու արմատը պէտք է կտրենք...:

Սարհատ մօտեցաւ դրան: Զիուն վրայ մնաց: Շուրջը չափեց, ու դուռը փակուաւ: Քովի պատուհանէն կին մը քիթն ու բերանը ծածկած՝ պատուհանը բացաւ:

- Քոյրի՛կ, ձիմել աղան տո՞ւնն է:

- Է՞ֆէնտի, հիմա դուրս եկաւ շուկան:

Սարհատ թատ մը ջուր խնդրեց: Կինը անմիջապէս ջուրը ձեռքին, դուռը բացաւ եւ տուաւ կանգնած ձիաւորին:

Սարհատ ջուրը խմեց, շնորհակալութիւն յայտնեց կնոջ եւ ձիուն գլուխը դարձուց.

- Քոյրի՛կ, երբ ձիմել աղան տուն գայ, անոր ըսէ՛ որ Գէորգ Զաւուրը եկաւ իրեն բարեւ մը տալու: Բարի մնաք...:



Մարհատ եկած ճամբայէն դարձաւ: Զօրքերը դեռ մարդանքը կը շարունակէին:

Երբ Մարհատ հեռուէն երեւցաւ, սպաներէն մէկը մօտեցաւ Քէօսէ Պինպալիին:

- Փաշա՛, այս անցորդը որ քիչ առաջ բարեւեց եւ անցաւ, Ֆինտայիի կը նմանի, ի՞նչ ընենք, ո՛հա՛ կը վերադառնայ:

Քէօսէ Պինպալիին պաղ նայուածք մը զարձուց դէպի զեկուցող սպան:

- Եթէ այս մարդը Ֆինտայի է եւ համարձակութիւն ունի այս հազարաւոր զօրքին մէջէն անցնելու, հերոս մըն է, անոր ձեռք տալու չէ, դուք ձեր զորքին նայեցէ՛ք:

Մարհատ անցած ատեն, կրկին զինուորական բարեւ տուաւ, ու թրջական զօրքերու հրամանատար փաշան, բարեւը առաւ յարդանքով:

Մարհատ, որ Զրիկ գիւղի ճամբան բռնած էր, ձորակէն ետ դարձաւ եւ քանի մը վայրկեանէն Գառնէն մտաւ:

Երբ ախոռին մէջ իր ձին կապեց ու դուրս կ'ելլէր, իր զինակիցներէն չըջապատուեցաւ:

- Ո՛հր էիր, ժամ մըն է քեզ կը փնտռենք: Ռուբէն շատ մտահոգ է:

- Մուշ պացի, ձիմեկ ազային բարեւ մը տուի, հա եկայ, ի՞նչ կայ մտահոգուելու:

Արդէն թաքստոցն էին: Ռուբէն այլայլած Մարհատին կը նայէր: Քեռի Մակարն ու Զօլօն մրժոսցին:

- Փորձանք կը փնտռէ, չենք հասկնար, թէ ի՞նչ կ'ուզէ Գէորգը...

Ֆինտայիները իրարու երես կը նայէին հարցական:

Մարհատ ժպիտը դէմքին, կատակը չըթոճեցին, ըսաւ:

- Քէօսէ Պինպալիին տեսայ, զինուորները մարդանք կ'ընէին, զինուորական բարեւ ալ փոխանակեցինք: Այլ ի՞նչ մտածեցին, չեմ գիտեր:

Զինակիցները շարժեցին: Ռուբէն մտահոգ մարտիկներու դէմքին կը նայէր: Բոլորն ալ կը զգային, թէ Մարհատ կեանքին հետ կը խաղայ, եւ ցոյց կ'ուզէ տալ, թէ ամուսնութիւնը իր մարտական գործերուն արդեւէ մը չէ:

- Տղա՛ք, պատրաստուեցէ՛ք, դիշերը ճամբայ պիտի ելլենք...:

Մեհեհական սրբազան անտառը անոնց կը սպասէր:



Ֆինտայիները զրկախառնուած էին սօսիներուն հետ: Անձեռաբացներու հաւատարիմ պահակները, այս ճատերն էին տարիներէ ի վեր:

Մարտական խորհուրդի ի՞նչ յիշատակներ կապուած էին Սօսեաց անտառին: Ու ահա, կրկին հոն են ազատամարտիկները, Դուրան-Բարձրաւանդակի Պատգամաւորական Ժողովին համար:

Մարհատ յուզումով կը յիշէ իր պատկազրութիւնը: Ու հիմա, Վարդգէսն ունի Սուսամի զրկին մէջ...:



Երեկոյեան մութը կ'ելնէր անտառին վրայ, ու խորհրդաւոր պահակները անցքերուն մօտիկ կը հսկէին, սպասելով թուշուի ճիւղին, կամ նշտ-

նախօսքի մը, այս ու այն կիրճերէն հասնող պատգամաւորները ընդունելու:

Գիշերն անուշ էր, գիշերը խորհրդաւոր:

Գաղտնի կազմակերպութեան ճանապարհները բաց էին ու լուսաւոր, երբ գիշերը կը տիրապետէր:

Ու ահա, անտառը խլրտոցով կը լեցուէր, պահ առ պահ: Պատգամաւորները Հայ Յեղափոխութեան խորանը կը մտնէին հեջով, հաւատքով, վճռական, ոմանք ձիաւոր, ուրիշները ստքով, բռնաւոր քանի մը օրուան պաշարով, զինուած հրացաններով, կամ պառ զէնքով: Մութին մէջ, ծառերու կողքին, մարդկային հասակներ կը բարձրանային:

Մարդկային անտառ...:

— Բարով տեսնե՞ք, պարո՛ն Սարհատ, — ու թուղթ մը կ'երկարէին անոր:

Մոմի աղօտ լոյսին տակ՝ Սարհատ եւ Ռուբէն պատգամաւորները կ'ընդունէին իրարու ետեւէ: Առաջին եկողները արդէն ծառերուն ձուլուած, իրենց ձիերուն կը նայէին, ուստիք կը պատրաստէին: Խորանը իրենց տունն էր, ու իրենք ամէն ծակ ու ծուկը դիտէին:

Անտառը, այդ գիշեր, բնութեան խաղաղութիւնը չապրեցաւ: Տերեւներու զփփուածային երաժշտութիւնը խեղդուած էր մարդկային եւ կենդանական խռովայոյց ձայներուն մէջ:

Անտառը ապշահար կը նայէր իր ծոցին մէջ կուտակուող մարդկային անտառին:

### Ճ

Նոր առաւօտ մըն է, որ կը բացուի մեհնական անտառին վրայ: Արեւի ճառագայթները թափանցած են ծառերէն ներս, ու կարծես կանթեղներու լոյսն է, որ կը ճառագայթէ տաճարի մթաստուեր անկիւններէն:

Պատգամաւորներն արդէն ստեղծ վրայ են, լոյս աչքով Սարհատը տեսնելու համար: Ու Սարհատ խումբէ-խումբ կ'անցնի, կը բարեւէ, կը կատակէ, ոմանց ուսերուն կը դպի, հեղեղ մը զգացում ու ապրում տարածելով իր շուրջը:

Ռուբէն զմայլանքով ու վերլուծական մտածումներով կը դիտէ անօթանը: Երկու հարիւր քսան պատգամաւորներ, այլազան տարսզներով, այլազան զէնքերն անոնց վրայ: Կրակ ու կայծ կայ անոնց այգիներուն մէջ, մտաւորութիւն կայ անոնց շարժումներին, ու վարտականութեան դիտակցութիւն՝ անոնց ընթացքին մէջ:

Հոն կը փայլին Մասունցիներուն մետաքսէ գլուխները, Ասդիկ Մշոյ դաշին կարմիր արաղիները անտառը կը դունաւորեն: Քիչ մը անդին, քրտական տարազը Հազոն եւ Ֆարդինը փոխադրած է ժողովի: Հոն ծառերուն մէջ կը բարձրանան Քոյրսները, որոնք եկած են Բուլանուխ-Մալազ-կերտէն: Ու ասոնց բուրբիւն մէջ, շրտ կիներ իրենց ներկայութիւնը կը զգացնէին, գրեթէ բուրբիւն ծանօթ ու վստահելի, գործի օրերէն վաւերական:

Այս գոյնզգոյն այլազանութեան մէջ ծանօթ դէմքեր են բուրբիւն ալ: Զէնքէն կոշտացած ուսեր, բանտերու երկաթէ կապանքներու սպիներ, կոխներուն մէջ ճեղքուած ճակատ մը, իրարու կը ձուլուին, մէկ մարդ:

մէկ ուղի, մէկ դիմադրի կ'արձանացնեն այս մեհնական անտառին մէջ, անձնագրի դաշնակցական մարտիկի գիմադրիծը:

Ազատամարտի ելած բանակն էր, որ Համախմբուած Հոգեղէն այս խորանին մէջ, անտառը դարբնոցի մը կը վերածէր, ալյոտութիւնը կուսակցութիւնը կտմբոյ՛րէր:

Ռուբէն Հարցական կը նայի Սարգատին:

Սարգատ ձեռքը Ռուբէնի ուսին, կը ժպտի: Պատգամաւորներու ղէմքէն ժպտալ կը ճառագայթէ: Սարգատ. Ասլանի կողքին կեցած են, փոսոց պատկի ճամբուն վրայ:

- Ինչպէ՞ս ժողով պիտի ընենք, Սարգատ, ծառ ու մարդ իրար խառնուած են:

- Մի մտահոգուի՛ր, Ռուբէն, բոլորն ալ փորձառու գործիչներ են, իրենց գործը գիտեն:

Ճիշդ այդ պահուն, Սարգատին մօտեցաւ երկար քօլոսով, բարձրահասակ եւ նրբակազմ պատգամաւոր մը.

- Պարոն Սարգատ, տղւքը պատառ մը Հաց ուտեն, պատրաստ կ'ըլլան ժողովի սկսելու:

- Մի՛հրա՛ն, տղոց յայտնէ որ ժողովը շուտով կը բացուի, դանդաղօրէն անօթի պիտի մնայ:

Մի՛հրա՛ն քայլէր դէպի խմբուած տանեակները: Անոր կարծ խօսքը խլրտուն շարժում ստեղծեց Համախմբուածներուն մէջ:

- Սարգատ, Տարօնի ո՞ր շրջանէն կու դայ Մի՛հրա՛նը, - Հարցուց Ռուբէն:

- Տարօնին մի նայիր, Բուլանուխի ծանօթ ուսուցիչն է, Հրայրի Հացուցած վտանգի գործիչներէն մէկը: Բոլորը գլխին, դաշույնը դօտին մէջ, Հասանանցի ջրտական ցեղապետի մը պէս շրջանէ-շրջան ազատօրէն կ'անցնի:

Սարգատ Ռուբէնին ցոյց տուաւ դիմացի ծառին տակ շարչի Սիմօնը, իր իշուկին քով կեցած, տղաներուն գլխիկի թուղթ կը բաժնէր:

- Հիմա պիտի Հարցնես, թէ այս շարչին ի՞նչ գործ ունի այս ժողովին մէջ:

- Հարցումը լեղուիս վրայ էր: Անշուշտ կապ մը ունի, բայց իրականութիւնը այս շրջանի զաղտնի ծրարներուն մէջն է, - խոհեմաբար լուսաւ Ռուբէն:

- Սիրելի Ռուբէն, Սիմօնը մեր ամէնէն պազտի գործիչն է, որ ամէն տեղ մուտք ու ելք ունի եւ օրին լուրը մեզի կը Հացնէ սուրճանգակներու միջոցաւ: Ասկէ աւելին, պազտի մնայիք տնարեկումները Սիմօնի վզին փաթթուած են...:

- Գործը կարգաւորուի նոր աշխարհ մը: Ուշադիր ծանօթութիւն Հարկաւոր է, - մրմոցեց Ռուբէն:

Արամ մօտեցաւ եւ լուսալ Հացի մէջ փաթթուած խորոված տուաւ Սարգատին եւ Ռուբէնին:

- Պատառ մը բա՛ն կերէք, մեր գաղանները կրակի պէս ամէն բան լափեցին:

Ռուբէն աչքը դարձուց պատգամաւորներուն կողմը: Խմբակ մը նըստած, ուրիշ տանեակները ծառերուն յենած՝ անպարսնքով կ'ուտէին ու երբեմն ալ իրարու ձեռքէն պատանները կը խլէին՝ քրքիլ առաջացնելով: Սարգատ եւ Ռուբէն Հաղիւ քանի մը պատառ կ'ըլլած էին, երբ անդին,

պատգամաւորներ ծառի տերեւներով իրենց բերանը սրբած՝ ձայն բարձրա-  
ցուցին:

- Պարոն Սարգատ, մենք պատրաստ ենք:

- Ապրի՛ք, այդպէս կարգապահ եղէք, օրինակ առէք այս ծառերէն,  
որ կատարեալ զինուորի մը պէս բարեւի կեցած են: Դէ՛հ, հաւաքուեցէք:

Քանի մը վայրկեանէն ծառաստանը ինքնամփոփ ժողովարարի մը  
վերածուեցաւ: Դէ՛մքերը լուրջ, աչքերը վտրվումն, հետաքրքրութիւն եւ  
պատասխանատուութիւն իրենց կեցուածքին մէջ:

Հոն հասաւ Վարդան վարդապետը, սպիտակ ձիու վրայ, թիկնեղ  
ծերունի, ճերմակ մօրուքը մինչեւ գետին իջած, վար եկաւ ձիէն, ողջու-  
նեց բոլորը, ջիջ մը խօսեցաւ Սարգատի եւ Ռուբէնի հետ, ու սաքի կանգ-  
նեցաւ, օրհնեց ժողովը եւ յայտնութիւն մաղթեց:

Ժողովը խոր լուռութեամբ Սարգատի խօսքին կը ուզասէր:

Այդ պահուն, անտառի տերեւներու շնչոցը յստակօրէն լսուեցաւ:

Ժողովի բացման երաժշտութիւնն էր այդ...:

Սարգատ այդ խոր լուռութեան մէջ սկսաւ իր խօսքը:

- Մա՛հը արհամարհելով՝ ազատութեան ճամբան բռնած ենք: Շատ  
արիւն քամեց այս ժողովուրդը: Ի՞մ շարք մը ընկերներու բաղձանքն է որ  
ատեն մը հանդիստ թողունք չըջանները եւ ուժեղացնենք մեր ներքին կազ-  
մակերպութիւնը: Ահա, դուք հոս էք, Դուրան-Բարձրաւանդակի գործիչ-  
նե՛ր, որպէ՛սդի մեր մարտական խումբերը կարենան գործ մը տեսնել, մեր  
բազմաթիւ չըջանները կազմակերպուած պիտի ըլլան: Այդ կազմակերպա-  
կան գործերով պիտի գրադի Ռուբէն: Մեր մարմինները այդ Հրահանգնե-  
րը օրը օրին պէտք է կատարեն: Շատ ծանր գործեր կան մեր ուսերուն:  
Ժողովի ընթացքին կարճ ու կտրուկ եղէք: Անտառային այս ժողովն ալ  
մարտական-ճեղատայական բնոյթ ունի: Կրնայ պատահիլ, որ մեր ժողովը  
չվերջացած՝ մենք ընդհարում ունենանք թշնամիին հետ: Դործի անցէք,  
խնդիրները դրէք եւ շո՛ւա լուծեցէք:

Ու ժողովը սկսաւ:

Ի՞նչ չկար օրակարգին վրայ, ժողովուրդի Ֆիզիքական գոյութիւ-  
նը, զէնքի պաշարը, սոցալմթերքի անհրաժեշտութիւնը, բանտարկեալ-  
ները, զբոսական հարցը, աւելորդ մարտիկները կողկաս զրկելու հարցը,  
Խնուան ու Մայրազկէրաբ զօրացնելու անհրաժեշտութիւնը, չըջաններու նոր  
բաժանումը, Փետայական խումբերու ղտտաւորումը, Սասնոյ բարձունք-  
ներուն վրայ նոր գործողութեան մը անհրաժեշտութիւնը, մուհանճիւրներու  
խնդիրը (չէրբէջ), ջերտ եւ այլ տարրեր, կառավարութեան կարգադրու-  
թեամբ, եկած եւ լեցուած էին հայ գիւղերուն մէջ եւ բունի տիրացած հո-  
ղերուն), վանքերու պահպանումը: Այս բոլոր հարցերը գործնական լու-  
ծում պիտի գտնէին:

Նրեք օրերէ ի վեր անտառը հայոց խորհրդարանը դարձած էր: Հար-  
ցերուն կը մօտենային ճակատէն, մտածումն ու մտահոգութիւնը բիւրե-  
ղացած:

- Էտպէս չեղնի...:

Եւ չէր ըլլար:

- Էդպէս լաւ է, կրնանք ընել:

Ու այդպէս ալ կ'արձանագրէին: Թուղթերուն վրայ հակած էր Ռու-  
բէն ու գրի կ'առնէր որոշումները: Անոր կ'օգնէին երեք ուսուցիչներ, չը-

րահանգները կ'ընդօրինակէին թղթիկներուն վրայ, զորս Սարհատ եւ Ռուբէն պիտի ստորագրէին:

Միակ խնդիրը, որ քննութեան նիւթ չեղաւ՝ նիւթական-հաշուական խնդիրն էր:

Դրամ չունէին, որպէսզի հաշիւ ունենային: Ամբողջ ժողովուրդը մը իբր ունեցածը կը զոհէր հայ յեղափոխութեան համար, մարտիկներն ու զործիչները անձնական զոհողութեամբ զործի վրայ էին, հազարաւոր բանասրկեաները ժողովուրդի սիրելիներն էին, ու անոր զոհողութեամբ շունչ կ'առնէին բանտերուն մէջ: Կը գինուէին՝ իրենց եզն ու կովը ծախելով:

Անձնագրութիւնը որեւէ մէկուն հաշիւ տալու պարտաւորութիւն չունէր...:

Ու այդ մեծ ժողովը որեւէ հաշուական խնդիր չունեցաւ:

Ազատագրական շարժման այս նկարագիրը, որ ինքնաշարժուող էր Գուրան-Բարձրաւանդակի շրջանին, մեծապէս ազդեց Ռուբէնի վրայ:

Յեղափոխական նոր ծովու մը մէջ կը լողար Ռուբէն: Այդ ժողովին մէջ իսկ Ռուբէն կը դառնար Տարօնի եփուած զործիչը:

Սարհատի դէմքին ժպիտ ու լաւատեսութիւն կար, իսկ Ռուբէնի դէմքը մտածումներու եւ դատումի արտայայտութիւնը ստացած էր:

— Ռուբէն, կը տեսնես, թէ ինչպէս ժողով կ'ընեն այս կապը կարածները...:

— Սարհատ, այս կազմակերպութիւնը հոգիս կը պօրացնէ: Հաւատք կայ ազաներուն կարճ խօսքին մէջ: Իրականութիւնը լրիւ կ'ըմբռնեն, եւ ինչ որ ուշագրաւ է, զործի ծանրութիւնը իրենց ուսերուն կ'առնեն եւ ոչ մէկ զոհողութեան տալիս կանգ չեն առներ:

— Ռուբէն, կը մտնես ժողովուրդին մէջ եւ աւելին կը տեսնես: Ազատութեան բաղձանքը, այս ժողովուրդին քով, թոնիրի թէ՛մ կրակի պէս է, չի մարեր: Այդ թոնիրներէն, թարմ հացի պէս, միշտ եփուն երիտասարդներ կը հասնին...: Յոյս ունիմ որ մենք ալ, օր մը, ազատութեան կը հասնինք:

Ռուբէն Հին դարերու Մամիկնեաններու անցքը կը տեսնէր այս անտառէն...:



Ժողովը վերջացած էր:

Պատգամաւորները, խումբ առ խումբ, կը բռնէին ճանապարհը, տարրեր ուղղութիւններով: Երեք հարիւրէ աւելի զործիչներ պատասխանատու հրահանգներ ստացած էին, գանազան շրջաններու մէջ զործելու, ու կազմակերպութիւնը զօրացնելու: Ամբողջ ժողովուրդը ընդշատակեայ զործին լծուած էր:

Պատասխանատու Մարմնի անդամներէն Սարհատ եւ Ռուբէն փախրտական ազատ զործիչներ էին: Գեղամը Կորոտի (Մուշ քաղաքը) Կոմիտէները պիտի վարէր եւ արտասահմանի թղթակցութիւնները պիտի կատարէր: Յետուն (Վարդան վարդապետ) թուրքերու եւ քիւրտերու հետ յարաբերուած ծանր պատասխանատուութիւնը իր վրայ վերցուցած էր:

Գործիչ պիտի ղրկէին մինչեւ Տիգրանակերտ, ուր վարդապետ բան-

տարիուած կը մնար: Մարդ սիրտի հասցնէին Կարին, չըջանը վերակազմելու:

Գործունէութեան լայն աշխարհ մը, իր կենտոտ խնդիրներով:

Վերջին խմբակը երբ անտառէն անցաւ դէպի դաշտը, Սարհատ դարձաւ իր գինահիցներուն:

- Տղա՛ք, հիմա, կրկին միակ ենք, քաշուինք անտառին խորքը, քանի մը օր հանդիստ ընենք, ցրուելէ առաջ: Վարդան վարդապետը քանի մը ոչխար խորովածցու տրամադրած է: Տարօնի վանքերը ազատագրական շարժման հեան են, մեզի պէս ֆետայի:

- Վարդապետը Վահագնեան ջուրմի մը կը նմանի, - ըսաւ Ռուբէն, - կարծես հայոց պատմութեան ոլորտներուն մէջ ըլլար:

- Տնաշէն Ռուբէն, Տարօնցին, դեռ այս օրերուն, Վահագնեան տաճարին ուխտի կու գայ: Ս. Կարապետը իրենց համար դեռ Վահագնի ազգային ջրմատունն է:

- Սարհատ, իսկապէս ժողովուրդը այդպէ՞ս կը մտածէ եւ կը զգայ:

- Ռուբէն, այս ժողովուրդի հողինն թելը հին օրերու փառքէն կըտրած չէ: Սուրբ Սահակի դերիզմանին ուխտի կ'երթան եւ անոր հետ կը խօսին, կը պահանջեն, որ ոտքի ելլէ եւ իրենց խնդրանքը կատարէ: Ս. Կարապետ կու գան ու կը վիճին Ս. Գրիգոր Լուսաւորիչին հետ՝ թէ ինչո՞ւ իրենց ձեռքէն զէնքերը առաւ եւ իրենք այսպէս դերի մնացին թշնամիին ձեռքը: Այս ժողովուրդը միայն ա'յն ատեն խօսք կը լսէ, երբ իր պաշտութիւնը դռնէ:

Ռուբէն լուռ էր, մտածումներուն մէջ թաղուած:

Ֆետայիները արդէն համախմբուած էին:

Սարհատի նայուածքը մէկը կը փնտռէր.

- Միտա՛ք, ո՞ւր ես կ'ծկուած, ձայնդ չենք լսեր:

- Պարո՞ն Սարհատ, զործի ժամանակ իմ ձէնս կարուկ է:

- Դէ՛հ, ձայնդ թո՛ղ:

Միտաք ձեռքը ականջին, կ'երգէ վերացած յուզումով: Ժողովին մասնակցող ընկերներուն հաւատքն ու անձնազօր հռանդր երգիչի շնորհուն մէջ մասնաւոր իմաստ մը կը ստանան: Հերոսական արարքները կը տողանցեն եղանակներու ընդմէջէն: Աղբիւր Սերոբ, Անդրանիկ, Հրայր եւ Սարերու Աւրան կ'անցնին հայոց լեռներէն...

Ճիշդ այդ պահուն Սարհատ կը պոռայ.

- Ձայնդ կարէ՛, Միտա՛ք:

Սարհատ իր անուան յիշատակութիւնը չէր հանդուրժեր:

Անդէն Փեթարի Կիրակոսը երգի պատառը առաւ Միտաքի բերնէն եւ ցնցեց անտառը:

Սարհատ ուրախ տրամադրութեամբ խումբէ-խումբ կ'անցնի: Եր-պիչները կը զգան, թէ պարի պահը ժօտեցած է ու պարի եղանակի նախա-մուտը կը մրմնջեն: Սարհատ լաւ պարողներուն աչք ըրաւ: Երբ անոնք ոտքի ելան, պարի եղանակը տաքցաւ ու գինավառ պարողները շարժեցան...

Սարհատ, կարմիր թաշկինակը ձեռքին՝ պարախումբին գլուխն անցաւ: Պարողներու ոտքի տակ անտառը կը թնդար: Ֆետայիները պատե-րազմի պարն էր, որ կը պարէին: Փամփուշտներու պապղումը կը ճառագայթէր արեւի թափանցող շողերուն տակ, կարծես հսկայ ջառ մըն էր, որ անտառին մէջ կը դողար:

Ռուբէն ծառի մը տակ քաշուած, ինքնամփոփ, Տարօնի մարտական կեանքի անօրինակ հրճուանքը կ'ապրէր:

Փիլիսոփայ Սահակի ձայնը կը լսուի անդիէն.

— Պարեցի՛ք, այս օրը մերն է, իսկ վաղը... Ուր որ կարաւ կապը...:

Պարէն ետք, արիւնթաթախ խորովածը կ'ուտեն: Ու խմբակները ծոռերուն տակ կը քաշուին հանգստանալու: Քանի մը օր անտառին ապա-  
ւինած պիտի մնան, մինչեւ որ հեռաւոր վայրերու գործիչները իրենց տե-  
ղը հասնին:

Ֆետայական խումբը շորս մասի պիտի բաժնուի, ու հինաւուրց ըն-  
կերները իրարմէ պիտի դատուին: Բաժանումը արտութիւն առաջացուցած է, բայց գործի պիտի երթան դէպի արեւելք ու արեւմուտք, հիւսիս ու հարաւ: Գործին մէջ նահատակութիւնը առաջին օրէն արդէն դրուած է Ֆետայի ճակատադրի տախտակին վրայ: Ոմանք իրենց շորերը կը լուսն: Ուրիշները կ'օղիկ կը կարկտեն: Միւսները կատակի կլած են ու երբեմն գօ-  
տեմարտի կը բռնուին իրարու հետ:

Սարհատն ու Ռուբէն խմբակներուն մէջն են ու կը բաժնեն անոնց անառակութիւնները:

•••

Օրն էր պայծառ: Ու անտառը խոր լուսիեան մէջ, կարծես աղօթքի կեցած էր:

Ռումբերը լուսեան մէջ իրենց մեկնումի պատրաստութիւնները կը տեսնէին: Արեւի վերջին ճառագայթները կը քաղուէին ծառերու գագաթ-  
ներէն:

Ֆետայիները իրարմէ պիտի բաժնուէին: Իրարու զրկին մէջն են ու յուզուած: Աղատութեան ճանապարհներէն ո՛վ պիտի ետ դառնայ դէպի այս լեռները, շեն պիտե՞ր, ու զրկախառնումը կը տեւէ երկար պահ մը:

Ֆետայիին համար բաժանումը վերջին մնաս բարովն է...:

Ու խումբերը խաւարի մէջ նետուեցան:

Սարհատ Բիւրակնեան ուղղութիւնը բռնեց, դէպի Պնուս:

Սահակ եւ Ղազար Կոռածաղիկի շրջանը իջան:

Աւրանի Արամը քանի մը Ֆետայիներու հետ Հարջ-Ապստոնիքի եր-  
կար ճամբան առաջն առաւ:

Իսկ Ռուբէն մնաց Քեռի Մակարի եւ շարք մը Ֆետայիներու հետ, կազմակերպական գործերուն հետամտելու:

Անտառը կը դատարկուէր իր սրտակէց զուակներէն: Թեթեւ հով մը անտառի համերգը կ'առաջացնէր, զինուորական համերգ մը, ճամբու դնե-  
լու մահ-պառտերազմի էլած ընտիրներու այս լեզուներ, որ Մամիկոնեան ղառ բանակներուն պէս կ'անցնէր Տարօնի աշխարհէն:

Կ. Ս.

( Ետք . )

## ԵՐԱԶԱՆՔԻ ՔԱՅԼԵՐՈՎ

Վշտահառաչ երազանքով  
 Քայլում էի...  
 Քայլում այրող յայզեքով՝  
 հազազութեան ես Աստուծոյ  
 փնտրեցի...  
 Յափշտակուած ու խանդավառ,  
 Քայլում էի՝ հագուստ քո՛ցը  
 Բուռերիս մէջ գետեղած,  
 Սրտիս անդու խորշերի մէջ  
 Կեանքը դարձրած ջրազաց...  
 Այսպէս հասայ քարակուտակ  
 Մեր պատմական Բագաւան, -  
 Ուր վշտագոյծ սրտիս լացով,  
 Խորշերում իմ ուղեղի,  
 Աստուածները արուեստի՝  
 Մայրութեան ու Քաջութեան,  
 Մշուշներից զարերի  
 Քնաքաքայտ արթնցան...

Ես կանգ առայ յաշագարդար,  
 Փլուած-անցած կուռքերի՝  
 Փռոյիներում քարացած,  
 Կոփուել էին ուր սրբագին  
 Սրբամբանուց ազօրքներ,  
 Ուր պագերս զքեզ էին  
 Յաղթանակներ տեղեկաւ,  
 Կա՛մք ու ռզա՛ւ գորութիւն...  
 Որտեղ մի օր՝  
 Կնանկն էր եղել մի զարբնաց,  
 Ու հաւատքը՝ սրբութիւն...

Քայլում էի ես ուժասպառ,  
 Ճամբէս փաշտո՛տ, տաղտկալի՛, -  
 Արցունքով դեռ խոնաւ հողից  
 Բայրն էր փչում ամե՛ծքի...  
 Ու կանգ առայ՝  
 Յոգնած, բեկուած,  
 Առաջարում արեւա,  
 Ուր շայնքով՝ մորմոհներէս ջրագալար,  
 Ու սրտմտեծ,



Ջեփիւան էր լու վշտակից...  
 Դիտում էի՝  
 Անի՛ն էր այն, -  
 Անի՛ն արդար ու այրի՛...  
 Որ քաղուած էր խոր մշուշում,  
 Հեռու՛ն, հեռու՛ն ամայի...

Ու պեղում եմ համբը մտքիս,  
 Բացում այնտեղ մագաղաքաւած  
 Քարէ՛ գիրքը մեր պատմութեան. -  
 Բացքոտումի՛ք...  
 Մեր հայկական սեծ փառքերի,  
 Հաւատակո՛ւտ Աստուածների  
 Անխար դրո՛շմ ու խոր կնի՛ք...

Ձոր մամուռը կուրծքն էր տաշել քարերի, -  
 Ամէն մի քար՝ մի բառ փռուի,  
 Մասունքի պէս շունչն էր պստել դարերի...  
 Իսկ հովտի մէջ,  
 Մի ջրագարի գետի հունն էր  
 Աղերազին մորմոտում,  
 Ու ժայռերի կատարներում  
 Մերացել էր խորշակահար,  
 Հնամենի հազր գարշ...

Ու դիտում եմ՝  
 Հեռու՛ն-հեռու՛ն,  
 Վայրենացած ծառաստանի  
 Ոտքն հն գրկել աղաչանքով,  
 Որբերի պէս շիկեաքեք՝  
 Գտնամարմուն ազրիւրներ,  
 Ու մղկտում,  
 Իրենց անուծ աղերանքով,  
 Հոսում քեքեռ ու անպարփակ՝  
 Դեպի հեռու՛ն-հեռուներ...

Քայլում էի պատրանքների մշուշում,  
 Ու քում էր՝  
 Ամէն քայլիս,  
 Հն՛դն է ուժգին ինձ քայում.  
 Թում էր ինձ,  
 Քայլում եմ ես  
 Պատրանքի մէջ՝  
 Ժողովուրդիս քա՛ղ ու արի՛  
 Հետքերով,-  
 Որ կարմրախոնտ սոք արեւից,  
 Լորձաքաքախ ժանտ քրերի  
 Անհոտկուտ շառաչներից՝

Բայլե՛ր, քայլե՛ր,  
 Անցել էիմ լա՛ց - արցունքն՝  
 Սեւամբուր անձձմեքն՝  
 Յետոյ եկել հասել էիմ,  
 Այս երկնամերձ բարձունքներին,  
 Կուխ քե՛քե՛ր,  
 Արի՛ն տուել, ու սպասել  
 Հագարափառ առուտին...  
 Այդ ամայի շարժներում օճագալար,  
 Ու բարձրաքերձ այդ լեռներում խորշակահար,  
 Թու՛մ էք ինձ -  
 Դեռ իշխում է աստանդական  
 Փողովորդի մի վեհապանձ  
 Մրբութիւնը աանդական, -  
 Որի փէշին կառչած ես էլ՝  
 Արեւակէզ բեկորն էի. -  
 Միջօրէի...  
 Ես կանգ առայ,  
 Ազօքեցի մեհեմական աստուածներին,  
 Որո՞նք դարեր մեզ շարունակ  
 Թա՛գ ու գինի՛ պարգեւեցին...  
 Իսկ այժմ լա՛ւ,  
 Այժմ դատա՛րկ տարածութիւն...

Դատարկութեան, ամայութեան  
 Յաւի՛ն ի տես,  
 Կանգնած՝ սրտիս դռնիւններով  
 Ես անխաղաղ,  
 Հչում եմ յա՛ր, քինախնդիր,  
 Յուզումնայորդ վայրագութեամբ. -  
 Ասէ՛ք, ասողե՛ր,  
 Երկնակա՛մար,  
 Ջրեր լայկան ու սարսափած, -  
 Ո՛ր էք քողի՛  
 Ո՛ր էք քողի՛  
 Իմ հեռուայ ժողովրդիս  
 Բեկորները մեծաբանք...  
 Ո՛ր եմ նրա պալատները,  
 Քանդակագարդ ու հնագեղ,  
 Ո՛ր եմ նրա բերդերը վեհ,  
 Վահանակիր, երկնաստան, -  
 Ո՛ր եմ նրա  
 Գործքները երկնաճամաչ,  
 Սո՛ւր սլացիկ,  
 Կօքողները հնահոյակ,  
 Ու վե՛րբը շարակնակերտ,

Կանթեղները լա՛յն, սրբաշա՛ռնչ,  
Աղօթքները քաթժամբանունչ. -  
Փա՛ր լուսփնի...

Աչքիս առջեւ  
Փահեր քափո՛ւք, ջրեր փրփո՛ւք,  
'Իաշտեր դարձած՝  
Յին ու անգղի  
Հնձաններ քիւր...  
Սարսափում եմ,  
Ու ճէն տալիս աշխարհով մէկ, -  
Ինչո՛ւ, ինչո՛ւ,  
Ինչո՛ւ, Աստուած,  
Ինչո՛ւ ցրուեց ժողովուրդս լուսաճակատ, -  
Արձագանգեց հեռուն միայն  
Անդնդայի՛ն, արիւնակա՛ք...

Բողոքներին  
Երագային մշուշի մէջ՝  
Կարօտանեղձ սրտիս բացում,  
Դա՛ր վառագն էր կարծես ծնում, -  
Ու քուստ էր՝  
Եկել է նա քո՛ց աչքերով,  
Ջիճջ հայեացքում հեռունների,  
Հատագայքած յոյսը ցակտին,  
Կարեւորքը սուրբ՝  
Խաչ ու խորան, -  
Վիշտը սեղմած  
Շուրք ու բերան,  
Մագերն արձակ, խնկարբուքումս՝  
Ինչպէս քաղած ոսկի որան,  
Հողմին տուած ծփո՛ւն, հատ-հատ,  
Շոգափրփուք ու ոսկեհատ...

Կազմընցու արդարութեամբ,  
Եկել էր նա անխոնջ հոգով,  
Չշմարտութեան լուրք ըզմանալ՝  
Խաղաղութիւն քարքտեղու,  
Իր ճգնատանջ ժողովուրդին. -  
Բազմաչարչար խաչուած հօտին. -  
Խաչուած մի հօտ,  
Բայց կորուկի՛. -  
Միշտ յուսովա կախարդութեամբ  
Հայտնի ծովի...  
Մի ժողովուրդ,  
Որ խաչուել է գար ու դարեր,  
Բայց յարութիւն տակ կրկին՝

Մեր հայկական յամառութեամբ,  
 Որ ծովացի՛լ, զարձել է քա՛ղ, -  
 Վիշապաբազ մի ժողովուրդ,  
 Որ կռուել է վահագունի՛ք...  
 Որ սաստել է, քրքչացել՝  
 Ճշմարտութիւն ծաղրողներին,  
 Ջա՛ր հողմերին...

Երազն արդէն այժերիս մէջ  
 Կանդաղօրէն դառնում էր մի  
 Արծաթաբափ լո՛յս առաւօտ. -  
 Որի ցօղում ծնուել էր նա՛ր  
 Խարտիշտեք ոսկի՛ արեւ,  
 Ու շեփորում ականջիս տակ,  
 Մեր վահագնեան եղեգներով՝  
 Միշտ յոյսի ու եզօրութեան  
 Յաղթանակներ ու նպատակ...  
 Ու ան՛շ էր հնչում այնպէս,  
 Պատգամները Աստուածային,  
 Որ ես կեցած,  
 Ձեռներս ի վեր՝  
 Կարկանդակ եմ վեհ կայրյոսին,  
 Ու խում եմ բառերն իբրև  
 Որ հնչում են մամբիս վրայ. -  
 Ելի՛ր կրկին,  
 Դե՛ւ,  
 Ժողովուրդ քաղաղրուազ,  
 Հերկի՛ր հողերն քա լուսածոր՝  
 Բազուկներով կայտառերակ:  
 Արդար կամֆով  
 Դու քաջացի՛ր,  
 Ազատութեան պատգամներով  
 Է՛լ ծովացիք... որ՝  
 Փլատակներ յառնեն ի վեր,  
 Հազարայեայ ծաղիկներով  
 Լցունն ձորեր,  
 Բոյր ու խունկով միշտ արթնանան  
 Մասեր ու բերձ,  
 Կեանքը լինի աստուածահան  
 Միծաղ ու երգ...

Որքան քերծեն տառակ ու ժայռ  
 Մնկերդ ի վեր,  
 Ու արիւնն քա ջլապիքի  
 Յաղթ սրանքներ,  
 Հայոց երկինք, հայոց աշխարհ՝  
 Ջոտ կը դառնան ամբաստութեան,  
 Կը քացին սի՛բա, ծով ու ովկիան,

Կը կշռեն խիզճճ խղճով ալմեաճճ,  
 Որ հեռաւոր քարճումնհրում,  
 Մեծ ազգեճրը հաճյ շուրքեքովճ  
 Ու բարբառով մեր կարավիճ,  
 Ճշմարտութեամբ մի անճլատ,  
 Հիճմբ կը ղնեն մաճր դարերի, -  
 Որ մեր երկեզ կարօտանում,  
 Անճայրածիք կամարմերում,  
 Անճէղ հուրով անմահութեամ  
 Հայոց բանը քոցավառուի...  
 Քայլիճր դարճնալ,  
 Քայլիճր յոյսով...  
 Յոյսով կապոյտ ու արեւկայ,  
 Կանգնիճր անյազք,  
 Կրկին վկայ,  
 Ու բերդապահճ  
 Պատմութեանդ քո ապագայ...

ԱՐՇԻ

Քեճէրան



# Բագինի Զրոյները

ՆԻԻՓ՝ ՇԱՂԻԿ ՓԱՓԱԶԵԱՆԻ

## « Փ Ո Ղ Ո Յ Ը »

ԶԵԿՈՒՑԱԲԵՐ՝ ՎԱԶԳԵՆ ԱԼԻՔԱՆԵԱՆ

Հետագայ գրութիւնը երբեք պիտի չվորձէ «Փողոցը» արժեւորել իբրևս գրակահանութիւն: Գրական գործի մը արժեւորումը ժամանակավրէպ է, նաև չրազբայի», հետևաբար կապեր միայն ունենալով գրականութեան հետ: Փորձուածը վերլուծում մըն է: Անմիջապէս պէտք է յիշել նաև այն ենթադրութիւնը, թէ զազաբակահոութիւնը զազաբակահոութիւն է, ընկերարանութիւնը՝ ընկերարանութիւն եւ արուեստը՝ արուեստ: Այլ իտօքով՝ գործի մը հոգեբանական կամ փնդիտօքայական խորքը չէ, որ կը բերէ սնոր գեղարուեստական յատկանշիները, այլ միայն հեղինակին արուեստի զգայարանքը: Այս կէտը ժամանակիկէ հաք է միայն որ կարելի է անցնել կտորի գաղափարական խորքին վերլուծման: Ուրիշ կարեւոր կէտ մը հաւոր՝ արդէ արձակը իր բազմութիւն երեսներով այնքա՛ն կը մտանայ բանաստեղծութեան, որ այսօր, յաճախ կը նկատուի բանաստեղծութեան մէկ կայուածք:

«Փողոցը» նկարագրութիւն մըն է մեզի ծանօթ փողոցներուն, անոնց մէկ հատին մասնաւորաբար, կամ անոր՝ որ հեղինակը փորձած է ստեղծել ժամանակի ընթացքին իր մէջ դիպուած տարրերու մէկտեղումով (փողոցին վրայ ապրող անձներով, անձերուն իրարու հետ ունեցած յարաբերութիւններով, նաև փողոցին Ֆիդէլօական ներկայութիւնը յատկանշող մասերով): Ատարկաները երբեմն կը ներկայանան իրենց թանձրացած իրականութեան մէջ միայն՝ որպէս անձ, առարկայ կամ համայնապատկեր, երբեմն զանոնք կը ստանենք իրենց գոյութեան ամենայնայն մանրամասնութիւններուն մէջ, իսկ յաճախ որպէս վերացական նկարագրութիւն, որոնց մէջ հեղինակը կը նուաճէ առարկաները իրենց Ֆիդէլօական գոյութեան մէջ եւ անոնց կու տայ յարաբերական արժէք, ենթակայական տարածք եւ իմաստային հնչականութիւն (resonance): Փողոցին լաւ չափուած հաւատարմութիւնը, պոստերուն քարտօթիւնը, յղիւաններու անճարակ զէչը, մեկերը ելնկարականութեան յիմար ցիցերուն, անոնց կոր օրհնութիւնը փողոցին, եայլն: Այս վերջին պատկերին մէջ կրեանք տեսնել կղերականի եւ բարեպաշտի յարաբերութեան Ֆիդէլօական կեցուածքին գրականութիւնը:

Կտորին գաղափարական աշխարհը նոյնպսակ է սնոր բերած ենթակայական աշխարհին հետ: Այս կէտը աւելի յատակ կը դրանայ հետազային, երբ անսենք զանոնք իրենց մանրամասնութիւններուն մէջ: Գաղափարական աշխարհին մտին կարելի է ընել հետեւեալը՝ փողոցը գոյութեան դատապարտուած է: Ան կրեար շարժիլ, հետեւաբար ոչ մէկ շարժում կրնայ ընել առանձին: Նաև վարժ է իր այս վիճակին, ապառիչ, տիւանի մէջ նստած, ինքզինք յարմարացած է տիւանի կորութեան: Դաւազութեամբ մը դատապարտուած է գոյութիւն ունենալու: Արեւը, տակաւին, իր սառած ճառագայթներով տեսիլ կ'երկարէ, յախտեանական կը դարձնէ փողոցին քաչկոտուող գոյութիւնը: Այս բոլորը ռե՛րտառու է եւ նայուածքը կը թրջին: Փողոցը անտեսուած է իր արտառու գոյութեան մէջ

անգամ: Ժխտում է, ժողովում է: Անոր վրայ հոխակալում անցնող մարզիկ, անտարբեք անոր քաղաքացիական մեղադրանքի, հոխակալում կ'անցնին, իրենց կտրվածը կը զլին անոր վրայ, անկէ քիչ մը անդին իրենց մագնիսը կը սանտրեն փողոկեայ սանտրերով հայերին զիմաց, կը գիրկընդհանուրին, կը համարուրուին, փողոցն վեր, պատուհանէ պատուհան նայուածքներով կ'ողակեն միջոցը: Անոր վրայ կրեկողմ, կողովը ձեռքին շուկայ կ'երթայ Մարթան, իսկ մանուկները օտրել խնդիրներ ունին - կը պնդեն, թէ Մարթայի վարտիք իսկ կանայ է:

Անաւանիկ փողոցին գոյութեան սաղնապը: Իր լքուածութեան ժէջ հերտական՝ փողոցը դատապարտուած է գոյութեան ունենալու:

Բայց համբան գիտակից է իր գոյութեան: Կ'ապրի ինքն իրմով: Կ'ապրի զինք բաղկացնող տարբերուն կեանքով: Կ'ապրի հեղինակին ենթակայութեան մէջ, եւ հեղինակին ենթակայութիւնն է, որ կու տայ համբուն եւ դաշն բաղկացնող տարբերուն ինքնագիտակցութեան կիրքը: Հետեւաբար, քորերը, որոնք չեն շարժիք բնութեան մէջ՝ շարժումը մէջ են յանախ, առանձին, առանց արտաքին ուժի մը գոյութեան, նաեւ գիտակից իրենց շարժումին, ստանալով մարզկային գիտակցութեան մը սարսուղութիւնը (առանց սէմպոլի), որ գանձք շարժման մէջ կը զնէ եւ այդ շարժումին սաղնութիւն կու տայ ճիշդ ախպէս, ինչպէս մարզիկ շարժման մէջ կը զնեն իրենց կեանքը եւ ուղղութիւն կու տան այդ շարժումին:

Այս գիտակցութիւնը արդիւնքն է հեղինակին ենթակայութեան - այսինքն առարկաները կը գիտակցին միայն՝ երբ հեղինակը ուզէ: Նոյն արտաբանութեամբ, արտաքին աշխարհը կը դադրի իր գիտակցութեան եւ կ'արժեզրկուի զարմեալ, երբ հեղինակը ուզէ: Ուրիշ ձեւով զնեւում հարցը, կրնանք ըսել որ արտաքին աշխարհը միշտ արժեզրկուած է միջին որ հեղինակը անոր տայ գիտակցութեան համապար Եկարգողը: Այն տեսակ իրականութիւններն աշխարհի մը մէջ, որ կը ժողովուրդ տարեան, օրինակ, պատիկ արջը, բառային, սիրելի տիկին, սասցայ, նաեւ զիբա կրեւ, նաեւ Մարթան, որ պայուսակը ձեռքին շուկայ կ'երթայ: Այս տարրերը ոչ միայն կը ժողովուրդ, այլ մանուսեզ Եկանքի առարկայ կը դառնան: Այլ խօսքով, տարեան պարագութիւն մըն է այն աշխարհին զով, որ հեղինակին ենթակայութիւնն է, ուր առարկաները կը մեկտնուին, իմաստ կը ստանան, գիտակցութիւն կ'ունենան եւ կը լինեն ենթակայական աշխարհը, որ հեղինակինն է: Կամ կը պարզուին իմաստն ու կը դառնան մէկ մասը արտաքին աշխարհի: Այս տեսակ միջնորդութիւն մը մէջ է, որ յանկարծ առարկաները իրար զով կու գան, գոյութեան կանգնանուք իմաստ կ'ենթադրեն (հեղինակին թելադրուած եւ անոր կապուած) եւ կը մեծարկեն ապրելու գործողութեան, ապրելու իրենք իրենց մէջ, նաեւ իրարմով: Կը սկսի աշխարհագրութիւնը: Առարկաները կը փոխուին, կը կոտորին իրենց ֆիզիքական սահմանները, իրենց տարակայան գոյութիւնը սահմանող շրջազիւղը, կ'ազատին իրենց դարձուք, թիացած գոյութեանն եւ կը մեծարկեն նոր կեանք մը ապրելու արարողութեան: Այլակերպով զանգառ է: Եկեղեցական արարողութեան մը խորհուրդը եւ սքուսթիւնը սենի: Բնականացական է:

Այլակերպով աւելի ՄՃՍ մըն է: Թատկահայկան կէտ մըն է հերոսի բացակայութիւնը այս գրութեան մէջ: Կտորին հերոսը փողոցը կամ Մարթան չէ: Ոչ իսկ այն մարդիկը որ կը պտտին փողոցին վրայ, Հերոսը առարկաներն են: Հերոսը նոյն ինքն հեղինակն է, որ վերածուած է զարմեալ առարկայի: Հոս յիշենք Ժան Նուրէի մէկ խօսքը Ալէն Ռոպ կրիչի հերոսներուն մասին.

«Ալէն Ռոպ կրիչի, վկայիմ հերոսը ամուսն չուի, պիտի չունի, պարտաւրիւմ ունի է. բացակայութիւն մը՝ աշխարհի առանցքին ճիշդ վրան, բացութիւն մը առարկաներուն միջին: Բայց սրտկեանի բայր գիծերը իրմէ կը մեկնիմ ա իրմէ կը յանգնի՝ այս բացութիւնը հետեւաբար անցնում առարկայական եւ անցնում շօշափելի կ'ըլլայ, որքան առարկան կամ հերոսը, երբ ոչ աւելի: Առարկայական աշխարհը, որքան մէջ զնեւում է

այս հերոսը, գուրկ է մասնաւոր նշանակութեմէ, այս պատճառով ալ հերոսը տեսակ մը բարացած է, արժանի, սիրմի վերածուած: Հեղինակին նայուածքին տակ անհերք աւ ինքը կայուն կը դառնան եւ վիպական ամբողջ տեսարանը գրողին ստեղծագործ յիշողութեամ մէջ կը վերածուի աւարկայիտ:

Փողոցի ֆիզիոնոմիան իրապաշտ տարրերը կու դան գիւղէն: Գիւղ մըն է իր մարդերով, հագուստներով, զենքերով եւ միջոցներով, եւ կը ներկայանայ մեզի իր ֆիզիոնոմիան տարբերով՝ ինչպէս նաեւ հեղինակին գեղապատկան ընդմէջէն: Ատիկա կէտ մըն է, որ խորացումի կը կարգաւ: Նուսուֆարները շուրճու մըս, աղիւտներու անճարակ դէգերը, պատշգամներու քարեղէն զրատները, փանջ հեղուկը, որ կը վազէ Ծեփի արեւէն, ուխտաւոր մըլիւններու յամա գիծը, զիւրա կիծը իր Ծաղկաւոր, ուռած մէջով, կուրաքանակ փողոցը հին... որ կը կարի շնչահատ, միասնաբար կու տան գիւղի մը զոյուֆեան հուսանկանութիւնը: Այս գիւղը, սակայն, պատահական գիւղ մը չէ: Անի հայկական գիւղի մը տարրերը, որոնք թէեւ չեն ներկայանար Օլազանի գիւղին գոյներով (քանի որ Օլազանի կարեւոր շնչա զրած է գիւղի բարեբունն եւ սովորութիւններուն վրայ), ինչ որ զՓոլոցի հորիզոնէն ամբողջութեամբ դուրս կ'իջնայ), այլ կը ներկայանայ հետաւոր գիւղի մը ենթաշրջաններով, ու թէ բարեբուն, այլ յիշողութեան ընդմէջէն: Յիշողութեան հարցը կրկին պիտի գրուի թիւ հարց: Նախկին կէտը աւելի յստակ դարձնելու համար՝ պէ՛տք է յիշել այն բաներն ու ասացածները, որոնք հայկական Ծեփի մէջ ներկայացած են ընդհանրապէս: Օրինակ՝ «Կորաբաժնի փողոցը, որ կը կտրի շնչանաւ, ելեկտրական քիչերուն ճաշած կոր օրհնութիւնը փողոցին, ուխտաւոր մըլիւններու յամա գիծը, Մարքան որ ազատորոն հոս չէ աւած, եւ լայնիւր գլխուս, կողովը մեքէն, կանաչ վարսիճով, փնջալով ու փշտցնելով շուկայ կ'երթայ», բոլոր ասոնք կու տան գիւղականներէն հարուստ միջնուր մը, ուր նուազները չեն պարեր, այլ շուրջակար կը բռնեն: Այս գիւղին պատկերը առանձին բաւարար է նման կողակացութեան մը համար: Գիւղը, սուկայն, իր մէջ ունի տարբեր օտար գիւղի մը, ուր Ծաղկաւոր մէջով զիւրա կին մը իր ներկայութեամբ կը պարտադրէ ու իր ցեղային ամբողջ գոնաւորումը կը քաշէ իր հետ: Գիւղը ունի նաեւ տարբեր զիւ թէ լատ արդիական գիւղի մը իր կեկտրական ճողերով, թեկերով եւ հետադարձի անթէններով: Այս մէկով, հայ, օտար, նաեւ արդի գիւղի մը տարբերը կրք դուրս կու գան հեղինակին յիշողութեանէ՝ կրնանք երեւակայել հեղինակը օտար գիւղի մը գիծաց՝ հայ գիւղի մը հրազով: Իր փորձառութեան եկող օտար եւ արդի գիւղերը վերահանելու իր ճիշտ մէջ, հեղինակը ինքզինք կը պաշտպանէ հայ գիւղի մը հրազով, բայց գիւղը կորստահալու իսկ ընթացքին կը վերցնէ տարբեր այն երազէն, որ հայ գիւղի ինչպատկէն կու դան եւ միանալով կուրի ամբողջութեան կու տան անոր խորքը, որ կը զբնուորուի որպէս ցեղային: Այս առիթով դարձեալ մէջբերում մը Թ. Նուարէնէն այն մեքանիզմին մասին, որուն կ'ենթարկուի գրողը յուլ մը վերաբարտադրելու ժամանակ.

«...Մարգուն գայտաբիւնը տնական պայտար մըն է ժամանակի ընթացքին դէմ, որ կ'արկ, կը տանի կեանքի մը բազկացուցիչ տարրերը: Մեր յիշողութիւնը կը թցնի վերստեղծելի դէպքերը, պահպանելու համար գամմի, քայց անոնք կ'այլայնեցնեն ժամանակի ընթացքին իսկ թերուումը եւ մեմօ մեցեալը կը դիտեմք մեր աչքերով այն մարդերուն որ եզած են: Հետեւաբար անցեալը կը փոխուի գայն վերակամգնելու մեր փորձերուն իսկ ընթացքին: Ժամանակի այս նուազումը չի յանգիր տրամաբանական ընթացք մանցող պատմութեամ, այլ կը վերածուի սնվիրը յետագարձներու, որոնցով մարդ իր անցեալը կ'որոնայ, ազնւով մերկայ մը, քայց անկարող բուն անցեալը վերստեղծելու: Կտորը կը վերջանայ եւ դարձով մը, որուն մէջ տարկաները եւ տարկաներուն բերած յուշերն ալ թուղթի վրայ, գրողէն անջատ, հեռու, աւարկաներու պէս կը կենան, ու ալ ոչ մէկ կողմ զոյուֆեան ունի գրողին եւ կատրին մէջ:

Կտորը վերջացած է:

Վ. Ա.



## Փ Ո Ղ Ո Ց Ը

### ՇԱՂԻԿ ՓԱՓԱԶԵԱՆ


Կորախմանկ փողոցը հին, յոգնած դարձուածքով մը կ'երթայ, վար կը ծռի, հոն կը կտրի շնչահաստ: Անոր գոյութիւնը ալ անժխտելի կարծես. ունի տարիններու վարժութեան տուած փող մեղկ ու երկար տիւամին, եւ ջերմը մեղմ որ դառաղիք դուրս կը ծորի ու նայուածքդ կը թրջէ: Սողացող կորութիւնը գետնին, կուպրի հալած փայլ կ'ըլլայ տարափին տակ արեւմտեան, որոնց ջաղփը, սառած ու անդարմանելի, տեսողութիւն կը քերէ անոր բաշխուող երկարութեամբ: Այդ գետնին հին ու յամառ ձրգ-վիլը, որքան կարեւոր փողոցին, իր ամէն ինչը ամոր թովը, վրան, անոր համար. սալարկը մայթերուն, անոնց լաւ չափուած հաւատարմութիւնը, որ իրեն հետ համընթաց վար կը սահի, բարութիւնը պատերուն, բարձր ու ծեփուած՝ տուններունը, ծառուտու աղիւսներու աննարակ դէզ՝ պարտէզները խճրճոզ, ձկնորը, սնկուած ելեկտրակամութեան յիւար ցիցերուն եւ անոնց բաշած թելերուն կըր օրհնութիւնը փողոցին. նայնիսկ այդ երկայնքին համար, մեծ ու պզտիկ, խոր ու սափակ փոսերը, որոնք (կարծես անոր ծնունդէն իրեն վարած ըլլալին) դանդաղ կը հոսին կորուած հետներու հնութիւնը մտերիմ, որ, գետնէն մայթին ու ձողերուն անցնելով, ծառերուն հետ կը մագլցի մինչեւ պատուհանները մարդերուն: Ատենք ալ միւս բաներուն նման: Շէնքերուն մէջ, վարէն վեր իրարու վրայ կը սեղմուին, եւ կամ, գլխապտոյտ շուրջպար բռնած կը կենան, օդակելով իր միջոցը պատուհանէ պատուհան ակնարկներով: Վայրկեաններ կան, ուր անոնք յանկարծ կը բարանան նայնաման շլացումով (անոնց աչքերը արտափառար ցոլէր կ'ունենան, եւ անշարժ ձեւերը՝ ակամայ սպասումը դատապարտելին) - բաճալին դեռ կ'երթայ ալ անհեթեթ շփոխոցով ա-

բազ սառչող մտանքներն դոնսպանին, որում յաղթ ու լեցում մարմինը, կիսով բացած դրամ հոնու, կարծես պարսպ փառքերու գարշ բիծ մըն է. սնու մագնիս առանձին մէջ, արծաթ սանտրի ճանաչելը, սպիկան փղու- կըրեայ թելին շարունակութիւնը կ'ըլլայ կարծես, որում ճերմակ շարժու- մը կը քարի: Խոշոր ձեռքերէն մէկը դպաւ ծիծիմ հալչող կլորութեամ, զգաց շէկ խապալմերուն պէտոտ գալարումը իր վզի ծալքերուն, զաղբ- ցաւ խոխոր, մինչ սանդուխի կամարին տակ գիրկընդխառնումը կը կար- ծըրանար - յետոյ սակայն կը սքափին անկերպարանք շուքերու հալած վախէն, իրեն կու գան. կը քայնն, կը իջն, կը հրեն, անծանօթ կշռոյթի ախտառոր մարմնով, կը կոխեն, կը խրեն, կը ճգնեն, խափշիկ պորտե- ռու ցնցումով: Խոնաւութիւնը մտնուած գետնին, որ, մուրացկան ու բարի, ֆաշկուտում կը կենայ, ճրի արծազանգ մաշած ոտներու, անկա- յելի քայլերուն հէ՛ք սպասումով սրբացած: Պատին կարծես փակած հին ոճով պատշգամը, ճերմակ վարագոյրի ետեւէն, պղտոր ջուրի մէջ ցալա- ցաղ հեռաւոր պատկերին զողը եւ լացը ունի. քառակուսի ասի մը քիւր, որ շեղակի վար կը թափ, անճրեւի քարացած կաթիլներու վերջնումովը կար- ծես ինձն իր շուրջը երկաթ ծանեակ ֆաշիւ է, որում փրթոյ գիկգակներէն պատառոտած գոյն կ'երեւի: Յատակութիւնը մոխրագոյն երկկոյնի. տա- ններուն մեզմ լացը. դանդաղ եւ լուս թաւալումը անոնց բերմին՝ բաներուն. փոշի սալարկը մայքերուն, որ, իրեն օտար կշռոյթներու արծազանգը կը թուի ու քառակուսի ձեւերու քարացումով կը մնայ, եւ պատերուն աղիւս- մերը, որոնք, ալ մտնուած գիծերու կարծրանալը կ'ըլլան միայն: Պուր- կացող գիծերը տակաւ կը փոշիանան, խորխոփող մուքը կ'իջնէ սահման- ներուն, մակերեսները կ'ուռէին դանդաղ հուրկոյրովը կանակներու, հեռ- յեկ ալիքը ձեւախոսութեան, որուն զոգը կը քաղուէին բաները բարբ խե- լացնոր հեռախոսութեամբ, կը ծաւալէին տարբայլծ անոնց ձեւերը, մինչ ծառերը կու լային կամաց միջոցը կարսուած: Պատշգամին բարակ ձաղերը երկարեցան կարծես արեւի փայլէն, որ կը բազմապատկէր գոննք յոյսի շաշլ խաղերով, անոնք հաղուկներու դիրքաբեկ նրբութիւնը եւ յարաշարժ փայլատակումը ունէին. քիւր հալած, ապակիէ ցալքեր ժայթփեց ալիւս- ւար իր երեսէն. հին ճեւղ պատշգամը, բացուած ափին գազունի կանկրով յզի ու ճանաչումով առջում, բայց ներմտիով կը կենար, նետուած փողո- ցին՝ ազուր գարգասեղի մը պարսպ լայնքով: Առաստեան շուքերը կը տատանէին վարանուտ. անոնք սեղէ մը պիտի սկսէին հարկու. հեռառե- սիլի մը անթէնին շուարած կրկնութիւնը. ներհնաշապիկ մը մտնուած կ'երեւայ. կը լեցուին գիծերը ծառերու ազուր գուլմներուն, կը յզփա- նան, այն ատեն տերեւները գոյն կ'առնեն, կը ծփան կարծես կանաչ ընդ- լայնումով: Կրնա՞ն գտնել պոտիկ արջը. բանային առաւ. սիրելի տիկին, ստացայ: Նայնիակ կարծես գետնէն. մայքերունը, նեղ կը սկսի բարձուն- քին, կ'իյնայ յանախ փոսերու մէջ, վարը քիչ մը կը լայննայ. մայքի քա- րերուն հետ շինած իր անկիւնը, որ կը ճգուի, կը ճգուի, սպառելու հա- մար յանկարծ, երկարութիւն կը թուի, որո սահանքին, կարելի գաւա- գանի մը ծայրը, գոց հովանոցի մը մետաղէ սուր գլուխը եւ ուխտաւոր մրջիւններու յամառ գիծը պիտի կարեմային հետեւիլ: Դեղին սարդը առ- էրը խորշէն դուրս նետելու անօգուտ փորձ մը ըբաւ, անոնք սարսափով աջ ու ձախ կը տնկուէին, իր նիսար մարմինը անոնց հետ կ'երեւար, ալ- լող շիւղին բոցը կը դազար բիրերէն ներս, նահանջեց, ստեւը մայքի քա- յերն էին, հոնդոցի ուժգնութեամբ նարմատիւնը, ոտները կ'այրէին:

Մայթին վրայ ինկած տերեւինը՝ գրեթէ փակած կանաչին, սալարկին ճը-  
 ցած իր անկիւնուտը կորուսելունը հազիւ նշմարելի է եւ անոր թափանցիկ  
 ու դադահար գոյութիւնը տերեւին կու տայ լինելու ջուրերուն վրայ երա-  
 զազ հունուփարմնքու մեղկութիւնը: Դեղնագոյն յատակը պատշգամին,  
 եռանկիւն երկաթներու վրայ յենած, մայթին կէտը մինչեւ կ'երկարի. սըր-  
 ճագոյն, մաքուտած գիծեր կը թիւղաւորեն ծեփը, հասած ծայրին՝ կ'ան-  
 հետին. երկաթէ հողերուն հիւսելով քարացած պատկերներ - անձրեւ-  
 ներու միօրինակ գարնափը ապակիներուն, ուր հեղուկ նեղէր կը  
 բացուէին եւ կաթիլը հեշտանձով կը փթթէր, եւ որու գորշ ծագ-  
 կանին կառչած էին ալ ընկզմած թարթումներ. ծաղկուտը փէշի ծալ-  
 քերուն մէջ պահուրտած, կախուած միւսերը քիւրտ կնոջ, որոնց վայր-  
 կեան մը յառեր էր, կ'ընակի վրայ գետին պտակած պտտիկին սպշահար  
 նայուածքը, անոնք, փափուկ աւ թույս, իրարու վրայ փլշելով կը հասնէին  
 մինչեւ մութ ծայր փորին, որուն փառանեղ կորուսելու կիտով դուրս կը  
 թափէր վարսիքի պրկումէն. հովը կ'ուտեցնէր փէշը ու բարկ հոտ մը կը  
 դաշէր ունզերուն. ականջները լեցուէր էին գով խշշոցովը անոր պատըշ-  
 գամին թափած դոյլ մը ջուրին, որ գունատը սալարկներուն կը պայթե-  
 ցնէր կտորին ներսակ ծաղկիկները: Պատշգամի դեղնագոյն յատակը կ'եզե-  
 րէ քարէ հիւսկը, որուն երկու թեւերը կ'ուտին էիջ մը, ասի մը երկայնքի  
 վրայ, յետոյ կը սահին նոյն կէտին, գոր կարծես իրենք կը փորեն յաջորդ  
 ոստումին համար. կարելի է չափել այդ փասերուն խորութիւնը, սակայն  
 անոնք ազտով լեցուած կ'երեւին. վերը սալարկներ ըլլալու էին, թերեւս  
 գունատը, ինչո՞ւ, վստահարար անոնցմէ ոմանք կարած անկիւններ պի-  
 տի ունենան, ինչո՞ւ, ուրիշներ արդէն հայած՝ պտտիկի կ'ընակէն ու թափ-  
 ւած ջուրերէն. հաւանարար կարելի ըլլայ չափել հիւսկին ոտաւ կռեա-  
 կուտը, բայց ազտը մշտած կ'ընակին. չափել ծեփին մագանման քաժանու-  
 թիւնը անձրեւի թարթումներուն եւ գունատը ջուրերուն: Դեղնագոյն յա-  
 տակը կրող եռանկիւն երկաթները, անկիւն մը ծանց, անբացուած մեծ  
 պտուտակներով. որոնք մեղքած քերաներ կը բանան եւ որոնց ճիւղեր ի-  
 յանները կը գայարին մետաղէն ներս, որդային քեղիկան: Անհամ մարդ է  
 կարծես. ինչ յիշատակդ այս գիշեր գիւ լալու չափ կը յուզէ. ալ պիտի  
 չհամարուի՞նք. մի՞ տուր: Արեւմտի հին ժամերը փողոցին, անոնք  
 ի՞նչ ալ թշուառ ձողապատիւթեամբ. պիտի գան, երբ աւելածուն ձեռնա-  
 կառքի մեծ անիւր ներս մտցնէ, անոր արմատոյն աչքերը մեռնող ցալներ  
 պիտի ցայտեն եւ դէմքին խառն շուէրը աւելի պիտի նմանին էշած կառ-  
 քի գիծերուն. անոր հսկայ ափերէն պիտի վազէ երեք անիւներուն նոստո-  
 ցը, որ անխուսափելի հեւքով մը կը հասի փողոցի գառիվարին, ուր արեւը  
 յանկարծ կը թանձրանայ - տուները լի դեղին հիւքով. միջոցին մէջ յա-  
 կինք ցնորքը կ'ընկնարներուն. վերջին երայրէն թափանցիկ՝ գոյները -  
 պատերը ծալլ պիտի ծծեն հիւսկը աւիշը նառագայթին, որ շնչատ, բայց  
 յամառորէն պիտի սողայ վեր. տանիքները (ջուրի խաղաղակներուն հետ,  
 կաթիլին փայտակուտը անոր վերջիւնումն է միայն, ծխիներուն կ'աչե-  
 լով, ծանգի նիւնչը լոյսին բիւրեղ փշրուիլն է), ուր բազմազանս անթէն-  
 ներուն եւ լուացի ձողերուն պիտի փակչի, յետոյ կարծես շուաններուն  
 պիտի սանի ու ցնդի: Քառակուսի շուէր, որ մայթերուն սալարկը կ'եզե-  
 րէր, պիտի կարմրի էիջ մը. պիտի թափ, թէ ան կը բարձրանայ դանդաղ  
 գետիկէն, անկիւնները կը բացուին եւ քարը բնական կաթիլին կորուսիւն-

ները կ'անձեռնէ, իր նոր ձեռքին անծանօթ՝ միջոցին մէջ կը դեգերի շուարած, մինչեւ որ լալոր մեռնի ու ինձ չորցած վար իյնայ: Ափ մը էրը ծիրանի կը թելածէ սուտանակի հայտնի թելին քանկումով: Կը հային երկաթէ մաշերը, ժանգ հեղուկը կը վազէ ծեփի արիշէն՝ շէնձին, եւ պատերուն վարդագոյնին մէջ պատշգամը կ'երկարի, կ'երկարի, կը չքանայ: Մարթա՛, Մարթա՛: Մարդ չէր գիտեր, թէ ուրկէ եկած էր այդ կինը. Քաղցեցինքը ծանօթ էին սակայն իր կանաչ ուրուագծին, որ փնջալով ու Փշշացնելով գառիկարը կ'իջնէր ամէն առատ, էիչ ետէ, բանջարեղէնի տոպրակներով ու պտուղի զանրիւզներով ծանրաբեռնուած, իր կանաչ հողաթափերը հեւալով, գառիկերի մայրերուն քաշկոտելու համար: Մարթային միայն մազերը մոխրագոյն էին եւ աչքերը՝ սրնագոյն. հագուստը միշտ, անձրեւանցր ձեւեր, գլխուն լաչակն ու ներքնաշապիկը, որ ամառը, փէշերը վեր քաշած ըլլալուն կ'երեւէր, կանաչ էին. մարքը կանաչ ցուրտ ունէր եւ գետինը պառկելու սովորութիւն ունեցող պզտիկները կը պնդէին, թէ վարտիքն ու կանաչ էր: Յիսուն տարեկան կանաչ կին մը, որուն համար թաղի տղաքը կ'ընէին, թէ տղամարդու հոտ չէր առած: Ուրաք մը սակայն, երբ աւելածուն ձեռնակառքը ներս կը մտցնէր փողոցէն, պատահեցաւ որ Մարթան ազրը թափելու իջած ըլլար: Անկիւններուն յամեցող մտրուագոյնը փողոցին. հին անձրեւի կարիւններուն քարացած վերջումը երկաթէ փետրուն՝ զիկզակներու պատառուած ժանեակ ազուոր: Անկիւններուն յամեցող մտրուագոյնը փողոցին. տուններուն մեզմ լացը. փողոց նետուած ափերուն կանչերով լի բալայ պատշգամները, որոնց բառակուսի ափ մը էրերը, վար սահող շեղակի, անձրեւի կարիւններուն վերջումումը կարծես, իրենց շարքը երկաթ ժանեակ քաշեր են: Յստակութիւնը մոխրագոյն երկային. թափանցիկ բիւրեղը միջոցին, որ գոյններէն ու գիծերէն յարդելով կը թելածէ. պահը՝ արծաթ. վնիտ ցուրտ կը յամենան կաղին վրայ տուններուն, սակայն անկերպ կը մնան, անմտոյեի ու հեղուկ լուծուած գիծեր ներմակի: Ողորմելի ճշգրտապահ արեւմտի ժամերը, փողոցին ամէնօրեայ յարկանքը հաշիշով քնացնող հնդիկ հիւթ, կշռոյթ գազանի անոր ստած պատկերին. եւ տունները ա՛յ մաշած կարծես անոնց հպումէն, թափանցիկ մաշկ դեղնաբակ, վերջումը ծիրանի, բացակայ արեւին կորսում: Փողոցը հին, գլխապտոյտ անկիւններու շեղութեամբ գիծերու թիւ, որոնք միմակ՝ տարսափագու հէնձ կ'ըլլան, ընդլայնող ու ուռնացող մարթի բջիթ. սակայն շինուած տարածքին, հին եւ ամբողջ բաներուն ձեւերը խեղճ կը սողան, լուռ, մտերիմ. ձեւերը խեղճ, խոշոր բացուած աչքերու անթարթ փայլին մէջ ցաթած կերպարաններ. կռպիւնէն դուրս, տարբալոյծ, ներմակի անթափանց կարտրեմէն վիժած շուքեր, որոնք, փակած յուշի փուած բջիթներուն, իբրև եւ վերջացած կը թուին, ու բորբոսած հողերուն ետեւ, լուրջ ու պատշաճ կը կենան:

Ե. Փ.



### ՆՈՐ ՎԷՊԻ ՄԱՍԻՆ

Կանխող էջերուն տրուած գրութեան մասին գեղուցող երեսասարդը մէկ-երկու անգամ յիշած է ընոր վէպին վերջին նմուշները հրապարակ նետած Ալէն Բօզ կրէթին, եւ օգտագործած, ինչպէս նշմարեցիք, անոր թնտղատներէն մէկուն կարծիքները:

Վերջին տասնամեակին, Ներսիսի ու յառկապէս Փրանսայի մէջ, ամէնէն աւելի մեղան հոսեցնող գրական շարժումը ընոր վէպըն եղաւ, որ սակաւին կը շարունակէ թեր եւ զէժ կարծիքներու հսկայ այլքներ առաջացնել գրական աշխարհէն ներս:

Ձնոր վէպին նական նորութիւնը հին փորձերուն հանդէպ իր որդեգրած ժեստիկան կեցուածքն է անտարակոյս: Անիկա կը մերժէ հերոսը, գործողութիւնը, սեխրին ու վախճանին տրամաբանական զարգացումը, կտուցումը, եւ իրերուն տրուած եմբակաշական այլակերպումը, զբանաստեղծականացումը կը նամարէ իր գերագոյն նպատակը:

Ոմանք աւանդական վէպի գծամանկալիւց եղանակներուն ու արժեւորութիւնն զէժ յաղթանակ մը կը նամարեն այս փորձը, նոր մարդուն զգախութիւնները շատուցնոս գրեւորող արուեստի միջիջարական գիւտ մը, իսկ արիշներ խորամանկներու հնարք մը կը տեսնեն անոր մէջ: անպատասխանատու կուսակումներով անուն շինելու եւ այդ նամարով գրած դիպելու ուսումնասիրուած ուղղամարտութիւն մը կը կուսեն ընոր վէպին մէջ, որուն շահած

զիւրաքանչիւր ընթերցող, կարուած ընթերցող մըն է գրականութեան համար:

Քեզինքն պիտի կազմէ այս շարժումին մասին եղած թեր ու զէժ կարծիքներուն մէկ պատկերը եւ պիտի ներկայացնէ ընթերցողին, իր Փետրուարի թիւով:

**Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ**



**ԾԱՐԼ ՊՈՏԼԵՐ**

(1821 - 1867)

Պոսլէր անուն մըն է, որ մեր իւրաքանչիւրին միտքին մէջ կ'արթնցնէ խորհրդաւոր պատկեր մը: Ոչ ոք կրնայ անտարբեր մնալ Պոսլէր անձնաւորութեան առջեւ, որովհետեւ անոր կեանքը հզաւ ամէնօրեայ անձկութիւն մը, եւ դորձը գրականութեան մէջ ստեղծեց զնոր սարսուռ մը», ինչպէս կ'ըսէ Վէգթոր Հիւկօ:

**ԿԵԱՆՔԸ**

«Կը հաւատամ որ կեանքս ամբողջապէս կը անցնի օրէն իսկ, եւ նայել կը մնայ միշտ», կ'ըսէ Պոսլէր իր նամակներէն մէկուն մէջ:

Պոսլէրի կեանքը հզաւ ներքին եւ արտաքին ողբերգութիւն մը: Խուլ եւ անգիշոր պայքար մը բնազդներուն եւ մղումներուն միջեւ: Ան փնտոյց մագրութիւնը մոլորութիւններու սիզմին մէջէն. հաւատք որոնեց, արտաքնապէս անհաստի կեանք մը ապրելով. անզգամութեան դիմակ մը կրեց, հոգիին ալիկոծութիւնը ծածկելու համար: Իր անկումները եղան առանց մեծութեան, իր կեանքը անցուց զրեթէ մեծ քաղաքի մը պատիկութիւններուն մէջ: Իր գայթակղութիւնները լուսնէն Պայրընի մը ար-

կածներուն բեմախալները, ոչ ալ Շաթուրիանի մը Թատերականութիւնը: Նոյնիսկ Ռուսոյի մը Երիտասարդութեան սիրային հանդիպումները չունեցաւ: Չկայ իր կեանքին մէջ դէպք մը, որ չըլլայ իսկական դժբախտութիւն մը. չկայ ազէտ մը, որուն ահաւորութիւնը լուսնէ իր երգուեալ թշնամիներուն ունոցները:

Բայց որքա՞ն անկի մեզ կը յուզեն իր աղաղակները, երբ իր անկումներուն յատակը հասնելէ ետք իսկ կը գրէ իր օրագրին մէջ. «Ըլլալ հերքս մը եւ ատրք մը ինքս ինձի համար»:

Այս լուռ ողբերգութեան դատաւարները չեղան խորհրդաւոր դրեանքներ, Վենետիկի ջրանցքները եւ կոնստանտնուլը, կամ Ժիւրա լեռներու գեղեցիկ ու կանանչ տեսարանները, այլ վարժարանի մը մութ նրբանցքները, տան մը չորս պատերը, սրճարաններու անշնչիկ մըթնոլորտը եւ ջեխոտ փողոցներու մայթերը:

Բայց կեանքի մը անցուղարձերը կը ստանան որոշ դոյն եւ որոշ կարեւորութիւն նայած ենթակային անձնաւորութեան: Գերզգայուն հոգի մը անկի կը տտապի ամենայնչին դէպքէն, քան հասարակ մահանացու մը՝ իրական դժբախտութեան մը առջեւ: Զօրաւոր երե-

առկայութիւն մը կը մեծցնէ, կ'ալլափոխէ, կը հերոսացնէ տէնէն պղտիկ պատահարը, եւ շատ փափուկ սիրտ մը կ'արբւնի ամենաթեթեւ հպումէն:

Շարլ Փիէր Պոտլէր ծնաւ Փարիզ, 9 Ապրիլ 1821-ին: Ան զատկէն էր Յըրանուս Պոտլէրի, 62 տարեկան եւ Քարոլին Արչիմպօ Տիւֆէի, 27 տարեկան: Շատ մը քննադատներ ծնողներու տարիքին այս հսկայ տարբերութեան (35 տարի) մէջ կը դտնեն բանատեղծին անմնաւորութեան վերիվայրումները:

Հայրը, Ծրանուս Պոտլէր, բարեկեցիկ զինուորայինն էր: Աստուծանունը երիտասարդ մը եղած է եւ ստակ մը մտած է զպրիվանք: Այս է պատճառը որ հետագային, Պոտլէր իր բարեկամները զարմացնելու համար կ'ըսէր. «Ժամանակին» հայրս սքեմ հագած է». կամ, «Ես որ քանոնայի զուտի եմ»: Ծրանուս կը հաստատուի Փարիզ, երիտասարդ տարիքին եւ դասատու կ'ըլլայ ազնուական ընտանիքի մը զաւակներուն: Վրայ կը հասնի 1789-ի յեղափոխութիւնը: Ծրանուս, որ լաւ բարեկամներ ունի յեղափոխականներու մէջ, ոչ միայն անվաւ Կանցնի փոթորիկին մէջէն, այլ շատ օգտակար կ'ըլլայ իր երբեմնի տէրերուն, որոնք հետագային վերադառնելով իրենց հարստութիւնը եւ դերքը, լաւ պաշտօն մը կը կարգադրեն Ծրանուսային ծերակոյտի զրասենեակներուն մէջ: Ատային անդամ կ'ամուսնանայ 1803-ին եւ այրի կը մնայ զաւակով մը: Ծարիներ կողք կը հանդիպի Քարոլին Տիւֆէին: Այդ ստեղծողը արգէն հանգըստեան կոչուած էր, եւ նիւթապէս ապահով կը պարագայէր նկարչութեամբ: «Հայրս ինզն արուեստագետ մը եղած է», պիտի ըսէր հետագային իր զաւակը՝ Երբ 1827-ին Ծրանուս կը մեռնի, Շարլ հաղիւ վեց տարեկան մանուկ մըն է:

Մայրը, Քարոլին Արչիմպօ Տիւֆէյ, ունեցած է զժրջարտ մանկութիւն մը: Մայրը յղի էր իրմով, երբ ընտանեօք կ'անցնին Լոնտոն, յեղափոխութեան մարտիկն խուսափելու համար: Ասով կը բացատրուի Քարոլինի զերգրայուն եւ

մեղամաղձոտ անմնաւորութիւնը: Կանուխէն որք մնաց աղջիկը եւ ապաստան դատու իրենց ծանօթ հարուստ ընտանիքի մը մօտ, ուր հոգեպէս տառապեցաւ իր ստորագոյս դիրքին բերմամբ: Եւ երբ Ծրանուս զինք ամուսնութեան ուղեք, շատ չվարանկցաւ: Ի՞նչ պիտի ըլլար առանց օժիտի ջանքովեց տարեկան աղջիկան մը ապագան: Զգալուն, աւանդապաշտ եւ աստուածավախ կին մըն էր Քարոլին: 1828-ին, ամուսնոյն մահէն ջանն ամիս ետք, կը վերամուսնանայ վայելուչ, բարձրահասակ, 39 տարեկան զնդապետ Օփիլէին հետ: Քարոլին դուստ է վերջապէս իրեն յարմար ամուսին մը: Գնդապետ Օփիլէ կատարութեան վրաստանութիւնը կը վայելէ եւ պաշտօնի անդադար բարձրացում կ'ունենայ: Տիւֆէին Օփիլէ կը դառնայ Փարիզի երեւելի տիկիններէն: Իր սալոնը կը յաճախեն օրուան մեծ դէմքերը: Հետագային, Օփիլէ կը դառնայ զօրավար եւ զեպոստ Պոլիս եւ Մատրիտ եւ նոյնիսկ Փարիզի զինուորական կառավարիչ: 1857-ին, Քարոլին կրկին կը մնայ այրի: Նիւթական պայմանները նեղ ըլլալով՝ կը քաշուի պղտիկ տան մը մէջ Հոնֆլէօր, Աթլանտեանի ափին, ուր կը մեռնի կաթուածէ 1871-ին:

Պոտլէր իր մանկութիւնը անցուցած է հին ապարանքի մը մէջ, որուն հիմերը նետուած էին ժն. դարուն: Հոն իւրաքանչիւր առարկայ, իւրաքանչիւր ջարդուն իր պատմութիւնը: Շէնքը կը բարձրանար հրեաներու հին դերեզմանի մը վրայ, եւ մանուկ Շարլ, որ սուր հոտառութիւն ունէր, անպայման հոն ընչամ ըլլալու է հիմերուն տակէն բարձրացող փտութիւններու արտաբերումը: Այդ ըլլալու է այն պատճառներէն մէկը, որ յաճախ իր զրոյն տակ կու գան մահի եւ շէրիտի պատկերներ, ինչպէս հետեւեալ տողը.

«Ես գերեզմանատուն մըն եմ, ասուած լուսինէն»:

Իր ներաշխարհը հասկնալու համար պէտք է նկատի առնուին նաեւ ժառանգ-

զանգուրեմ արարածները, ծնողքին տարբեր տարբերութենէն անկախ՝ Վըստտորէն չենք գիտեր, թէ իր նախահայրերը ինչպիսի մարդիկ էին, ախարար թէ առողջ։ Բայց ըստ բանաստեղծին, որ միշտ սիրած է զարմացնել ընթերցողը, «Իր մախաբանները եղած են խելագար եւ այտուար մարդիկ, ենթակայ տարօրինակ կիրքերու»։ Կարեւոր է նաեւ ծանրանալ զոյգին մտածելակերպին հակառակութեան վրայ։ Հայրը զւարթ ու կեանքը սիրող մարդ մըն էր, ժ՛՛՛՛՛ զարէն եկած, Վոլթերի շունչով մեծցած, Վերսայլէ շքեղութիւններուն սկանստես կըած. մինչ երիտասարդ մայրը, միւսմաղձոտ, զգայուն, կեանքին միայն լեզի բաժակը ըմպած, կրօնքի վեհութեան հաստատցող։

Մանուկ Պոսլէր, երբ աչքերը բացաւ ու դիտեց շուրջը, ամէն կողմ տեսաւ զեղարուեստական առարկաներ, պիտաններ, նկարներ, գիրքեր։ «Պատկերները իմ առաջին կիրքս եղան», կ'ըսէ։ Հայրը, որ ինչպէս ըսինք նկարչու թիւն կ'ընէր, զինք կը պատշնէր թանկարանէ-թանկարան։ Եւ ապագայ բանաստեղծը ինք ալ սորվեցաւ գծել, նկարել գրեթէ առաջ։ Երբ հայր ու որդի մեծահասակ տուած կը ջատկին Լիւքսեմպուրգի ծառերուն աակէն, անցորդները մպխտով կը դիտէին այս զոյգը, կարծելով որ մէկը մեծ հայրիկն էր, իսկ միւսը թոռնիկը։ Եւ ապա կը լսէր անոնց զիտողութիւնը, զորս երբեք չմոռցաւ։ «Ես որ ծնր մարդու գաւակ եմ», կ'ընէր յաճախ իր ապրկարութիւնները բացատրելու համար։ Ետը սիրեց հայրը որդիական անկեղծ սիրով, սիրեց նաեւ անոր յիշատակը, եւ հակառակ որ ոչ մէկ համարում ունէր անոր նկարչական տաղանդին վրայ, զայրացաւ մօրը դէմ, որ մէկիկ-մէկիկ դուրս գրած էր նկարները։ Տարիներ ետք, 1867-ին, հընարմանաւ մը խանութը տեսաւ իր հօրը ստորագրութիւնը կրող պատու մը, ուզեց զայն գնել. «- Դրամ չունէի, - պրեց մօրը, - որպէսզի գտնէ կանխավըճար մը ընէի եւ գնէի այդ մատուցը...»

Հայրն ամուսնացաւ արուեստագետ մըն էր, բայց այս կին յիշատակները բարոյական եւ զգացական արժէք մը կը ներկայացնեն մեզի համար։

Պոսլէրի մանկութենէն չհեռացած՝ յիշեց նաեւ Մարիէթը, «մեծ սրտով սպասուհին»։ Հայրը մեռած է, մայրը ատեն մը կը հեռանայ տունէն, ծանր գործողութեան մը ենթարկուելու համար բուժարանի մը մէջ։ Մարիէթ ուսանմին կը մնայ պզտիկին հետ։ Հիմա տան բոլոր սենեակներուն, անկիւններուն եւ դարաններուն բացարձակ տէրն է Ետը։ Կը պրպտէ ծակն ու ծուկը, կը գտնէ տարօրինակ պանծեր, կը վերագտնէ իր հին խաղալիքները, եւ Մարիէթ փոխանակ բարկանալու, կը քաջալերէ զինքը, կը գուրգուրայ մայրական գուրգուրանքով մը։ Եւ տարիներ ետք համեստ սպասուհին կը գտնէ իր վարձատրութիւնը, դառնալով անմահ բանաստեղծին գրչին տակ։

«Մեծ սրտով սպասուհին,  
որմէ կը նախանձէր դուն,  
«Եւ որ կիսա կը մնցէ հաւիտս  
ածուի մը տակ»  
«Չ'արժե՞ր որ իրեն տանիմ  
ծաղիկներու փունջ մը։  
«Մեծիցները, անտ մեծիցները,  
ունին սեստր վիշտեր...»

Մայրը բուժարանէն կը վերադառնայ բուրբոխովն այսփոխուած։ Ձայնը աւելի մեղմ է, շարժումները աւելի գորովայն։ Ետը կրկին կը վայելէ մայրական շունչին ջերմութիւնը։ Կը նստի անոր ծուկներուն վրայ, կը սեղմուի մայրական տաքուկ գրկին մէջ, կը շոյժ անոր այտերը, կը շնչէ անոր թարմ ու ճերմակ մորթին բոյրը։ Ինչպէս կը բացատրէ Ֆրանսուս Փորշէ. «Շարլիմը պարզ գորով չէ, որդիական պարզ սեր չէ, այլ աւելի տարօրինակ բան մը. ան մօրը սիրահարուած է»։ Բանաստեղծը նոյն բանը կ'ըսէ, երբ տարիներ ետք կը գրէ մօրը. «Մանկութեանս մէջ կայ շրջան մը, երբ ինչ սիրահարուած էի... Ա՛հ, այդ օրերը ինձի համար եղան մայ-



բակամ սիրոյ լուսագոյն պաները: Դուն կը պատկանէիր միայն ինձի: Դուն մի- անգամայն կուտօսուի եւ ընկերու հիս էիր»:

Բայց այս երջանկութիւնը, այս «կամայ գրախտը մանկական սերերու» երկար շտեմէ: Աւելի մը տեղ գրաւած էր ձորը սրտին մէջ: Մայրը իր ժպտ- ները, իր գուրգուրանքը կը շաղկապէր իր մառիւղի մը, իր երկրորդ ամուսնոյն: Պատիկ սիրահարը այլեւս ատելով պետի ատէր այդ մարդը, այդ հակառակորդը: «Ճնղապետ Օփիէ, - կ'ըսէ Մաքսիմ Գլու- քան, - բարի եւ հասկցող մարդ մըն էր, բայց տխրիչին սիրոյ: Կը կարծէր որ միայն տխրիչիկնով կարելի է կրթել եւ գինուարները եւ մանուկները»: Աղմուկ չէր սիրէր բնաւ եւ փոքրիկ Շարլին իս- դէրը գինը կ'անհանգստացնէին: Առաջին վայրկեանէն՝ տղան հասկցաւ որ այլեւս իր առջեւ գոց էին գրախտին դռները: Մայրը տարուած նոր զգացումներով, գրեթէ կ'անտեսէր իր գաւակը: Իրենց երեմանի քաղցր մտերմութիւնը այլեւս կը պատկանէր անցեալին: Եւ կաթիլ-կա- թիլ աղուն սիրտին մէջ կը ծորէր դառ- նութիւնը, որ կ'ըլլար իր առօրեայ հա- ցը: Եւ չենք գործանոր որ իր գրչին ե- լած ըլլայ հետեւեալ տարօրինակ եւ կա- տաղի նախադասութիւնը. «Յեր մայր մը ինձի պէս գաւակ մը ունի, պէտք չէ որ կրկին ունանամայ»:

Եւ կը սկսի մութ տարիներու շարա- նը: 1832-ին, ընտանիքը կը փոխադրուի Լիոն: Եւ Շարլը զգայուն ու գտնայած՝ կը հետեւի անոնց, գոնէ իր ձորը մօտ ապրելու յոյսով: Աւա՛ղ, խորթ հայրը կը պնդէ որ սղան հեռացուի ընտանիքէն եւ իբր գիշերօթիկ աշակերտ կը դրուի Քոլէժ Ռուսայւ, ուր յաճախ իբր ըմբոստ աշակերտ կը դատապարտուի գնտանի եւ չոր հացի, ծրր կը վերադառնան Փարիզ, Պոսյէր իր ուսումը կը շարունակէ Լաի Լը կրամ Գոլէժը, ուր օրերը քաշկռտե- լով եւ քանի մը մրցանակ ալ չահելէ ետք, կը վտարուի իբր ըմբոստ ու անբա- րոյական աշակերտ: Երբ չօրը զայրոյ- թը բուռն կ'ըլլայ: Ինք աղուն կը պատ- րաստէր փայլուն ապագայ մը, դիւա-

նագիտական ապարէզին մէջ, մինչ տը- ղան իբր անպիտան դուրս կը շարունակէր գարացէն: Երկու հակառակորդներու բա- խումը կ'ըլլայ սաստիկ, միայն ձորը միջամտութիւնը կը մեղմացնէ մթնո- լարող: Նոյնիսկ քանի մը ամիս զինա- զագար կը հուշակուի, մանաւանդ որ Շարլ ինքնաշխատութեամբ կը յաջողի Պաքալորիայի քննութիւններուն եւ խորթ հայրը կը ստանայ պաշտօնի բարձրա- ցում եւ կը դառնայ Զորավար Օփիէ:

Չինադադարը կը խզուի, երբ առ- օրեակ մը ընտրելու պահը կը հնչէ: Զօ- րավարը դիմումներ կը կատարէ, որ- պէտք խորթ դասակը իր առջեւ բաց դռնէ արտաքին գործոց նախարարու- թեան դռները, մինչ Շարլին երազը ու- րիչ է. ան որոշած է նետուիլ զբականու- թեան ապերախ ապարէզը: Եւ այս պայքարին մէջ, ոչ միայն մայրը չի մը- նար չէզոք, այլ կը ջանայ համոզել որ- դին, որ չհակառակի իր ամուսնոյն ու- ռոշումներուն: Ա՛խ, այդ մայրը, այդ պաշտելին: Ի՞նչ պաղարկեալութեամբ կը վերաբերէր զինք սիրող գաւակին փափուկ սիրտը:

1830-ին, Պոսյէր կը լքէ վերջնակա- պէս ընտանիքը ու կը հաստատուի Լա- տինական Թաղը: Տասնութ տարեկան երիտասարդ մըն է, առանց պաշտպա- նութեան, առանց փորձառութեան, որ կը նետուի Փարիզի ամէնէն վտանգաւոր շրջանակին մէջ: Դեկը կորսնցուցած առ- յապատանաւի մը պէս կը զարնուի հոս ու հոն ցցուած խութերուն: Հոն կը գըտ- նէ իր դասընկերներէն ոմանք եւ անոնց հետ կ'ապրի շուայտ ու զեխ կեանք մը: Իր շուրջը կը դառնան թիթեռնիկներու պէս դիւրամտոյց աղջիկներ: Հանրա- տունները պահ մը իրեն մոռցնել կու ան կորսուած դրախտը, ձորը անպաշտան մտերմութիւնը: Եւ կը պատահի անխու- սափելին, կը պատահի դէշ արկածը, որ իր կեանքը ցմահ կը կնքէ սեւ դրոշմով մը: Հետագային իր տաղանակն գէշ վի- ճակը բացատրելու համար, իր բարե- կամներէն մէկուն կը գրէ. «Ներխառնող տարիներու, անվարձութեամբ պատ-

ճառաւ վարակուեցայ սեռայիմ հիւանդութեամբ մը...» Շատ դժուար չէ այդ հիւանդութեան անունը դրել սեւեռվ ճերմակի վրայ՝ սիֆիլիս: Երկար տարիներ խնամեց այդ ախտը, առանց բժշկի դիմելու: Եթէ այդ ախտը բարոյական անկում չպատճառուէր իր հողեկան տաճարին մէջ, եւ չքանդէր իր բարիքն, գեղեցիկն ու մաքուրին հանդէպ ունեցած պաշտամունքը, սակայն վատթարացուց իր առողջութիւնը եւ գուցէ պատճառ դարձաւ իր կանխահաւ մահուան:

Պորթին մէջ Պոտլէր երկշուտ էր կին արարածին հանդէպ, մանաւանդ պատուաւոր կիներու: Իր յանդիմութիւնը կը դռնէր միայն պոռնիկներու եւ բնականէն դուրս արտաշին ունեցող կիներու հետ: Սեռային հաճոյքի առաջին մատակարարուհին արդեօ՞ք Հրէուհի Սառան էր: Կրնաք վկայութեան բերել իր իսկ ոտանաւորները:

Գիշեր մը, երբ պառկած էի անոնի հրէուհիի մը մօտ, ինչպէս դիակ մը ընկաղմամբ ուրիշ դիակի մը երկայնքի...

Եւ կը սկսի շարանը անքուն գիշերներու, սրճարանէ-սրճարան թափառումներու: Կը պարպէ գիւնի շէշերը երաբու ետեւէ: Եւ որովհետեւ Պոտլէր լեցուն քսակ մը չունի՝ կ'ընտրէ վատ ճաշարանները, ամէնէն տխրահոյակ կայանները:

Լուրը կը հասնի զօրավար Օփիցի աւանջին: Սպան կը կատղի, որովհետեւ տղան արատ կը բերէր իր անունին: Մայրը զաղտնի արցունք կը թափէ: Ընտանիքի անդամները եւ մտերիմները ժողովի կը նստին եւ կ'որոշեն շեռատ քայլաբար հեռացնել Փարիզի վտրձութիւններէն եւ մտանքներէն: Եւ որպէսզի այս հեռացումը թուի բնական՝ կ'ուզեն պատիժ դարձնել օգտակար, տղուն աչքին ցոլացնելով առեւտուրի շահաբեր հորիզոններ:

Ապահովագրեալ եւ դադանի նամակով մը՝ զօրավար Օփից Շարլը կը յանձնէ իր հին բարեկամներէն մէկուն

խնամքին: Այդ բարեկամը նաւապետ Սօր կը կոչուի եւ մօտ օրէն ճամբայ պիտի ելլէ գէպի Կալկաթա, Հնդկաստան: Որքին մէջ, ինչպէս ըսինք, Օփից գէշ մարդ մը չէ: Կը խորհի տղուն ապահովել հանգստաւէտ ճամբորդութիւն մը, եւ որովհետեւ պիտէ, թէ բարեկամութիւնը չի կրնար ամէն բանի հասնիլ, նաւապետին կը վճարէ կանխիկ 5,000 Փրանք, զոր կը վերցնէ բանաստեղծին ստանալիք ժառանգութենէն:

Նաւը խարխիս կը վերցնէ Պորտոյի նաւահանգիստէն, 9 Յուլիս 1841-ին: Պոտլէր դժգոհ է Փարիզը ձգած ըլլալուն համար, բայց երկար այս ճամբորդութիւնը կը հետաքրքրէ զինք: Կիտի տեսնէ նոր երկիրներ, նոր ծովեր, նոր հորիզոններ: Եւ որովհետեւ սովորութիւն ըրած է դժգոհիլ ամէն ինչէ, շատ զէշ կ'արտայայտուի նաւապետ Սօրի մասին, որ խորքին մէջ շատ բարի մարդ մըն էր, եւ առանց խորհելու պաշտօն ստանձնած էր դիւրազգած, զգայուն եւ հեղձող այս երիտասարդը խրատելով իմաստութեան ճամբան բերելու: Ճամբորդութիւնը եղաւ հանդարտ միջնեւ խորի Յուսոյ Հրուանդանը, ուր նաւը կը բռնուի նմանը շանտաճ փոթորիկի մը, որ հինգ օր կը տեւէ: Սեպտեմբեր 1-ին, նաւը խարխիս կը նետէ Փոք Լուիի առջև, Ֆրանս կղզիին նաւահանգիստը:

Պոտլէր երեք շաբաթ կ'անցնէ կղզիին մէջ: Աչքերը կը լեցուն արմատներէրու սլացիկ հասակով, խափշիկներու ճկուն մարմիններուն կշռութաւոր քայլաճառով, վերջալոյսին շաշխարհիկ դոյներով: Սակայն երբ նաւը խարխիս կը նետէ Պուրպոն կղզիին առջև, Պոտլէր կը մերժէ շարունակել ճամբորդութիւնը, եւ Ալսիտ նաւով կը վերադառնայ Ֆրանսա: Այս ճամբորդութիւնը բնութանը տեսց տասը ամիս, եւ չունեցաւ իր ընտանիքէն սպասուած արդիւնքը: Պոտլէր ոչ մէկ միջոց ունէր վաճառականութեան: Միայն հարստացաւ իր ներաշխարհը նոր պատկերներով, նոր տեսարաններով, նոր լոյսերով եւ նոր գոյներով: Ըստ սովորութեան, երբ Փա-

բիզ վերադարձաւ, տարօրինակ պատմութիւններ ստեղծեց, դարձացնելու համար ունկնդիրները: Օրինակի համար կ'ըսէր.— «Այս Թամրորդուքիւնը ամբողջովին անօգուտ չեղաւ. Պալգամի ամբողջական գործերը տարած էի հերոս, զանազան ուշի ուշով կարդացի մաւռն կամրջակին վրայ, որովհետեւ ազատ պահ շատ ունէի»:

Վերադարձէն երկու ամիս ետք, Պոտլէր կը դառնայ չափահաս օրէնքի առջև, եւ անկախ: Կը պահանջէ ու կը ստանայ Հօրմէն մնացած ծառանքը, 75,000 Փրանք, մեծ գումար մը ժամանակին համար, երբ նկատի առնենք որ տան մը տարեկան վարձքը 200—էն 300 Փրանք էր: Նոյն օրը, նամակ մը ձգելով մօրը սեղանին վրայ՝ գաղտնօրէն կը հետանայ տունէն:

Պոտլէր կը վարձէ համեստ յարկաբարձին մը, իր սիրած թագէն, Սէն Լուի կղզիէն: Հիմա ազատ է ամբողջովին. ազատ երազելու, պտտելու, գրելու, ազատ՝ ըմանալու ցերեկները եւ թափառելու գիշերները: Կը վերադառնէ իր հին բարեկամները, կը յարաբերի Թէոտոր աը Պանվիլի, Թէոֆիլ Կօթիէի, Պալգամի եւ Փերրոս աը Ներվալի հետ:

Ամէն գիշեր, ընթերիչ ետք, կը հաւաքուին սրճարանի մը մէջ եւ գիտիք դաւաճներ պարպելով, ծխամորեկոտ մուխով շրջապատուած, կը զրուցեն, կը վիճարանին, ոտանաւորներ կ'արտասանեն: Կէս գիշերէն ետք կ'ելլեն գուրս, կը թափառին հազիւ լուսաւորուած մայրիկներու վրայ, եւ առտուան գէժ կը վերադառնան ամայի փողոցներէն, երբ աղբ եւ հին լաթ հաւաքողները կը սկսին իրենց դործին:

Պոտլէր մեծ խնամք կը տանի իր անձին եւ հաղուտին: Ձեռքերը միշտ խնամուած են, մազերը երկար, հագուստները եւ զլխարկները պատրաստուած ամէնէն երեւելի դերձակներուն կողմէ, իր իսկ ցուցմունքներուն համաձայն: Շապիկը միշտ խնամուած է եւ մաքուր, եւ ոսկի գունդով դաւազան մը ունի ձեռքը: Իսկական տամի մը:

Բայց նկատուրի կեանք մը չ'անցընէր տամիին: Կ'ուզէ նախ օգտուել ազատութենէն եւ դրամէն: Գիտէ Հասցէները այն բոլոր կիներուն, որոնց մահերը պատրաստ է զինք ընդունելու: Պոտլէր չի փափաքիր կապուել համանուհիի մը, որովհետեւ դիտէ, թէ այդքան դժուարութեամբ ձեռք բերած ազատութիւնը պիտի կորսնցնէ, եւ պիտի կորսնցնէ նաեւ գրելու եւ աշխատելու իր անկախութիւնը:

Սակայն իրիկուն մը կը պատահէ անխուսափելին, կը հանդիպի իր շարհրէտակին: Ներկայացման մը ընթացքին, բեմին վրայ, օպատուհիի դերին մէջ կը տեսնէ կէս խափշիկ աղջիկ մը: Երկայնահասակ, ճկուն մարմնով, բարակ մէջքով, լայն կոնքերով ու ցցուն ստիճաններով, Սեւ վեներա: Եւ անմիջապէս իր հոգիին մէջ կը բարձրանան կըռութաւոր տողեր.

Երբ աշխամային գաղջ իրիկուն մը,  
Երկու այճեքս գոց,  
Կը տեսնեմ անհաւնութիւնը  
Երջանիկ ափերու...  
Իրախտային կզգի մը, ուր բնութիւնը  
Կու տայ  
Տարօրինակ ծառեր եւ համեղ  
Գրուզմեր...  
Եւ կիներ, որոնց այճիմ մէջ կը փայլի  
անկեղծութիւնը...

Յայտագրին վրայ կը փնտռէ բոց շոքուրի դոյնով, խոշոր աչքերով եւ հաստ շրթունքներով աղջկան տունը, ու կը կարգայ. Ժամն Տիւլալ: Կ'իջէ դոնապանին քով ու տեղեկութիւններ կը հարցնէ մուք երկիրներու աղջկան մասին: Եւ կը հասկնայ որ Ժանն երկչոտ եւ իրտչող արարած մը չէ եւ կարելի է անյապաղ հանդիպում մը ունենալ: Բայց Զրանսուա Պոտլէրին զաւակը գիտէ յարգել իրական սեռին ներկայացուցիչները, եւ Ժաննին հետ կը վարուի, ինչպէս պիտի վարուէր հայրը Մարի Անթուանիթը շրջապատող կոմսուհիի մը հետ: Ամենամօտիկ ծաղկավաճառէն կ'ապսպրէ խոշոր ծաղկեփունջ մը եւ

քաղաքավար տոմս մը ընկերակցելով անոր, կը դրկէ անտաղանդ դերասանուհիին, անկէ խնդրելով ժամադրութիւն մը: Ան կը հեռանայ թատրոնէն:

Ճամբու ընթացքին, խոնաւ մայթին վրայ կը զգայ անասելի հանդիպում մը, զգայարանքներու անդիմտղբիչ յուզում մը: Եւ վանելու համար տենչանքին կատաղութիւնը, մտքով ետ-դարձ մը կ'ընէ դէպի տնցեալը: Կը տեսնէ Ֆրանս կողմին, իր թաւշեայ ոսկեգոյն աւազով, ուր ծովը կու գայ սիրահարի մը պէս, արմաւենիները, որոնց վրայ կ'երգեն դոճազոյն թռչուններ, շաքարեղէնները, որոնք մեղմ հովին հպումներուն տակ կը շարժին հնդիկ պարուհիներու պէս: Կը տեսնէ հոն աշխատող ստրուկներու կորածամակ մարմինը, եւ այս արեւադարձային մեղկ տեսարանին մէջ անմոռանալի եւ արձանային մերկութիւնը Մալապարցի ստրուկիին, զոր յանցանքէ մը համար, ծառի մը բունին կապած էին եւ կը գանակոծէին:

Յաջորդ գիշեր, Ան վեմնիւք իր տաք մարմնին դազանիքները կը ցուցադրէ զՄայլահար բանաստեղծին աչքերուն առջեւ: Եւ մինչեւ ատուտ զգայուն ուռնադերը մխրճած անոր սեւ բաշերուն մէջ, Պոտլէր կ'անէնայնայ: Այլեւս այդ մազերուն իւրաքանչիւր թելը անքակտելի շուան մըն է, որով նոր Տալիսան կը հանդուցէ բանաստեղծին ծփացող կամքը:

Ո՛վ է ժաման Տիւվալ: Սէն Տոմինիկ կը զիտին մէջ ծնած կէս խափշիկ այս աղջրկան մասին կը պակսին ամէն տեղեկութիւն: Ան գոյութիւն կ'առնէ միայն այն առան, երբ Պոտլէրի աչքերը կը հանդիպին իրեն, ինչպէս խաւարին մէջ կորսուած մոլորակ մը, երբ իր թաւալումին ընթացքին կը հանդիպի արեւի ճառագայթներուն: Անյայտ ծնողքով անուս այս աղջիկը պիտի ներշնչէր «Անիծեալ քանաստեղծին» լաւագոյն առողերը: Փարիի սալալատակներուն վրայ այս կիսավայրենի եւ գեղեցիկ արարածը, ապրեցաւ Պոտլէրի կողքին եւ քաջալերեց անոր մոլութիւնները:

Պոտլէր, որ մինչ այդ խուսափած էր



Ժաման Տիւվալ Գործ՝ ՄԱՆԻ

կիներու հետ երկար յարաբերութիւն մշակելէ, երկրորդ օրն իսկ ուզեց Փանն ունենալ իր մօտը: Վարձեց աւելի ընդարձակ տուն մը, դնեց կահ-կարասիներ, զարդեր, նկարներ, արձաններ: Երկու տարիէն հայեցաւ ժառանգութեան կէտը: Պոտլէր ստորադրեց մուրհակներ, որոնք մինչեւ մահ զինքը պիտի հալածէին ուրախաններու պէս: Լուրը կը հասնի մօրը եւ խորթ հօրը: Զօրավար Օփիք, սիկնոյ հաւանութեամբ կ'առնէ կարեւոր որոշումներ, վերջնակէտ մը դնելու համար Շարլի զխտութիւններուն: Կը հաստատուի Դաւաղան խնամակալութիւն մը, որ կը հսկէ մնացած զուժարին վրայ, եւ պաշտօն կը յանձնուի նօտար Անսէյին որոշել ամսավճար մը, որ բաւական ըլլայ ամուրի երիտասարդի մը ապրուստին եւ տան վարձքին:

Այստեղ կը սկսի բանաստեղծի կեանքին դժոխային մասը: Կը շարունակէ ծախսել առաջուան պէս: Պարտքերը կը շատնան, մուրհակները կ'անցնին ձեռքէ-ձեռք: Շատ նեղի մնացած միջոցին՝ կը դիմէ մօրը, որ կարելին կ'ընէ իր իսկ միջոցներով օգնելու անառակ զաւկին: Տան վարձքերը չեն վճարուիլ ամիսներ, եւ Պոտլէր կը ստիպուի այլափուկ խաղալ տանտէրերուն հետ: Կ'անցնի տունէ-տուն, պանդոկէ-պանդոկ: Եղած են ամիսներ, որ փոխած է վեց քնակարան: Ժաման, որ այլեւս ձգած էր թատրոնը, կը վարժուի ծուլութեան: Այլքով կու տայ ինքզինք: Ամէն օր գինիի պարսպ շիշեր կը դիզուին սենեակին մէկ

անկիւնը: Պոսլէր արդէն լաւ խոնդ մըն է: Եւ որովհետեւ երկուքն ալ չափ ու սահման չեն ճանչնար, կը դառնան ալքային սարուկները: Այնքան' որ այլեւս Պոսլէր չի կրնար հանդուրժել ջուրով լեցուն շիշի մը տեսքին: Կը խմէ նաեւ իր ծանօթներուն հետ, սրճարաններու եւ զինեատուներու մէջ: Աւելին, անոնց հետ կը սարքէ խնճոյքներ, որոնք կը տեսնէ զիշեր ու ցերեկ: Կը վարժուի աֆիոն ծխելու: Արդէն ստամոքսին ցուները մեղմացնելու համար կը զործածէր աֆիոնով պատրաստուած մտանպաւոր հեղուկ մը, լաւտամուս: Կը յաճախէ Հաշիշիմներու ֆիլալը, որուն հիմնադիր անդամներէն մէկն էր իր բարեկամը Թէոֆիլ Կոթիէն: Հոն, շտաբը քանի մը անգամ կը հաւաքուէին ու կ'ըմբռնէին իր կամանջ խմորին ստեղծած գիթական զբախտը:

Եւ այս արուեստական դրայստմբումն կը յաջորդէին դժոխային զարթնումներ:

Երբ անասակներու աչքին կը բացուի ճեղքակալի ու վարդազոյն այգը, Ձեռք-ձեռքի բռնած կրծոյ իտէալիմ հետ, Նիրիսոյ անասունին մէջ կ'արթնանայ հրեշտակ մը:

Պոսլէր կը տառապէր, որովհետեւ զիտէր, թէ կ'ստորի անդունդի մը յատակը: Գիտէր չափել իր վիճակին ստորնութիւնը եւ արարքներուն վատութիւնը: Նոյնիսկ արբեցութեան գիրկը, մոռացութիւնը չէր գտներ, մինչ միւս ընկերները անասուններու պէս կ'որոնային իրենց երջանկութիւնը: Եւ իր հիացողներէն մէկը, մեր զբաղանդութեան մէջ, տարիներ ետք իր տեղը պիտի ազազակէր:

Մտտանալ մտտանալ, մտտանալ ամէն ինչ, Ամէնին մտտանալ:

Ձյիշիլ, չխորհիլ, չսիրտալ, հեռանալ: Եւ այս յստակատեսութիւնը զինք կը զանազանէր միւսներէն, զինքը կը զարմնէր եւ դատաւոր եւ զահիճ, իր հոգիին մէջ սերմանելով մեղքի, զղու-

մի եւ փրկութեան դաղափարը, կ'ըլլար միանդամայն եւ յիշքը եւ դաշտը: Եւ աչքերը վեր առնելով կ'ազազակէր:

Կը հայցեմ ոգորմութիւնդ, ով Գուց, Միակը որ կը պաշտեմ, Մութ անդունդին յատակին, ուր զլորած է սիրտս...

Եւ օր մը, երբ ամէն չափ ու սահման անցած էր, եւ ինկած յուսահատութեան յատակը, Պոսլէր կ'որոշէ անմասպան ըլլալ: Լայն տեղեկութիւններ կը քաղէ իր փելիսոփայ բարեկամ Գուգիէնէն հոգիի անմահութեան մասին, եւ իր միւս բարեկամէն, բանաստեղծ եւ կախարդ Լուի Մէնարէն կը խնդրէ որ իրեն համար պատրաստէ սրուակ մը փրուսակամ ասիտ: Բայց այս վերջինը կուհելով բանաստեղծին միտքը՝ կը մերժէ: Բայց քանի մը օր ետք, օր ցերեկով, սրճարանի մը մէջ, Պոսլէր զանակ մը կը խոթէ կուրծքը եւ կը վերատարուի թեթեւօրէն: Անմիջապէս զինքը կը փոխադրեն մօրը տունը, նոյնիսկ զօրովար Օփիք կը յուզուի: Որոշում կը տրուի վճարել բանաստեղծին պարտքերուն ամէնէն անհրաժեշտները, եւ զինքը ընդունել ծնողական յարկին տակ: Ինչ կը հետապնդէր Պոսլէր այս յուսահատական արարքին ղեկելով, զարմացնելով իր շրջանակը, ու շարժութիւնը գրաւել մոռացկոտ եւ զգայուն մօրը, թէ վերջ տալ կեանքին: Այս ուրիշ առեղծուած մըն է, անկցնելիք իր տարօրինակութիւններուն:

Հաղիւ ապաքինած, կրկին կը լքէ Օփիքներու տունը, ու կը վազէ ժամն Տիւվալի գիրկը, վերագտնելու համար իր դժոխային կեանքը: Եւ քաղաքի թուրուհին մէջ կը վերսկսի անճուն գիշերներու եւ գեհնական ցերեկներու շուրջպարը:

Սակայն այս անտակութիւններուն մէջ ինչ կ'ըլլայ գործը: Ինչպէ՞ս կը ծընին այդ շինջ ազամանները, որոնք մեզի հիացում կը պատճառեն: Ինչպէ՞ս ժամանակ գտած է կոկեյլու եւ կատարելագործելու իր անմահ բանաստեղծու-

թիւնները: Պոտլէր յամառ եւ շարունակական աշխատող մը չէ Պալզաբի պէս. սակայն իր ուղեղը ծոյլ չէ, միայն չի սիրեր տարածուիլ: Ուրկէ՛ կտորներուն կարճութիւնը: Երբ թուղթին առջեւ կ'անցնի, արդէն ամէն ինչ կազմաւորւած է, եւ սպազորուած իր ներսիքին. եւ ինչ որ կու տար առաջին ժայթքով՝ արդէն շատ լաւ էր. ինք սակայն չէր գոհանար ատկէ, կը փնտռէր կատարելութիւնը, կը սրբադէր, կը կոկէր մինչեւ վերջին ստորակէտը:

Արդէն սկսած էր աշխատակցիլ գըրական եւ դեղարուեստական հանդէսներու, անոնց տալով պատճառներ եւ բանաստեղծութիւններ: Եղաւ հմուտ եւ խորհմատ քննադատ՝ արուեստի բոլոր մարզերուն մէջ: Վեր հանեց արժէքը նկարիչ Տըլաքրուսյին, բանաստեղծ Հանրի Հայնէի եւ երաժիշտ Ռիչարտ Վահէնէի եւ շատ մը ուրիշներու, որոնց ստղանդը կորսուելու վրայ էր իրենց շրջանակին անտարբերութեանը մէջ:

Պոտլէր ապրեցաւ նաեւ 1848-ի յեղափոխութեան փոթորկայից օրերը: Ամբողջ երկրասարդութիւնը եւ մտաւորականութիւնը մէկ մարդու պէս կանգնած էր Լուի Ֆիլիպի թագաւորին կառավարութեան դէմ: Փողոցներու սալայատակները կը քանդուէին, պատնէշներ կը բարձրանային ուղղադիտական կէտերու վրայ: Բանաստեղծը, որ շուտ կը խանդավառուէր՝ իջաւ փողոց, ո՛չ միայն կառավարութեան դէմ պայքարելու համար, այլ վրէժը լուծելու համար իր խորթ հօրմէն, որ գինուորականութեան մէջ բարձր դիրք մը կը վայելէր: Կարմիր փողկապ մը վզին, խուճ մը երիտասարդներ կ'առաջնորդէր դէպի Թիւրքիի դղեակը: Անոնց հետ թալանեց զինազործի խանութ մը, փամփշտակալ մը կապեց մէջքին, ձեռքը բռնեց նոր հրացան մը... որ մնաց կոյս՝ իր հօրիկն պէս: Այս մթնոլորտը կ'ողելորէր զինքը, կ'ալափոխէր: Մանաւանդ որ այս թոհուբոհին մէջ պարտատէրերը լուռ ու մունջ պահուրտած կը մնային իրենց տան մէկ անկիւնը եւ կը վախնա-

յին երեւնալու պարտականներու:

Սակայն կամաց-կամաց անկարգութիւնները վերջ կը գտնեն, կեանքը կը մտնէ իր սովորական հունին մէջ, պարտատէրերը կ'իջնեն փողոց եւ պարտականները կը քաշուին իրենց մուկ թաքրոտոցը: Պոտլէր հալածուած որբի մը պէս կը փախչի տունէ-տուն: Գաղափարները փոխուած են, յեղափոխութիւնը միայն յուսախաբութիւն բերած է իրեն. կը դառնայ հակահանրապետական: Այլեւս Փարիզի մէջ կեանքը իրեն անկարելի կը դառնայ, կ'որոշէ մեկնիլ Տիժոն, հոն սկսելու ու աւարտելու համար վէպ մը, որմէ կը յուսայ համբաւ ու հարստութիւն: Ատենէ մը ի վեր մայրը բացակայ է Փարիզէն: Զօրավար Օփիք Ֆրանսայի զինպանն է Պոլիս, յետոյ Մատրիտ. մայրը դեսպանուհի: Դրամական ոչ մէկ յոյս այդ կողմէ:

Երկար չի մնար Տիժոն, շուտով կը վերադառնայ Փարիզ, որուն կարօտը ունի: Եւ կը վերսկսի դժոխային շուրջպարը տունէ-տուն, սրճարանէ-սրճարան: Այդ օրերուն է որ իր հօգիին մէջ կը ծագի անսպասելի լոյս մը. օտար թերթի մը միջոցաւ կը ծանօթանայ միւս անիծեալ բանաստեղծ Էտկար Ալան Փոյի գործին: Կ'ուսումնասիրէ անոր կեանքը, որ այնքան կը նմանի իր կեանքին եւ կ'ուզէ իր ամերիկացի եղբայրը ծանօթացնել հանրութեան: Անմիջապէս կը ձեռնարկէ անոր գործին թարգմանութեան: Պարբերաբար լոյս կը տեսնեն Տարօրինակ պատմութիւններ, Տարօրինակ Ողբ պատմութիւններ, եւ Արքիւր կորտըն Փիպի արկածներուն նաեւ Փոյի բանաստեղծութիւններուն հիանալի եւ անդերադանցիլի թարգմանութիւնները: Ամերիկայի մէջ Փո անուն լուծէր գրեթէ: Պոտլէր զինք նշանաւոր դարձուց Ֆրանսայի մէջ, ուրիշ անոր համբաւը վերադարձաւ իր ծննդավայրը: Երբ Պոտլէր կ'ազօթէր, ինքզինքը անարժան զգալով իբր միջնորդ կը գործածէր, հայրը, Մարիքը կամ Փօն:

Այդ օրերուն է որ կ'ունենայ ուրիշ հանդիպում մը, որ մեծ ազդեցութիւն



Մատամ Սապաթիկ

պիտի գործէր եւ կեանքին եւ գործին վրայ: Այդ անձը կը կոչուէր Տիկին Սապաթիկ: Տիկին Սապաթիկ գրեթէ Պոտլէրի տարիք ունէր: Զինքը ճանչցողներէն կ'իմանանք որ Տիկին Սապաթիկ զեղեցիկ այրի մըն էր, կեանքը եւ արւեստը սիրող: Իր դահլիճը բաց էր օրւան դրողէտներուն, բանաստեղծներուն եւ արուեստագէտներուն: Բարձրահասակ, ճերմակ մորթով, մետաքսայ շաքանակայոցն մազերով եւ խնդուն երեսով կին մըն էր ու սիրահարներուն թիւը՝ անհամար: Կը յանձնուէր անոնց, եթէ արուեստագէտ ըլլային. եւ անոնք ալ իրենց երախտագիտութիւնը յայտնելու համար կամ իր արձանը կը քանդակէին, կամ դիմանկարը կը դժէին եւ կամ բանաստեղծութիւն մը կը նուիրէին իրեն:

Ըստ սովորութեան, Պոտլէր եղաւ ստորինակ սիրահար մը: 1852-էն մինչև 1857, անանուն նամակներ եւ բանաստեղծութիւններ զրկեց իր կուռքին, առանց վարձատրութիւն մը խնդրելու անոնց փոխարէն, այս դիւրամատոյց զեղեցիկուհիէն: Կ'ուզէր մշակել չոքեկան սէր մը, անշահախնդիր ու պղտոր-

նական: Զայն կը նկատէր պահապան հրեշտակ մը, մուսա մը, Մատոննա մը անմատչելի: Երբ 1857-ին լոյս տեսաւ Պոտլէրի գիրքը, եւ հոն հրատարակուեցան Տիկին Սապաթիկի ձօնուած ոտանաւորները՝ զազանիքը, որ արգէն զաղտնիք մը չէր, երեսան եկաւ: Տիկին Սապաթիկ, որ զուշակած էր իր խորհրդաւոր ասպետը, որ լայն ու բարի սիրտ մը ունէր, ուղեց վարձատրել իր հաւատարիմ հրդիշը եւ իր զեղեցիկ մարմնին դանձերը բացաւ Էրկիւզած պաշտողին առջև: Արդիւնքը եղաւ յոսախաբութիւն մը, փաստ՝ հետեւեալ հրկտողը, զոր Պոտլէր գրեց իր սիրուհիին:

«Բամի մը օր առաջ, ինծի համար աստուածուծի մըն էիր, զեղեցիկ եւ անբոնարարիլի: Հիմա գարձար կիմ»:

Ուրիշ տեղ մը բանաստեղծը այս ձեւով կը մեկնարանէ կին արարածին էութիւնը.

«Կիմը, - կ'ըսէ, - հախտակն է տանտիլի, այդ պատճառաւ ինծի տաղում կը պատճառ: Կիմը բնական արարած մըն է, այսինքն անելի»:

Մինչև 1857 Պոտլէրի բանաստեղծութիւններուն մեծ մասը ցրուած կը մնար ասղին-անղին, պարբերագիրքերու եւ հանդէսներու մէջ: Որոշեց զանոնք հաւաքել ու հատոր մը կազմել: Վերնագիրը, սակայն, կը մնար անգտանելի: Կը տատամէր Լիմպոս, կամ Լեպիլեն տիտղոսներու միջև, երբ իր բարեկամներէն, բանաստեղծ Հիփոլիտ Պապու իրեն յուշեց այն վերնագիրը, որ հուշակար պիտի դառնար՝ - Զարին ծաղիկները: Պոտլէր հաւանցաւ ու մեծ խնամքով սկսաւ դասաւորել ձեռագիրը: Գործը այնքան գէշ համբաւ ունէր, որ հրատարակիչները մերժեցին զայն հրատարակ չանել: Բայց ի վերջոյ զանուեցաւ յանդուած ու խելացի մէկը, Փոսլէ Մայասի, որ իր վրայ առաւ այս թունաւոր ծաղիկները ի լոյս ընծայելու զժուարին աշխատանքը:

Տպագրութիւնը սկսաւ Եռանուարին: Փուլէ, որ շատ ճաշակաւոր տպագրիչ մըն էր, մեծ խնամք կը տանէր էջերու դասաւորման, գիրերու եւ թուղթի տեսակին: Բայց Պոտլէր, տարուած իր կատարելագործելու տենչէն, սրբապրութիւն կ'ընէր սրբապրութեան վրայ, փոփոխութիւններ կը պահանջէր, մեծ վէճերու զուտ բանալով իր եւ Փուլէի միջեւ: Եռանուարի գործը հրատարակ ելաւ, ձեռնած՝ դրականութեան վարպետ Թէոֆիլ Կոթիէի:

Յաջողութիւնը եղաւ կայծակնային: Թերթերուն մեծամասնութիւնը, սակայն, խտտօրէն քննադատեց գործը, մասնաւոր Ֆիկարօն: Եստ մը քննադատներ լուսմնացին, ինչպէս Աէնթ Պէօփ, որ Պոտլէրը կը կոչէր սիրիլի սղաւ: Միայն քանի մը հաւատարմներ պաշտպան կանգնեցան բանաստեղծին:

Օգոստոսին պայթեցաւ ուսմը: Զարիմ ծաղիկնիրը գործին հեղինակը եւ հրատարակիչը դատարան կանչուեցան: Գործը կը նկատուէր անարգանք մը հանրային եւ կրօնական բարոյականին դէմ:

Քանի մը ամիս առաջ, նոյն ամբաստանութեան արժանացած էր Յիօպէրի Մառաւի Պովարիմ, եւ սակայն հեղինակը եւ հրատարակիչը անպարտ արձակուած էին: Նոյն դատարանի տուհաւ, նոյն փաստաբանով ներկայացան Պոտլէր եւ հրատարակիչը: Բայց այս անգամ դատաւորները եւ դատախազը որոշած էին վրէժ լուծել եւ զգացնել իրենց զոյւթիւնը: Հակառակ բերուած փաստերուն, հակառակ ուրիշ հեղինակներէ բերուած վրան բաց ու գայթակղեցուցիչ մէջբերումներուն, հեղինակներ՝ որոնք կը վայելէին հանրութեան եւ կառավարութեան յարգանքը, ինչպէս Լամարթին, Միսէ, Պէրանժէ, դատարանը հետեւեալ որոշումները առաւ. հեղինակը դատապարտեց 300 Փրանք, իսկ հրատարակիչը 100 Փրանք տուգանքի: Գէրքը կրնար իջնել հրատարակ, պայմանաւ որ անկէ ընթացէին վեց կտորներ, որոնք նկատուած էին անբարոյական:

Թէպէտեւ սրահին մէջ խոնուած երիտասարդութիւնը «Կիցցէ Պոտլէր» կը պոռար, սակայն ինքը՝ բանաստեղծը՝ շմամ կը մնար անբաստանեալներու աթոռին վրայ, եւ տարիներ պիտի մնար այս անարդար վճիռին ազդեցութեան տակ:

Նոյն տարին, հոգին աւանդած էր բանաստեղծին թիւ մէկ թշնամին, զօրավար Օփիք: Անոր կտակին մէջ, Եարլին անունը երբեք չէր յիշուած: Իր արիւնջի ձրածնն ու մեծ բան չէր, փոքրիկ տուն մը Ատլանտիկ եզերքը, Հոնֆրէլօր, եւ քանի մը հազար Փրանք տարեկան եկամուտ:

Սակայն, մայր ու զաւակ լզտան իրենց նախկին մտերմութիւնը, հակառակ որ իրենց փոխանակած նամակներուն մէջ կը զլացուի նոր գորով: Քարտին, որուն նիւթական պայմանները անձուկ էին, լքեց Փարիզը եւ հաստատուեցաւ Հոնֆրէլօր եւ զաւակը կրկին ինկաւ իր մղձաւանջներուն մէջ:

Պոտլէր ատեն մը ապրեցաւ Փարիզ, Ժանն Տիւվալին հետ, որ կորսնցուցած էր իր երբեմնի դեղեցկութիւնը եւ դարձած պիեմոլ քուրջ մը: Միտսին կը խմէին, կը գինովնային, կը վիճէին, կը կուէին: Պոտլէր կը տառապէր անքնութենէ, ջիզերը հանդարտեցնելու համար կը գործածէր թմրեցուցիչներ: Իր երիտասարդութեան ախտը կրկին երեւան կու գայ: Մորթին վրայ կը յայտնուին կասկածելի կարմրութիւններ:

Սակայն, Ժանն Տիւվալի ներկայութիւնը անտանելի կը դառնայ, մասնաւոր, որ հետաւոր կղզիէ մը ժամանած է երիտասարդ սեւամորթ մը, որ իրր թէ ազնկան եղբայրն է: Մոյլ, գինեմոլ եւ ամբարտաւան երիտասարդ մը, որ կ'ուզէ օգտուիլ բանաստեղծին ցասկէն: Միտկ ապաւէնը մայրն է: Պոտլէր կը զբէ մօրը, անկէ խնդրելով որ կրկին կողք-կողքի ապրին հին երջանիկ օրերը: Քարտին կը խոստանայ Եարլին Հոնֆրէլօրի տունը եւ գալ ապրիլ Փարիզ, սղուն հետ:

Այդ օրերուն է, որ Պոտլէր կ'ստնէ զարմանալի եւ տարօրինակ որոշում մը:



իր թեկնածութիւնը կը դնէ Փրանսական Ակատէմի, Լըաոտէրի աթոռին համար: Անկեղծ բարեկամներ կը խորտեն որ ետ քաշէ իր թեկնածութեան դիմումը: Ար-Փըրէտ տը Վիլնի, որ շատ դժուարու-թեամբ յաջողած էր մտնել անմահներու շարքին, կ'ըլլայ իր միակ պաշտպանը: Գուէարկութեան արդիւնքը սրտչ է ար-դէն. այս դտարին բանաստեղծին փո-խարէն՝ Ակատէմին կը նախընտրէ ան-տաղանդ զըշակ մը:

Միւս կողմէ, պարտատէրերու հայա-ծանքը կը շարունակուի մոլեգնորէն: Կեանքը կը դառնայ անտանելի: Կը ստիպ-ւի Փոյի զործերուն թարգմանութեան իրաւունքները ծախել շնչին գումարի մը փոխարէն՝ 2000 Փրանքի: Միակ գո-հունակութիւնը, որ կ'ունենայ կու դայ անդլիական «Ափէքէրը» թերթին: Հոն երիտասարդ բանաստեղծ Ավիւպը-մի ստորագրութեամբ լայս կը տեսնէ իսնդավառ յօդուած մը, ուր Պոտլէր կը նկատուի նոր բանաստեղծութեան լու-տագոյն ներկայացուցիչը: Վիքթոր Հիւ-կո իր հեռուար աբորավայրէն կը զրկէ նամակ մը. «Իուէ արուեստի երկինքը կ'սծուէ անդրիփիւեան ճառագայթով մը. դուէ կը տեղծուէ մար արտուս մը»:

1864-ին, Պոտլէր կը հեռանայ իր սիրած դժոխքէն, Փարիզէն: Իր բարե-կամներէն մէկը, Սթէվէնս, զինքը կը հրաւիրէ Պելիէքա, դասախօսութիւննե-րու շարք մը առաւ Պրիւքսէլի Արուեստ-ներու Քլիւպին մէջ: Պոտլէր կը իսն-դավառուի: Վերջապէս ճակատագիրը իր առջեւ կը բանայ սեւ վարագոյրը, ցոյց տալով իրեն յաջողութիւն եւ հա-րըստութիւն: Կը մտադրէ Պրիւքսէլէն ետք մեկնել ուրիշ քաղաքներ եւ ուրիշ երկիրներ, շարունակելու համար իր դա-սախօսութիւնները եւ դառնալու հան-րածանօթ:

Մայիս երկուքին տեղի կ'ունենայ իր առաջին դասախօսութիւնը: Ենթեմ է՝ նկարիչ Իօսէն Տըլտքերուս: Առաջին ճա-խողութիւն: Հսկայ օրահին մէջ, հազիւ քսան ստուերներ զինքը կ'ունկնդրէին, միտքերնին մէջ որոճալով ուրիշ բաներ:

Երկրորդ դասախօսութեան ներկայ էին նոյնքան ունկնդիրներ, որոնք մէկիկ-մէ-կիկ դուրս սահեցան: Երրորդ դասախ-օսութեան ներկայ էին դոնապանը եւ կազ-մակերպիչը: Հոս կանգ կ'առնէ Պոտլէրի դասախօսի ասպարէզը: Իր յոգնութեան համար կը ստանայ դոնապանին ձեռքով պահարան մը, որուն մէջ կար 100 Փը-րանք, փոխանակ խոստացուած 300 Փը-րանքին: Երկու տարի ետք, Ալէքսանդր Տիւմայի դասախօսութիւններուն առնն, նոյն սրահին մէջ առեղ նետելիք տեղ չկար:

Պոտլէր կը բորբոքէ եւ կը լեցուի կատաղի ատելութեամբ մը Պելիէքայի եւ պելիէքացիներու դէմ: Եւ զիրք մը կը սկսի պահարակելու համար այս ճիւ-քապաշտ եւ աննաշակ ազգը:

Բայց ինչ որ զարմանալի է, չի լքեք այդ երկիրը, հակառակ մօրը ազալանք-ներուն, որ նամակ նամակի վրայ զրկե-լով քովը կը կանչէ գժբախտ տղան: Ինչ-պէ՞ս մեկնել Փարիզ, երբ հոն տասնեակ մը տարտատէրներ դարանակալ կը սպա-սեն իրենց գոհին:

Փուլէ Մալասի ինք ալ խոյս առած է Ֆրանսայէն: Մանկացած է եւ պէտք ունի դրամի: Պոտլէր իրեն կը պարտի մեծ դումարներ: Բանաստեղծը կը վաղէ մօրը քով եւ կարեւոր դումար մը դան-ձելով կը վերադառնայ Պրիւքսէլ, իր բորեկամը փրկելու համար նեղ կացու-թենէն: Յետոյ յոյս ունի որ պիտի գտնէ լաւ հրատարակիչ մը իր ամբողջական գործերուն, բայց այդ հազուագիւտ թըռ-չունը անգտանելի կը մնայ:

Պրիւքսէլի մթնոլորտը անշնչելի դառնալով՝ Պոտլէր կ'որոշէ քանի մը օր անցընել Նամիւր, ուր զինքը կը հրաւի-րէ իր լաւ բարեկամներէն Խոփս: Կը սի-րէ այս քաղաքը: Մարտ 1866-ին, երբ կ'այցելէր Սէն Լու եկեղեցին, կաթուա-ծը զինքը պետին կը տապալէ: Քանի մը օր ետք՝ կը սկսին յայտնուիլ անդամա-լուծութեան առաջին նշանները: Մարտ-նին ալ կողմը եւ լեզուն կը բռնուին: Պոտլէր այլեւս վերջացած է իր արուես-տադէտ: Մայրը կը հասնի անմիջապէս

ևս զինք փոխադրել կու տայ Փարիզ, տորթոր Տիւմայի քլինիքը:

Վեց ամիս կը տեւէ հոգեվարքը, մինչեւ 31 Օգոստոս 1867, երբ առաւօտեան ժամը 11-ին, կը փակէ աչքերը եւ կ'աւանդէ տառապակոծ հոգին, ստանալէ ետք եկեղեցական վերջին խորհուրդները, եւ հաշտուած այն Աստուծոյն հետ, որուն հանճարեղ եւ «անիծեալ» զուականերէն մէկը եղաւ: Սեպտեմբեր 2-ին, Թաղմանական պաշտօն կը կատարուի Սուրբ Հոնորէ եկեղեցիին մէջ, ուրկէ վաթսուներեւ շափ յուղարկուորներ կ'ընկերակցին իր զաւաղին, մինչեւ Մոնփարնասի գերեզմանատունը:

Իր յուղարկուորութիւնն ուլ անցաւ ձախող, իր կեանքին պէս: Ամառ ըլլալով, փարիզցիներէն շատեր կը զտնուէին օգտփոխութեան վայրերը: Արդէն, նոյնիսկ իր զաւաղին առջեւ հակառակորդները տեղի չէին տուած, եւ Թերթերը Թափած էին իրենց մաղձը հէք բանաստեղծին դիակին վրայ: Միայն Լուի Վէ՛օյօն վեր առած էր Պուլէրի տաղանդը: Վաթսուներեւ օտ տնձեր կը քալէին զաւաղին ետեւէն, իրենց զբոսնքը արբելով: Կային Վերլէնը, Նատարը, Լըմէթը, Պանվիլը, Վէ՛օյօն ... Փոթորիկը պայթեցաւ գերեզմանատան մուտքին: Անձերը մօտալուս էր: Պանվիլ արտասանեց խնամուած դամբանական մը, որոտումներով ընդհատուած: Ամէն մարդ կը մտահոգուէր իր գլխարկով եւ հագուստով: Դամբանականը չվերջացած, պեղատարափը սկսաւ եւ ցրուեց ներկաները, մնացին մտերիմները: Մեռելաթաղները սկսան անապարանօք հող նետել մութ փոսին մէջ:

Այսպէս հողին յանձնուեցաւ ճակատագրէն հաշտուած, մահուան ու տառապանքի երգիչը: Եւ, ո՛վ հեգնանք, իր

յաւիտենականութեան զրացին եղաւ զօրավար Օփիքը:

Մայրը վախճանեցաւ չորս տարի ետք եւ Թաղուեցաւ իր զուակին քով: Իսկ Ժանն Տիւվալը քանի մը տարի ուլ քաղքէնց իր ողորդական կեանքը: Նատար կը պատմէ, թէ անոր հանդիպած է իրեկուս մը, 1870-ին: Հաշմանդամ էր սեւ Վեմիսը եւ անթացուպերով կը քալէր մայթի մը վրայ: անցորդներէն ողորմութիւն խնդրելով:

Հետագային Պաուլըի Բարեկամները անուն միութիւնը յուշարձան մը կանգնել տուաւ նոյն գերեզմանատան արեւելեան պատին քով: Բարէ հակայ հրեշտակ մը իր Թեւեթով կը պաշտպանէ բանաստեղծին քարացած մարմինը: Մինչդեռ հողիներուն մէջ կ'երգեն սրտառուչ տողերը:

«Ո՛վ մտն, ծե՛ր մաւապետ, ժամամա՛կն  
Է, վերցնե՛մք խարխսը,  
«Այս երկիրը անձարայթ կը պատմաւտ,  
մեկնի՛մք, ո՛վ մտն:  
«Եթէ երկիմքն ու երկիրը տեւ դառնամ  
մեկանի պէս,  
«Մեր սրտերը, որ լաւ կը ճամշնաւ,  
լսցու՛ն եմ ճառագայթներով:

«Լեցուր բաժակները քոյնով,  
որպէսզի կագդուրուինք.  
«Մեմք կ'ըղձանք, – այնքան այս կրակը  
կ'այրէ մեր ուղեղը –  
«Ուրախի խորը անդունդին, դժոխք  
կամ դրախտ, ինչ փոյթ,  
«Խորը անձառօքիմ, նորուքիմ  
որոնելու ետմար»:

Ե. Զ.

Յաբորդի  
ՊՈՏԼԷՐԻ ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ՆԵՐԱՇԽԱՐՀԸ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ



ԼՈՒԻՃԻ ՓԻՐԱՆՏԷԼԸ

Գ.

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԲԱՆՔ Է  
ԱՐՈՒՆԵՍՏԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾԱԾ ՊԱՏԲԱՆՔԸ  
ՄԻԱԿ ՄՆԱՅՈՒՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է

*Փոփոխական անձնատրուիթեանց լարելիթոս մը, ուր մարդը ինքզինք չի ճանչնար, տեւաբար փոփոխութեան վիճակի մէջ է, յարաբերիչ չի կրնար, ժամանակաւոր է, իրական չէ, դիմակաւոր է, չի կրնար ինքզինք իրականացնել, ուրեմն... ո՛վ իրական է, ո՛վ յաւիտենական է, է այն ինչ որ է անփոփոխի ձեւով, մնայում, մնայում... Երեւակայականը, արուեստի ստեղծագործումն է, որ աւելի մնայում է, աւելի իրական է, քան իրականութիւնը: Ահա երկրորդը փրանսէիան հաստատումներէն, որուն ցուցահանումը թատերական բեմէն, ահագին ազմուկ ու չփոթ ստալացոյց, «Վեց անձնաւորութեանց» ներկայացման տեսն:*

«ՎԵՑ ԱՆՁՆԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՈՐՈՆՔ ՀԵՂԻՆԱԿ ՄԸ ԿԸ ՓՆՏՈՒՆ»

*Վեց անձնատրուիթեանց, հայրը, մայրը, առաջին ամուսնութենէն ծնած տղան, մօրը երկրորդ ամուսնութենէն ծնած աղջիկ մը, փոքր մանչը, փոքր աղջիկը, կը փնտռեն հեղինակ մը, որ իրենց ստամբ ներկայացնէ, չե-*

զինակ մը առաջացուցած է զիրենք, սակայն կէս ձգած է, չէ դբած իրենց կեանքը, չէ ներկայացուցած իրենց անձնաւորութիւնը:

Այսպէս կիսատ, չեն կրնար մնալ. կան ու չկան. կ'ուզեն ըլլալ:

Կը գիմեն բեմադրիչի մը, կը խնդրեն որ լսէ զիրենք, ու հեղինակին կէս ձգած զործը լրացնէ, կեանքի կոչէ զիրենք, եւ ներկայացնէ այնպէս, ինչպէս որ են:

Բեմադրիչը կը համաձայնի պզտիկ սէնսորիօ մը պատրաստել տալ, եւ թոյլ տալ որ անձնաւորութիւնները ինքզինքնին ներկայացնեն իր դերասաններուն, եւ իրեն, բեմադրիչին, որպէսզի անոնք ալ հետազային կարենան հասարակութեան ներկայացնել:

Անձնաւորութեանց պատմութիւնը եւ արտաքին աբնամը կը կայանայ անոր մէջ, որ հայրը լքած է իր ընտանիքը, իր կինը սուած է ուրիշին, աղան դիւղ զրկած է, հոն մեծցած է՝ հօրմէ ու մօրմէ հետու: Ապա, մազնիսի նման քաշուած իր կնոջ նոր ընտանիքէն, յաճախ եկած է անոր նոր զաւակներուն վրայ դուրգուբալու, հեռուէ հեռու. մանուսնդ աղկան:

Հետազային, կնոջ ընտանիքը փոխադրուած է ուրիշ քաղաք՝ երկար ժամանակ կորսնցուցած է աչքէ:

Տարիներ ետք, դերձակուհիի մը խանութին ետեւի սենեակին մէջ, սր կը դործածուի աւելի հասութեանը նըպատակներու, հայրը, աղկայ մը հետ ժամադրութիւն ունենալ կարծելով, անդիտակցարար, իր կնոջ աղկան հետ է որ ժամադրութիւն ունի: Կինը, պատահարք վրայ հասնելով, կը ճշայ ի տես պատահելիքին: Հայրը կ'անդրադառնայ. զիրենք ետ, իր տունը կը տանի, բոլոր զաւակներսփ:

Հիմա, բեմին վրայ, իւրաքանչիւրը անձնաւորութիւններէն, դիտարարար հայրն ու իր կնոջ աղկիկը, կ'ուզեն իրենց ապրած տուած վերապրիլ, ցոյց տալ դերասաններուն, բեմադրիչին: Մէկ կողմէ կը խաղան, պատմելու համար ղէպերը, խաղացած ժամանակ, քանի որ իրենք դերասաններ չեն, այլ անձնաւորութիւններն են, կրկին կը վերապրին: Դերասանները երբ կը փորձեն վերարտադրել ղէպերը, անձնաւորութիւնները կը միջամտեն, կը դժգոհին, ծիծաղելի կը զտնեն ներկայացուածը, անտանելի. որովհետեւ, կ'ըսեն, իրենք են կեանքը, իսկ ստոնք՝ կը նմանեցնեն միայն:

Ներկայացուածը, այսինքն իրական ապրումներու հորովումը, կը հասնի հոն, որ փոքր տղան, անձնաւորութեանց պատմածին նման, պատմումի ընթացքին, բեմին ետին անձնասպան կ'ըլլայ:

Այս գործը հինգ հարիւր անգամ թարգմանուած է: Նոր քեմա մը չէ անձնաւորութեանց քեման, անձնաւորութիւններ, որոնք կ'ուզեն ապրիլ իրենք իրենց հա-

մար, որոնք կը պարտադրեն ինքզինքնին հեղինակին, որ զիրենք ստեղծագործողն է: Կը պարտադրեն ա՛յն աստիճան, որ հեղինակը կը սկսի հպատակիլ իրենց: Այս հաստատումը յաճախ կատարուած է: «Էթօմէնի կրօնաւէ», «Փէր Կօրիօ», «Մատամ Պալարի», դրեթէ ոչինչ կը պարտին իրենց հեղինակներուն: Նոյնը պատահած է նաև Փիրանտէլլոյի: Երկար տարիներ ունեցած է յաճախանքը անձնաւորութեանց, որոնք կեանքի դալ կը պահանջեն: Որոնց այդ պահանջն խուսափիլ չի կրնար ինք, պարտաւոր է դասաւորել զանոնք, խմբել առաժի մը շուրջ, որ իրենց յատուկ տուածը պիտի ըլլայ: Իրմէ, հեղինակն ետք բեժադրիչը պիտի փորձէ, ի զուր, պարտադրել ճշմարտանման կացութիւններ, լաւ կատուցուած պատմութիւն մը, իրար ազուցող դէպքեր, եւ այլն: Կեանքը կախում չունի ճշմարտանմանէն, կ'արձամարձէ ամէն ճշմարտանմանութեան պահանջ, կեանքը մեմէ է որ կը բացատրենք եւ հետագային, անցնելէն ետք: Իր եղած ժամանակ, անկատակ, ապսիլուտ ձեւովը կայ ան: Եւ «Վեց անձնաւորութիւններ»ը սեւա, կ'ուզեն ապրիլ իրենց կեանքը: Արուեստի ճամբով կենդանանալու տուածն է այս:

Մարդը մահկանացու է, իսկ անձնաւորութիւնը ամուտ է: Զինք ստեղծագործող հեղինակը պիտի մեռնի, իր ստեղծագործած տիպարը երբեք պիտի չմեռնի:

Միև կողմէ, անձնաւորութիւնը ունի առուելութիւն մը անմին վրայ, իր ճշմարտութիւնները փոփոխական չեն, վերջնական են, ի՛րն են, եւ աւելին՝ տեսանելի են բոլորին համար: Եւ վերջապէս անձնաւորութիւնը մտայուն է, կայուն է, փոփոխելի չէ անմիմ նման ամէն օր, ամէն ժամ:

ՀԱՅՐԸ.— Անձնաւորութիւն մը, պարո՛ն, միշտ կը բնայ հարցնել մարդու մը, թէ ո՞վ է ան: Անձնաւորութիւն մը իրապէս ունի օտփական կեանք մը, նշուած մասնաւոր յատկութիւններով. միշտ ալ որոշ մէկն է ան: Մինչ մարդ մը... կրնայ ոչ ոք ըլլալ:

ՏՆՕՐԻՆԸ.— Քիչ կը մնայ որ ըսէք, թէ դուք աւելի իրական էք եւ աւելի ճշմարիտ քան ես:

ՀԱՅՐԸ.— Օհ, անշուշտ, անկասկած:

ՏՆՕՐԻՆԸ.— Աւելի իրական, քան ե՞ս:

ՀԱՅՐԸ.— Բնականաբար, քանի որ ձեր իրականութիւնը մէկ օրէն միւսը կրնայ փոխուիլ, կը փոխուի:

ՏՆՕՐԻՆԸ.— Գիտենք որ կրնայ փոխուիլ, կը փոփոխուի անդադար: Ընդհանուրին ճակատապէրն է ատիկա:

ՀԱՅՐԸ.— Այ մերը, պարո՛ն: Ահա տարբերութիւնը:

Մենք չենք փոխուիլ, մենք չենք կրնար փոխուիլ, զառնայ ուրիշ մը: Մենք այն ենք, ինչ որ ենք, ընդմիշտ, անփոփոխութեամբ:

ՀԱՅՐԸ.— Երբ մարդ բախտ ունի անձնաւորութիւն ծնելու, թատերական հերոս մը, ամբողջովին ապրող, կեն-

զանի, կրնայ ինդալ մահուան վրայ: Անմահ է այլևս: Ինուսթիւնը կ'օգտագործէ մարդկային երեւակայութիւնը, աւելի բարձր մակարդակի մը վրայ շարունակելու համար իր ստեղծագործական աշխատանքը»:

Այս աւելի բարձր մակարդակը, արուեստի մակարդակն է: Կեանքը նուազ իրական է, քան արուեստը: Կեանք մը երբեք չէ եւ չի կրնար ըլլալ բացարձակ ստեղծագործութիւն մը: Կեանքը ստրուկն է իրար յաշտողոյ պատրանքներու, միշտ ենթակայ դէպքերու հակադրումին, ճնշումին: Մինչ արուեստը, ինքն իր մէջ իրականութիւն մըն է, վեր է, գուրս է ժամանակաւորէն եւ պատահականէն, առանց արդիւնքներու, առանց այլ նպատակի, քան ինքն իսկ, որ ամբողջական է ու մնայուն:

Այս ձեւով, սրեմն, Թատրոնը կը դառնայ աւելի իրական, քան կեանքը: Մտածողութեան սահմանին վրայ կեանքն ու Թատրոնը կը դառնան փոխանակելի, իրար կըրնան փոխարինել, իրարու հետ կը նոյնանան: Կը նոյնանան այնքան, որ հանդիսատեսները պիտի ժողանան, թէ ո՛ւր է որ կը խաղցուի տոմը, բեմի՞ն վրայ, թէ սրահին մէջ: Փիբանտէլլոյի այս փիէսի օրիմանլիքէն իր թեք-նիքին մէջ կը կայանայ: Եւ ինք առաջինն է այդ թեքնիքը դործածողը, իրմէ հոգ զինք կրկնողներ շատ եղան, ինք կը մնայ անփոխարինելի վարպետը, Թատրոնի եւ սրահի իրականութեանց իրար միաձուլումին, միախառնումին, որ կը շփոթեցնէ հանդիսատեսը, ճի՛շդ է, կրնայ եւ ջղաբանացնել, անհասկնալի թուիլ, բայց որ լաւագոյնս կը ցուցահանէ արուեստի իրականութիւնը, կեանքի դիմակաւոր ըլլալը:

Թատրակը նուազ մարդկային է, քան օրինակի համար շնագուցնել անոնք որոնք մերկ եկնք, սակայն Փիբանտէլլոյի դործածած միջոցները հանդիսատեսներ աւելի սերտօրէն մասնակից կը դարձնեն բեմին, արուեստին, արուեստի ստեղծագործութեան:

Եւ եթէ իր ներկայացուցած անձնաւորութիւնները այնքան ալ ուշադրաւ չեն, անմոռանալի անձնաւորութիւններ չեն, ինչպէս յաճախ ամբաստանած են Փիբանտէլլոյի քննադատները, կը մոռնան անոնք որ ճիշդ այդպէս ալ պէտք էր ըլլար: Փիբանտէլլո չէ կոտորցած անմոռանալի անձնաւորութիւն մը այս փիէսին մէջ, որովհետեւ այդ պարագային մենք պիտի տարուէինք իր անձնաւորութեամբ, մինչ իր նիւթն է մեզ տանիլ արուեստի ստեղծագործութեան ըմբռնողութեան, եւ զգացնել՝ թէ երեւակայականը կրնայ ճշմարտանման ըլլալ, սակայն աւելի ճշմարիտ ըլլալ, քան իրականը: Զգացնել նաեւ, թէ մարդկային ողորդութիւնը կը կայանայ ամէն մէկուն պատի մը զարնուելուն մէջ, անհասկացողութեան պատը, անհասկնալի մնալու դատապարտութիւնը, հակառակ ըստք ճիգերուն, ըստք բացատրութեանց: Դէպքերու արտաքին բացատրու-

Թիւններով մարդոց մասին կազմուած կարծիքը կ'ընէ աշնակ'ս, որ անոնք կրնան թուիլ դատապարտելի հրէշներ, մինչ կրնայ ըլլալ որ մարդկային էակներ են պարզապէս: Ինչպէս որ տուրակներ են: Եթէ անոնց մէջ դրուած չըլլան պատճառները, կրնգուն չեն կրնար մնալ: Մարդիկ ալ ինզճ արարածներ են, որոնք ծիծաղելի կը դառնան ու նաեւ արամեցնող, ողբերգական անկասկած, իրենց յաւիտենական ճիշդին մէջ բացատրելու ինքզինքնին, դառնալու մէկը, ապրող մարդ մը, երբ միակ ապրողը եւ իրականը երեւակայական անձնաւորութիւնն է:

Տոսմը, ըստ Փիբանտէլլոյի, անձնաւորութեան դոյութեան իմաստն իսկ է, անհրաժեշտութիւնը իր զոյութեան համար, (Թատերական անձնաւորութեան մասին է): Ինչո՞ւ թողուլ իրական անձը, եւ երթալ թատերական անձնաւորութեան: Որովհետեւ իրականութիւն ըստուծը կոսկածելի է: Քանի որ, մենք, ներքնապէս տեսական շարժման մէջ, տեսարար փոփոխուող, ներքին մթին աշխարհներով հարուստ ըլլալով հանդերձ, միմիայն երեւոյթ եմք ուրիշներուն համար, եւ ստիպուած ենք, կամայ թէ ակամայ, անշարժանալու որոշ ձեւի մը մէջ. երեւնալու, կամ ըլլալու աշնակ'ս, ինչպէս շուրջինները մեզ կը տեսնեն, կամ կը սպասեն որ ըլլանք. կը նշանակէ մարդկային բընութեան մէջ իսկ է թատրոնը, դերասանութիւնը. խամածիկներ ենք, դիմակաւոր խամածիկներ, տեսարար խաղարկութեան մէջ:

Ներքին ճամբատութիւնները, ցաւցնող, պատուող ապրումները ցոյց տալու համար, անհրաժեշտ է իրականութեան բոլոր երեւոյթները, բոլոր փոփոխականները ցոյց տալ: Ատիկա կարելի է ա՛յն աստեւ, երբ կը ստեղծագործես. ազատորէն թոյլ կու տաս որ տիպարները կեանքի գան, կեանք ատենն, սեփական, յատուկ, եւ ազատ դիմազծով ներկայանան, եւ ոչ թէ պարտադրուած դիմակով:

Փիբանտէլլոյի թատերակներուն ամէնէն յաջողներուն մէջ, տեսարար ներկայացում մը կայ, նոյն երեւոյթի զանազան բացատրութիւններով կառուցուող ճամբատութեանց ներկայացումը: Ունինք ուրեմն տեսարար թատրոնը թատրոնին մէջ: Ներկայացումը ներկայացման մէջ տալով է որ Փիբանտէլլո կը յաջողի պարտադրել մեզի անձնաւորութեան գաղափարը: Այդ ձեւով է որ մեր դիմաց կը ստեղծուի անձնաւորութիւնը, իր գուտ, միայն անձնաւորութիւն ձեւին տակ, եւ այդ պնով է որ թատրոնը կ'արտածորէ իր սեփական հիւթը, նիւթը. աշնակ'ս ինչպէս հեղինակին երեւակայութիւնը:

Ստեղծագործութեան մասնակից ըլլալով, հանդիսատեսը աւելի լուս, աւելի սուր կերպով կ'ըմբռնէ ստեղծագործուած ճամբատութիւնը:

Այդ ձեռով միայն լրիւ գիտակցել կարելի է մարդու ողբերգութեանն: Արդէն ողբերգութիւնը կը սկսի գիտակցութեան հետ:

Ինչպէս Շոփէնհաուզերի համար, այնպէս ալ Փիրանտէլլոյի համար շարիքը կը սկսի երբ կը գիտակցինք. եւ կ'աւելնայ, որքան որ աւելնայ մեր պայծառատեսութիւնը: Երբ մարդը, որ փոփոխական եւ բազմերես միայն կրնայ ըլլալ, կը ձգտի ինքզինք կառուցել որպէս կերպար, մէկ ամբողջութիւն, գո՛ւրս իրականութեան բազմերես ու փոփոխական ընթացքէն, կը սկսի իր տառապանքը: Երբ կը սկսի մտածել այդ մասին, կը գիտակցի այս ձգտումի իրականութեան հետ շահապատասխանելուն, կը գիտակցի իր անկարողութեան. որով՝ կը հասնի ճակատագրի անհեթեթութեան ըմբռնումին, ասպիւրտի գիտակցութեան:

Վիտակցութիւնը, որ կը զանազանէ մարդկային ճակատագիրը բոյսերու եւ կենդանիներու ճակատագրէն՝ ահա փրանսէզեան ողբերգութեան միակ աղբիւրը:

Փիրանտէլլո կ'ըսէ. «Մարդ մը կամ կիմ մը, իրենց կամ ուրիշներու ընթացքին բերումով կանգնած ցաւագին դրութեան մը, ցաւագին կացութեան մը մէջ, կացութիւն մը՝ որ ընկերային առումով անբնական է, կամ անիմաստ, անհեթեթ է երբ կ'ուզէք, կը մնան, կը շարունակեն մնալ այդ կացութեան մէջ (Տիկ. Փոնզա, Տիկ. Փլուրս եւ ուրիշներ) մինչեւ անգամ տէր կը կանգնին, կը պաշտպանեն այդ կացութիւնը. ինքզինքնին, իրենց դիմագիծը ըստ այնմ կը կազմաւորեն ուրիշներու առջեւ, մէկ խօսքով կ'ընդունին այդ անհեթեթ կացութիւնը, որքան ատեն որ չեն տեսներ զայն հայելիի մը մէջ տեսնելու նման: Կը տանին այդ մարտիրոսութիւնը, մինչեւ որ դիմակին տակ, շատ բուռն ըզզացում մը խորապէս վիրաւորուի: Այն ատեն կը պայթի ըմբաստութիւնը, որ կը պատէ դիմակը, եւ ամէն ինչ կը կոխկոտէ, կը փշրէ: Մարդկային ալիք մը կ'ազդէ անձնատարութիւնները. խանձնիկները որ անոնք էին, յանկարծ կը դառնան միտ ու սոկորէ կազմուած անձնատարութիւններ, եւ իրենց բերելն կը ժայթքեն խարանդ, այրող խօսքեր... Գտած են, դիմակին տակէն, սեփական դիմագիծը: Կայ ուրեմն մեքենայութիւն մը, դատարարութիւն մը, որ կը վերածէ ամէն մէկը ինքն իր խանձնիկին, եւ վերջապէս վերածնում կու գայ հարուածը, որ գիտակցութեան լռյաք բերելով, օդը կը համէ ամէն ինչ»: Հոս, եւ այսպէս կը սկսի ողբերգութիւնը: Մարդը յանկարծ բախումի մէջ կը մտնէ իրմէ դուրս եզուղ ուժերուն հետ (երբեմն իրմէ ներս դուրս ուժերու հետ), որոնց հպատակած էր մինչ այդ, մինչեւ ներքը պահուած շատ բուռն զգացումի մը խորապէս վիրաւորուիլը:

Ու յանկարծ կը գտնէ կեանքի անհեթեթութեան ճշմարտութիւնը. անորոշութեան միակ որոշակի բանը ըլ-



լալու ճշմարտութիւնը. կը զգայ՝ թէ առանձին է, նոյն-  
 քակ էրբ շրջապատուած է ուրիշներով. ներքին լուսնեան  
 մը մէջ կը պտտի, շնչիւնը, ինքնիքնէ զազունի մնացած  
 «ինքզինքը», կամ իր ներքին ետեքէն մին կամ միւսը. այդ  
 անձնատրուիւն վրայ նետուած նայուածք մը երեւան  
 կը բերէ ահաւոր մենութիւնը մարդուն, ահաւոր առանձ-  
 նութիւնը... Մարդուն փորձառութիւնն է առանձնութեան  
 ծանրութիւնը զգալը: Առանձնութիւն՝ նոյնիսկ շրջապատ-  
 ւած ուրիշներով: Ներքին, խոր առանձնութեան մասին է  
 հարցը:

«Ներքին լուսնեան մէջ որոշ բալէներու, հոգին կը  
 անբազաստի առհարակամ, ընթացիկ պատրանքներէն, ո-  
 րոնցմով շրջապատուած է, քաբարուած է: Այն ատեն,  
 մեր աչիքը կը դառնան աւելի սրտոտ, եւ կը տեսնենք  
 մենք զմեզ այնպէս՝ ինչպէս որ ենք կեանքին մէջ, եւ թէ  
 ինչ է կեանքը՝ ամապատային մերկութեամբ, անայի, ան-  
 հանգստացնող»:

«Այն ատեն, սարօրինակ տպաւորութիւն մը կը գը-  
 րաւէ մեր էութիւնը, կարծես կայծակի արագութեամբ,  
 այլ իրականութիւն մը կը յայտնարեալի մեզի, տարբեր  
 սովորաբար մեր զգացածէն: Իրականութիւն մը՝ որ կ'ապ-  
 րի մարդկային տեսութեանէն պահուած, մարդկային տրա-  
 մարանութեանէն դուրս»:

«Այդ յանկարծական ներքին լուսնեան մէջ, ծայրա-  
 յեղ սլանաւորութեամբ մը, առօրեայ կեանքի մեր ըն-  
 թացքը մեզի կ'երեւի զատարկուած ամէն ինչատէ, անտրա-  
 մարանական, աննպաստակ. եւ այդ իրականութիւնը, որ  
 տարբեր է, կը ներկայանայ իր դաժանութեան մէջ ահա-  
 ւոր, խորհրդաւոր, անկարելի. որովհետեւ մեր զգացում-  
 ներումն եւ պատկերացումներուն բոլոր երեւակայական  
 յարաբերութիւնները, որոնք սովորութեանց կողմէ, ա-  
 վորութեանց մէջ հիւսուած ու կառուցուած են, իր մէջ կը  
 փշրուին, կը խորտակուին»:

«Ներքին շարժումը կ'ընդլայնէ իր ալիքները, դուրս  
 կու գայ՝ գայն պարունակող մեր մարմնէն, կը դասանայ  
 թրթռացում մը, որ մեզ կը շրջապատէ, կը տանի: Տարօ-  
 ըրինակ շարժում մը, տեսակ մը անշարժացումը կեանքին  
 ու ժամանակին. կարծես այդ ներքին մեծ լուսնիւնը կը  
 խորանայ խորհրդաւորի անդունդներն ի վար»:

«Այն ատեն, յուսահատական միգրով մը կը փորձենք  
 վերագտնել իրերու բնականոն գիտակցութիւնը, եւ վերա-  
 հաստատել ամոնց հետ սովորական, հանգստացնող յարա-  
 բերութիւնները. վերստին զգալ մեր սպրիւն, այնպէս՝  
 ինչպէս Քիչ առաջ, մեր կեանքի սովորական կշռոյթով»:  
 «Մակայն այլեւ շենք կրնար հուստով ընծայել այդ

բնականոն գիտակցութեան, այդ վերամիադարձում մտածումներուն, կեանքի այդ ընտանի զգայնութեան: Գիտեմք այլևս, թէ այդ բոլորը մեր կողմէ ընդունուած սուտ մըն է, որպէսզի կարենանք ապրիլ: Գիտեմք՝ թէ այդ ուստիմ տակ ուրիշ բան մը կայ, որուն վրայ մարդս կրնայ հակիլ ինքզինքը մահուան, կամ խելագարման վտանգիմ ենթարկելով միայն»:

«Բուպէի մը պայծառաստեութիւնն էր, որուն տպաւորութիւնը, սակայն, մեր մէջ կ'երկարի. գլխապառչտ մը կը մնայ դեռ, որ կը հակադրուի այլևս ունայն կայունութեանը հետ իրերուն՝ յաւակնուտ ու թշուառ այդ երեւոյթիմ»:

«Կեանքը փոքրացած է, պզուիկ բան մըն է իր երեւոյթներուն մէջ. կը թռի մեզի, թէ իրականութեան ոչ մէկ գիծ կայ իր մէջ, թէ՛ պատրանքներու շրջապատյա մը կը դառնայ... Այլ ինչպէս յարգել զայն, նուազագոյն կարեւորութիւնը անգամ ընծայել իրեն...» (Ուեօ Նէստուեօ է Սանթոմիլիա, էջ 215):

Լարիւրիմքուէն ելքի նամբայ շկայ. կամ մահը, կամ խելագարութիւնը վերջ կու տան առանձնութեան այդ խելագարեցնող առապականքին: Երկուքն ալ, եթէ մեր կամքով չէ որ առաջացած են, մեր գտած ու դործադրած լուծումները չեն, որով՝ աւելորդ է զանոնք լուծում մը համարելը, երբ ինքնարեւաբար կու գան, արդէն մարդ անհատը չկայ, էականը ըլլալ ու լուծում մը գտնելուն մէջ կը կտրանայ:

Հողկէ՛ տնձնասպանութեան յանձնարարը, Հէմինգուէյի մը, կամ այլոց մօտ (Հետադային, անհեթեթի ապրումին աւելի արմատացումին հետ), ինչպէս նաեւ Փիլիպինոսի թատերակներուն մէջ. եւ կամ խենթութիւնը, այս անգամ գիտակցարար որդեգրուած, ընդունուած ինքնութիւնը, որ միակ լուծումը կը մնայ յարիւրինթոսէն գուրս փախչելու: Խենթը կրնայ քարանալ, դառնալ կայուն, խենթերու աշխարհին կը ներուին բաներ, որոնք խելացիներու աշխարհին մէջ ներելի չեն: Ժամանակը կանչ կ'անէ իրենց համար, կրնայ ետ երթալ նոյնիսկ: Եւ աւելին, շրջապատող մարդիկը, բոլորն ալ, կը տեղաւորուին ինքնութիւն յատուկ, եւ այդ չափանիշերով շինուած աշխարհի մը մէջ, եւ կը ներառուին ամբողջովին խաղին մէջ, որ խենթերու կառուցածն է ու խաղցածը:

Այդ իրողութիւնը կը բերէ իրենց ազատագրում մը ընկերային դիմակներէն: Անշուշտ, իրենք եւս դիմակ մը կը կրեն. իրենց մտաշխարհի, Հիւանդադին մտաշխարհի կառուցած խաղին ու անձնաւորութեան դիմակը, ստիպան ուրիշներուն յարմարելու, եւ ուրիշներուն ուզածին նման

երևանալու մեր ընկերային դիմակը չէ ասիկա, այլ սեփական է :

Ատոր համար է որ մարդիկ կը սարսափին խենթերէն. որովհետև անոնք մեր բոլոր կառուցումները խախտած են, իրենց խաբխախն մէջ իսկ : Մեր բոլոր արամաբանութիւնները պայթեցուցած են, որով՝ մեր բոլոր դիմակները կրնան պատռել, ու... ընկերային կեանքը դարձրնել անկարելի :

Իսկ իրե՞նք... : Ինչքա՞ն եղջանիկ են... : Կը կառուցեն իրենց շէնքը, ատանց արամաբանութեան կաշկանդումներուն, կը կառուցեն միայն իրենց յատուկ եղող արամաբանութեամբ մը, փետուրի նման թիթեւ արամաբանութիւն մը... : Շարժուն, լարժուն... : Այսօր այսպէս, վաղը այնպէս... : Ո՞վ պիտէ ինչպէս... :

Ուրեմն, լուծում մըն է, լարիւքինթոսէն դուրս գալու, սեփական անձնաւորութիւնը ապրելու համար լուծում մըն է խենթութիւնը, երբ սակայն գիտակցօրէն ընդունուի :

Փիրանտելլոյի Հանրի Զորարդին նիւթն է ասիկա :

Բ. Փ.

(Շար. 3)



## «ԲԱԳԻՆ»-Ի 1967-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

### ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆ

Հեղինակ	ԵՌՐԱԳԻՐ	ԹԻԻ
Ա. ԵՐԿԱԹ	Ներշնչում	1
» »	Միջերկրական	1
» »	Մահերգ Եղևարդ Պոյանեսնի համար	5
» »	Տաղ գիշերական	7
» »	Անյիշատակ	7
» »	Երազի պէս	9
» »	Ահ, դուն միայն	9
» »	Ստուերովն իր ստեղծիչ	9
» »	Այս պահուն	11
» »	Ինչ որ կու տամ	11
» »	Երբ ազբիւրճերը կ'երգէին	11
ՇԱՀՊԱՆ	Կապույտ երազ	1
»	Աղուար սրտեր	7
»	Հեֆիաք մը ազուար	7
»	Ամէն	8
»	Աշուգական	8
»	Անունդ	9
Լ. ԳԱՐՄԷՆ	Վայրկեանի մը համար գէշ	1
» »	Հարցապնդում	1
» »	Փշրուած երազը	1
» »	Իզձ	1
Ա. ՍԵՒԱՆ	Աշխարհներու երգը	2
» »	» »	3
» »	» »	11
» »	» »	12
Բ. ԹՕՓԱԼԵԱՆ	Մարդ մը	2
Հ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	Ողջոյնը տանես	2
» »	Կիզուող առօրեայ	2
» »	Ա՛խ, թէ լինէր	2
» »	Ոռնետներ	7
» »	Շարմաղ աղջիկն ու տղան	8
» »	Գու չմոռացար	9
» »	Տումեր	10
» »	Քանեակներ	10
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ	Արարատի՞ն	2
» »	Նրգ գոյութեան	7

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
ԵՒ. ՊՕՅԱՃԵԱՆ	ՄԼՈՒՅԸ	3
> >	ԾՆՆՊԱՍԿ	5
> >	ԿՍԱՊՅՈՒ ՔԵՐՔՈՒՄԸ	5
> >	ԱՀՈՒՆԻ ՆԱԿԵՂՅԱՆ ՄԵՂԵՂԻ	5
Փ. ՃԵՐԱՆՆԵԱՆ	ԸՆՔԵՐԳՈՒՆ	3
> >	ԿԻ ԽԱՐԳՆԵՍ	3
> >	ՀՏՈՒՄՆԱԿՆԵՐ	8
> >	ՏԱՆԵԼՆ ԵՐԲԱՆ ԵՐ ԿՐՈՒՄ	9
Թ. ԳԱՌՈՒՆԵ	ԴՈՒՅԻ ՎԱՊԸ	3
> >	ԴՈՒՄԱՆ ՄԵՂ ՃԻՆ	7
> >	ՍՓՈՒՄԱՆ	8
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	ԱՌԱՅԻՆ ՄԵՂԻՆ	4
Ե. ԶԱՐԻՆԵ	11 - Մ...Ի յԻՂՈՒՄԱԿԻՆ	4
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	ԵՂԵՐԵՂ	4
> >	ՄՈՒՄՈՒՆ	6
> >	ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՐԱԿՆԵՐ	11
Ա. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ	ՍԵՐ	4
> >	ԽՄ ՄԱՆԵՐ ՄԱՆՈՒՄ ԵՐԿՈՒ ԽԱՆԳԻՍՏՈՒՄ	4
Ա. ՊՈՒՍՓԱՆԻ	ԱՅՍՍԿԱՆ ԱՆԳՈՒ ՔԱՆԱՍՏԵՂԸ ՄԸ ՄԵՐ ՄԵՂԵՆ	5
Ա. ԳԱՌՈՒՆԵ	ԿԵՂԸ ՎԱՆՈՒՄԱՆ	6
> >	ՄԻ ԱՆՈՒՄԻՆ	6
> >	ԱՅՍ ԺՈՒՅԻՆ ԵՐԲԱՆ	6
> >	ՄԻ ԱՊՅԻԿ ԻՅՈՒ	6
ՕՐԱՔԱՐ	ՏՈՒՄԱՍՏԱՍԿԱՆ ԳԵՂՈՆ յԱՊԱԳՈՒ	
	ՆՈՒՄԱՆԱՐ ԳՐԱՊԱՅ	6
ԱՐՄԱՆՏ	ՈՂՅԱՆ ՔԵՂ, ԵՐԿԻՆԻ	7
>	ԱՆԻՍՈՒ ՔԱՐԸ	7
>	ՓՈՒՄԱՆԵՂԻՆ ԼՈՒՆԻՆ	8
>	ՆՈՒՄԱՆԱՅԵՐ	8
ԱՐՇԻ	ԽՄ ԽԱՐՈՒ ԿՈՒ ԿԵՆ	7
>	ԵՐԱՊԱՆԻՔԻ ՔԱՅԻՆԱՎ	12
Ս. ԲԵՆՈՒՆԻՆ	ԶԵՄ ՔՈՂԻՆ ԵՐ ԽԵՄԱՆԱՍ	7
> >	ՀԻՄԱՆՆԵՐ ԱՊՅԻՆ	8
ՀԱՅ-ԳԱԼ	ԱՆՊԱՆԻՅԻ	7
Մ. ԱՐՓԻ	ՍԵՆ ԱՅԵՐԻՅ ՄԵՂ	7
Ս. ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ	ԽՈՒՄ ԺՈՒՄԱՆԱՅԵՐ	7
Գ. ԳԵՂԱԿ	ԸՂՄԱՅԻՐ	7
Ժ. ՅԱԿՈՒՆԵԱՆ	ՕՏԱՐ ԶԻՄԻՆ	10
Վ. ԳԵՂՈՒՆԵԱՆ	ՎԵՐԵՂԻՆ ԻՊՈՒ	10
Շ. ՊՈՏԼԵՐ	ԱՀՈՒՆ ԵՐԵՂ	12
> >	ՕՐԽԵՐԵՂ	12
> >	ԱՎԱՔԱՐԱՍ	12
> >	ԳԻՆԻՆ	12

ԱՐՁԱԿ

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	Թիվ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Մենքիկը	1
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Սարերու Ասլանը	1
>	>	2
>	>	3
>	>	6
>	>	7
>	>	8
>	>	9
>	>	10
>	>	11
>	>	12
Գ. ԱՔԵԼԵԱՆ	Ի Հայաստան	1
Ի. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ	22 ամիս բանտում	1
>	>	2
>	>	3
Ա. ԱՐՓԻՆԷ	Ապրելու, տեսելու կամք	2
>	Հարցում ու պատասխան	10
Ա. ՍԵՒՈՒՄԵԱՆ	Զարկերը	6
>	Ձեռքեր, ժպիտներ	7
>	Պարտեզ	11
Ն. ՊԱՐԹԵՆԵԱՆ	Լու, տառնապետ Պզրի	3
Ն. ՊԷՇԻԿՅԱՆ	Լուստեսը եւ յոռեսեսը	4
>	Փարիզահայ անտիպ գրողներ	8
Շ. ՄԱԻԻՍԱԳԱԼԵԱՆ	Խոստացայ կատարելի իր կամքը	4
Ն. ՓԱԹԱՆԵԱՆ	Ոչ, սուտ եմ այդ բոլորը	4
Ա. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	«Յս կ'ապրիմ»	4
Գ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆ	Բանտարկիւնները	4
Պ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ	Մօրուքը	4
Լ. ԳԱՐՄԷՆ	Լեբան շուքը	6
>	>	7
>	>	8
>	>	9
Կ. ՄԵՀԵԱՆ	Երբ այնքան մօտ էր իր երազին	6
Բ. ԵՂԻՍԵԱՆ	Մագաղաթը	6
>	Խաչքերդի սազմանները	10
Գ. ԱՅԵՄԵԱՆ	Ինչպէս գտեմ սա բաները	7
Զ. ՈՐՔՈՒՆԻ	Մտածումներ	7
>	>	10
>	>	11
Հ. ԶԱՐԳՍԻՐԵԱՆ	Ժամանակ եւ խորհուրդ իւր	8
ՇԱՀԱՆԳՈՒԽՅՏ	Անիծեալը	8
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Մեռնելու առաջ	9
Ք. ՓՈՍՏԱՅԵԱՆ	Կրկնակը	9
Ժ. ՂԱՐԻՊ	Փիքանդի	9

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
ՌԻԳԱ ՈՐԲԵՐԵԱՆ	Նեամֆի եւ մահուան միջեւ	10
Ա. ԲԱԲԱՅԵԱՆ	Մայր իմ, որքան կը սիրեմ քեզ	10
Ա. ՀԱՅՎԱՋ	Օրհնութիւն	11
Գ. ԹՈՐՈՍԵԱՆ	Աւետարանի մնացորդացը	11
»	»	12
Շ. ՓԱՓԱՋԵԱՆ	Փռագը	12

ԻՄԱՑԱԿԱՆ ԵԱՐԺՈՒՄ

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ	Լեւոն Մանփանեան մարդը	1
»	Գրականութեան ու գրագէտներու կաշկանդումները սովորական կարգերուն տակ	2
»	»	3
»	»	4
»	«Այլուող Այգեստաններ»	4
»	Եղ. Պոյանեան արձակագիրը	5
»	Գրականութեան ու գրագէտներու կաշկանդումները սովորական կարգերուն տակ	6
»	»	7
»	Լուիսի ֆիլոսոֆիոս	10
»	»	11
»	»	12
Յ. ԳԵՂԱՐՔԻ	Լ. Գարսեմ բանաստեղծը	1
»	Բողոքն ու նաեւ հեզմոզ Պոյանեանը	5
Վ. ՕՇԱԿԱՆ	Լեւոն Գարսեմի ամկարելի որոնումը	1
»	Գրական արդի հոսանքներ	4
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Այս ամառ	1
»	Եղ. Պոյանեան բանաստեղծը	5
»	Եօթն անգամ եօթանասուն առտել մէկ	7
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ	Հայագիտութեան հարցը սփիւռքի մէջ	1
»	»	2
»	»	3
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ	Միլագրային արդի գրականութիւն	1
»	»	2
»	»	3
»	Եղ. Պոյանեան	5
»	Իրականութեան այլափոխութիւնը	
»	արուեստի մէջ	6
»	Շարլ Պուլեր	12
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	«Ժողովրդների բարեկամութիւնը»...	
»	բոլոր վրայ	1
»	»	

Հեղինակ	Խորագիր	Թիտ
1. ՄԿՐՏՋԵԱՆ	Պողոս Սնապետի «Ես այդ շունն եմ» գիրքը	3
»	Բանաստեղծի եսը եւ ժամանակի շունը	6
»	»	7
»	»	8
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Խորհրդածույթի՝ «Ֆնտադատութեան մասին	3
»	Կ. Սասունիի «Սարերու Ապանը»	4
»	Սիրելի Եղուայդ	5
ՀԱՄԱՍՏԵՂ	Իմ խօսքը	3
Ե. ՄԱՐԳԱՐԵԱՆ	Համահայկական Համատեղը	3
Տ. ՈՍԿՈՒՆԻ	Գաղափարապաշտ բանաստեղծը	5
»	Ֆրանց Քաֆկա	8
»	Անտրե Մօրուա	11
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Գրական արձագանց	5
»	«Հոգ»ը	5
Շ. ՄԻՍԱԿԵԱՆ	Անա գիրք մը	5
Ն. ՊԵՇԿՅԱՆԵԱՆ	Եղ. Պոյանեան	5
Մ. ԻՇԵԱՆ	Եղ. Պոյանեան	5
Ժ. ԱԹԱՐԵԱՆ	Միայն հոգի՞ շինուած էմք մեք	5
ԱՐՄԻՆԷ	«Սէր եւ վիշտ»	5
Ե. ԵՐԿԱԹ	Բանաստեղծի մտքը	5
Բ. ԹԱՇԵԱՆ	Թիւրք ու քերիկ	6
»	Գրական մանրագ	11
Ա. Ա.	Եղ. Պոյանեան	6
ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ	Յապաղած նամակ՝ Եղուարդի հոգիին	5
Շ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Բարսեղ Կանաչեանի երաժշտական գաբը	8
ԱՆԱՀԻՏ ՏԻԿԻԿԵԱՆ	Բարսեղ Կանաչեան	3
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՍ ՊԻՍՏՈՒՆՈՎԱ	Մարդիկ եւ գոյներ	8
Ս. ՃԻՋՄԷՅԵԱՆ	Խոստովանութիւններ	8
Հ. Ե. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ	Իդուարդ Պոյանեան	8
ՄՈՒՍԱ ՓՐԷՆՍ	Հայկական լինելութիւն	9
Կ. ՄԵՀԵԱՆ	Թարգմանական գրականութեան շուրջ	9
Վ. ԿԵՈՐԳԵԱՆ	Մտածումներ եւ հասաչափի շիքեր	9
ՆԱԶԱՐԷԹ ՓԱԹԱՆԵԱՆ	Մուսա Փրենսի	10
»	«Հայկական լինելութեան հոգ»	10
ԵՐՈՒԱՆԻ ԵՐՈՒԱՆԻԵԱՆ	«Ծուռ մարդու ստուերը ու դիպ չի լինի»	10
Վ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ	«Փռզոցը»	12



**ՆՇՄԱՐՆԵՐ**

	<u>Թիի</u>
«Էսօր լաւ է կանց վուր էրեզ»	1
«Մեր կարծիքով»	1
«Որում մահը մեր ալ մահն է»	1
«Ամենայն անկեղծութեամբ եւ խստութեամբ»	1
Ամենօրեայ տառապանք	2
Յապաւուած հասուածներ	2
Եւ երկրորդը նման Սահմ	2
Ընդդէմ «Դազանային հաստարութեան»	2
«Մոսկուայի Հայ Մշակոյթի տան հարցը»	2
«Ոչ մի խմբագիր»	2
«Ասեմք եւ այն»	2
«Ձարկանքը իմն է»	2
Այրուզ վերքեր	4
Վերապատուելի մը եւ ուրիշ վերքեր	4
Կէս հպարտութիւն եւ կէս ոգրերգութիւն	4
Ձեռագիրներուն եւ խախտած վարքի մը մասին	4
Հովան թերածը	7
Արդար ընդվզում մը	7
Մեծ բանաստեղծներ եւ ոչ մեծ բանաստեղծներ	7
«Հայոց մայրեր, վայոց մայրեր»	7
«Կը մեռնեմ, միայն թէ»	7
«Ռամկավարները հիմն չունէին, տնկիմն էին»	7
Խորագիր խորհրդանշան	9
«Դուստունին տուա»	9
«Դրութիւնն այնպէս է»	9
«Էլի հոգ»	11
Նայն կապակցութեամբ	11
«Ո տայր ինն»	11
Թագաւորը մերկ է	11

**ԱՐՈՒԵՍՏԻ ՔՐՈՆԻԿՆԵՐ**

<u>Հ Ն Պ Ի Ն Ա Ն Կ</u>		<u>Թիի</u>
Բ. ֆ.	Մարտէլ Մարտչի հետ	1
Բ. ֆ.	Սանդուկեան թատրախումբին ներկայացումները	2
Յ. Գ.	Բիւզանդ թովալեանի ցուցանանքներ	3
Բ. ֆ.	Շէյխսիբի «Ամառնային գիշերուայ երգ»ի ներկայացումը	6
Բ. ֆ.	«Փշածաղիկը»	6

## ԳՐԱԿԱՆ ՋՐՈՑՑՆԵՐ

	Թիի
	<u>Թիի</u>
«Ես այդ շունն եմ» (Պ. Սնապեան)	1
Արդի գրական ֆնմագատութեան ըմբռնումները	1
«Գ. Զօհրայ» (Ե. Պոյանեան)	4
Թատերական գրականութեան դժուարութիւնները	4
«Գիրք լինելութեան» (Վ. Իգլն հեշումեան)	6
Հայաստանի գրողներու 5-րդ համագումարը	6
«Թուղթ գաւակներու» (Ե. Պոյանեան)	6

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մշակութային լուրեր	1, 2, 6, 8, 9, 10, 11
--------------------	-----------------------

## ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Արարատ Այլագեան	8
Յարութիւն Կայենց	8
Բարսեղ Կոմայեան	8
Մտեփան Զօրեան	10

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Մեր հիւրերը	1
Լեւոն Գարսէն	1
Բիւզանդ թօփալեան	2
Նրկու մատուց	3
Անտիպ քերթուած մը Նզիշէ Զարեանցէն	4
Ալպարքոսը	5
Որ ունի յիշատակի ի գրականութիւն	5
Յուսողքիչ հեռանկարներ	7
Կնիդանի Հայաստանը, անհատականութեան բոցը	9
Հաւատարմութեան համար	9
Շարլ Պոսլէր	12
«Նոր վէպ»	12

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ՝ ՍՏԱՑԱՆՔ**

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՌՈՒՄՏԻԿԻՆԻ, Հ. Յ. Եսփուհեան, Պէյրուք, 1967  
ՏԻԳՐԻՍԻ ԱՓԻՆ, ԼԵՈՆ Շահոյեան, Պազտատ, 1967

**ՄԷԿ ՏԱՐՈՒԱՆ «ԲԱԳԻՆ» ԿԸ ՆՈՒԻՐԷ**

Օր. Սիմա Դաւիթեան, Պէյրուք  
Պրն. Տիմաս Հապրիկեանի, Ֆրանսա

**ԼՈՅՈՒ ՏԵՍՈՒ**

**Ա. ԱՐՓԻՆԷ**

**ԿԵԱՆՔԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

**(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)**

378 էջ, բարձրորակ թուղթ եւ խմամուտ սպաղրուքիւմ

Գին՝ 5 Լ. ՈՍԿԻ

ԱՄԵՐԻԿԱ՝ 3 ՏՈՂԱՐ

Ստամբուլու համար դիմել «ԲԱԳԻՆ»-ի եւ «ԱԶԳԱԿ»-ի ցրուիչներուն,  
կամ հետեւեալ հասցէին՝

A. APRAHAMIAN  
556 W. 188 St.  
New - York, N. Y. 10040  
U. S. A.

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՄԱՀՄԱՆ 7 ՏՈԼԱՐ  
ՀԱՏԱՎԱՀԱՌ 2Ղ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ --

**G. SASSOUNI**

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban